«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊՈԱԿ-Ի (ՔՈԼԵՋ) ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի (քոլեջ) (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ....4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ .5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....11
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....11
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....11
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....14
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....14
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....16
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....23
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....31
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....34
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....39
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....43
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....47
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....50
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....54
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....58
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....59
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....59
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....61
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....63
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....65
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....66
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....67

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը հիմնադրվել է 1989 թվականին՝ ՀՀ իշխանության որոշմամբ, գտնվում է Երևանում: Քոլեջը հանդիսանում է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մասնաճյուղ, որն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն: Քոլեջը մասնագիտական ծրագրերով կրթական գործունեության իրավունք ունի 2004թ.-ից՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով, 2007թ.-ից՝ նախնական (արհեստագործական) կրթական ծրագրով, իսկ 2017թ.-ից վավերացվել են երկու ծրագրերն էլ: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում[1]:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջն իրականացնում է միջին և նախնական մասնագիտական 14 կրթական ծրագիր՝ «Նախադպրոցական կրթություն», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Գրադարանային գործ», «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում», «Զբոսաշրջություն», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն», «Լուսանկարչական գործ», «Հագուստի մոդելավորման նախագծում», «Շուկայաբանություն», «Զարդակիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ», «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Հացաթխման արտադրության տեխնոլոգիա», «Պարտեզապուրակային գործ»: Վերջին տարիներին ներդրվել է «Շուկայաբանություն» մասնագիտությունը, 2025-2026 թթ.-ից նախատեսում են կրթություն կազմակերպել նոր մասնագիտական կրթական ծրագրերով՝ «Համակարգչային գրաֆիկա», «Մեղվաբուծություն» և «Ռոբոտաշինություն»:

Ներկայումս քոլեջում սովորում է 419 ուսանող: Վերջին հինգ տարիների ընթացքում շրջանավարտների հետագծի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 516 շրջանավարտներից 54-ը շարունակում են ուսումը բուհերում, 426-ը աշխատում են, որոնցից 261-ը՝ իրենց մասնագիտությամբ:

Ներկայումս քոլեջում աշխատում են 48 դասախոսներ, որոնցից 7-ը գործատուներ են: 2023թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ դասախոսական կազմի 46 անդամն ունեն բարձրագույն կրթություն, 2-ը՝ միջին մասնագիտական կրթություն, իսկ 1-ը ՀՀ ԳԱԱ հայցորդ է: 46 դասախոսներ աշխատում են հիմնական հաստիքով, 2-ը՝ համատեղող:

[1] «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԷՋ 5-6

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է՝ իր սահմանված առաքելությամբ:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում, միաժամանակ հաշվի է առել քոլեջի յուրօրինակ կապը կրթահամալիրի հետ:

Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջն ունի հստակ ձևակերպված առաքելություն և նպատակներ, որոնք համահունչ են ՈԱՇ-ի պահանջներին և ուղղված են մրցունակ ու ժամանակակից մասնագետների պատրաստմանը: Քոլեջը ստեղծել է ուսանողակենտրոն և նորարարական կրթական միջավայր, ինչը նպաստում է ստեղծարար աշխատանքի խթանմանը: Սակայն զարգացման ծրագրում գործողությունների և նպատակների միջև կապի, պատասխանատուների շրջանակի, բյուջեի և գնահատման մեխանիզմների բացակայությունը կարող են սահմանափակել ծրագրերի արդյունավետությունը:

Քոլեջում գործում են կոլեգիալ և միանձնյա կառավարման մարմիններ, ապահովված է կառավարման որոշ թափանցիկություն և համագործակցային մշակույթ, առկա են գործընթացների շարունակական բարելավման և նորարարական մոտեցումներ կիրառելու օրինակներ: Այնուամենայնիվ, ֆինանսական անկախության բացակայությունը, պլանավորման ու հաշվետվողականության համակարգերի և վերլուծական գործիքակազմի թերությունները սահմանափակում են կառավարման համակարգի լիարժեք արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում նկատելի է մի կողմից քոլեջում ազգային մշակույթի արժևորման և նորարարական մոտեցումների հենքով յուրօրինակ կրթական միջավայրի առկայությունը, մյուս կողմից համագործակցային աշխատանքային սկզբունքների ու առաջնորդությամբ, ինքնաբավ տնտեսությամբ կառավարման գործընթացների արտահայտվածությունը:

Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջը ներդրել է որակի ապահովման համակարգի զարգացման և որակի մշակույթի ձևավորման նախնական հիմքեր, սակայն այն դեռևս կայացման փուլում է: Տարբեր գործընթացների համար փաստաթղթային և կազմակերպչական հիմքերը առկա են, սակայն մեխանիզմները, գործիքակազմը և վերլուծական համակարգերը թերի են, ինչը սահմանափակում է որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը և օբյեկտիվությունը:

Վերոնշյալի արդյունքում փորձագիտական խումբը եզրակացնում է, որ քոլեջում իրականացվող բարելավումները կարևոր են և նպաստում են հետազոտահենք կառավարման գործընթացների զարգացմանը, սակայն այս ուղղությամբ նաև դեռևս անելիքներ կան:

Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջն իրականացնում է արդի պահանջներին համապատասխանող կրթական ծրագրեր՝ ներգրավելով նորարարական մեթոդներ, հեղինակային-այլընտրանքային մոտեցումներ և ուշադրություն դարձնելով ուսանողների պրակտիկ ու հետազոտական հմտությունների զարգացմանը: Քոլեջը գործում է ստեղծագործական ու ազգային մշակույթը միահյուսող միջավայրում՝ ապահովելով ուսուցման գործընթացի շարունակական բարելավումը: Այնուամենայնիվ, թերի տվյալների վերլուծությունը, տեսական գիտելիքի խորացման ու տեսական հետազոտությունների բացակայությունը, ինչպես

նաև գնահատման գործընթացի թափանցիկության և համակարգվածության պակասը որոշակի սահմանափակումներ են ստեղծում կրթական ծրագրերի կատարելագործման գործում:

Կարևոր է, որ քոլեջն ունի դասախոսական կազմի կառավարման ռազմավարական ծրագրեր, որոնք ներառում են որակավորման բարելավում, նորարարական մոտեցումների ներդրում և շարունակական վերապատրաստում: Դասախոսների ընտրությունը կատարվում է յուրօրինակ մրցույթի միջոցով, ինչը նպաստում է որակյալ մասնագետների ներգրավմանը և այդ իսկ փուլում նրանց զարգացմանը: Գործում են դասախոսների գնահատման մեխանիզմներ, խրախուսական ծրագրեր, կադրերի բանկ, առաջընթացի որոշ մեխանիզմներ, ինչը խթանում է մասնագիտական առաջընթացը: Միևնույն ժամանակ, դասավանդվող առարկաների և մասնագիտական որակավորումների անհամապատասխանության դեպքերը, ներքին ատեստացիայի փուլը հաղթահարած դասախոսների թվի սակավությունը դեռևս ուշադրության արժանացնելու կարիք ունեն: Վերապատրաստումների շարունակականությունն ու դասախոսական կազմի համալրման անհրաժեշտությունը կարևոր են կրթական ծրագրերի որակի բարելավման համար:

Քոլեջն ապահովում է ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ բազմազան ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, որոնք նպաստում են ուսանողների գործնական հմտությունների, ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը՝ միաժամանակ կարևորելով ուսումնական գործընթացում ուսանողի սխալվելու հնարավորությունն ու դրա հիման վրա ուսուցումը: Կրթահամալիրն ունի լաբորատորիաներ, արհեստանոցներ, մարզադահլիճներ, տեխնիկական սարքավորումներ և ներառական կրթական միջավայր: Կան թվայնացված գրադարան, փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ, ինչպես նաև ֆինանսական կառավարման թափանցիկություն: Սակայն որոշ ոլորտներում, օրինակ՝ ուսումնական լաբորատորիաների շարունակական զարգացման և գործընկեր կազմակերպությունների ռեսուրսների օգտագործման հարցում, դեռ կա բարելավման անհրաժեշտություն:

Վերոնշյալը նկատի ունենալով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

Քոլեջն ապահովում է ուսանողների ներգրավվածությունը հավաքագրման գործընթացում, կիրառում է ուսանողների կարիքների գնահատման մեխանիզմներ, կազմակերպում նախաքննական խորհրդատվություններ և պահպանում շրջանավարտների բազան: Տեղեկատվական արշավները սոցիալական մեդիայում նպաստում են հանրային իրազեկվածությանը, իսկ ուսանողական խորհրդի աշխատանքները կարող են զարգացնել ուսանողների իրավունքների պաշտպանությունը: Այնուամենայնիվ, ուսանողական կարիքների գնահատման գործընթացների վերահսկման բացակայությունը, օտար լեզուների ուսուցման հնարավորությունների սահմանափակ լինելը և կարիերայի պատասխանատուի աշխատանքի համակարգված վերլուծության բացակայությունը որոշակի խնդիրներ են, որոնք պահանջում են բարելավում:

Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջը հետազոտությունները և զարգացումը դիտարկում է որպես կրթական գործընթացի կարևոր մաս: Քոլեջում գործում են հետազոտական լաբորատորիաներ, որոնք նպաստում են ուսանողների և դասախոսների մասնագիտական զարգացմանը: Կիրառվում են հետազոտական ուսուցման բազմազան մոդելներ, որոնք ոչ միայն ապահովում են ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը, այլև նպաստում են խմբային աշխատանքների իրականացման հմտությունների և միջառարկայական ամուր կապերի ապահովմանը: Վերջին կոնտեքստում կարևոր նշանակություն ունի նաև դասավանդողների համագործակցային աշխատանքը: Ուսանողները և դասախոսները ակտիվ ներգրավվածություն ունեն հետազոտական աշխատանքներում, իսկ աշխատանքները հրապարակվում են բլոգներում և «Դպիր» էլեկտրոնային ամսագրում: Կարևորվում է, որ քոլեջը ուշադրություն է դարձնում գրագողության կանխարգելման հարցերին: Այնուամենայնիվ,

հետազոտական աշխատանքները որակապես առավել կարող են շահել, եթե համալրվեն տեսական ուսումնասիրություններով, գրականության վերլուծությամբ:

Քոլեջն ապահովում է թափանցիկ հաշվետվողականություն և տեղեկատվության հասանելիություն շահակիցների համար՝ կիրառելով երկաստիճան հաշվետվողականության համակարգ, թվային հարթակներ և հետադարձ կապի մեխանիզմներ: Այն խթանում է հանրային ներգրավվածությունը, ուսանողների կամավորական գործունեությունը և մշակութային ու սոցիալական նախաձեռնությունները: Այնուամենայնիվ, հաշվետվություններն անբավարար վերլուծական հիմք ունեն, իսկ պաշտոնական կայքէջը կարիք ունի տեղեկատվության ավելի հստակ դասակարգման՝ օգտատերերի համար տեղեկատվության հասանելիությունն ու արդյունավետությունն ապահովելու համար: Միաժամանակ քոլեջը կարող է ստանձնել հաստատությունում առկա լավ փորձը տարածողի սոցիալական պատասխանատվություն:

Քոլեջն իրականացնում է արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ ակտիվ նախաձեռնություններ՝ նպաստելով ուսանողների և դասախոսների հմտությունների զարգացմանը, ներգրավվելով միջազգային կրթական ծրագրերում և զարգացնելով հեղինակային ծրագրեր, որոնք հետաքրքրություն են առաջացնում միջազգային գործընկերների շրջանում: Այնուամենայնիվ, որոշակի գործընթացների ինստիտուցիոնալացում, փաստաթղթային ամրապնդում և նոր գործընկերների ներգրավում դեռևս անհրաժեշտ են՝ համագործակցությունների շարունակականությունն ապահովելու և միջազգայնացման մակարդակը բարձրացնելու համար:

Ելնելով վերոնշյալից կարելի է նշել, որ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջը ապահովում է տարբեր գործընթացների անընդհատ զարգացում, միաժամանակ կարևոր են այս ուղղությամբ աշխատանքների շարունակականությունն ու զարգացումը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Ազգային մշակույթի և նորարարության համադրությամբ ուսուցման միջավայր
2. Կորպորատիվ հեղինակության հիման վրա ձևավորված վարկանիշը
3. Համագործակցային և առաջնորդային կառավարումը
4. Դասախոսական կազմի մասնագիտական անընդհատ զարգացումը, ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում և ընտրության արդյունավետ մեխանիզմները
5. Կրթական ծրագրերի անընդհատ արդիականացումը և գործնական ուսուցումը
6. Ուսանողների ակտիվ ներգրավվածությունը ուսումնական և հետազոտական գործընթացում
7. Ուսումնական և հետազոտական գործընթացների ամուր կապ
8. Ինքնաբավ համակարգի կայացումը և գործընթացների թափանցիկությունը
9. Ժամանակակից լաբորատորիաները, թվայնացված գրադարանը և ուսումնական ռեսուրսները
10. Միջազգային համագործակցություն և ուսանողների միջազգային փորձ
11. Հեղինակային ծրագրերի իրագործումն ու դրանց հետաքրքրությունը միջազգային գործընկերների համար
12. Հասարակությանն առաջարկվող արժեքներ և գիտելիքների տարածում

Հաստատության թույլ կողմերն են.

1. Երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններում գործառույթների, պատասխանատվությունների, բյուջեի և գնահատման ցուցիչների բացակայությունը, ՌԾ գործունեության միջնաժամկետ և կարճաժամկետ պլանի բացակայությունը և ՌԾ պլան-ժամանակացույցի կատարողականի բացակայությունը
2. Ըստ ՌԾ նպատակների որոշ ստորաբաժանումների և/կամ պատասխանատուների բացակայությունը

3. Ֆինանսական անկախության բացակայությունը, ռազմավարական ծախսերի սահմանափակ հնարավորությունները և ֆինանսական մուտքերի ոչ բազմազան լինելը
4. Հավաքագրված տվյալների վերլուծության և կառավարչական որոշումների հիմնավորման մեխանիզմների թերությունները, համակողմանի տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմների թերի զարգացումը և փաստահեն տվյալների հիման վրա բարելավման պլանների բացակայությունը
5. Գործընթացների գնահատման և բարելավման գործիքակազմի անբավարար զարգացումը և արդյունքների գնահատման և հաշվետվողականության հստակ մեխանիզմների, կառուցակարգերի անկատարությունը
6. Որակի ապահովման քաղաքականության բացակայությունը և որակի ապահովման մշակույթի դեռևս ձևավորված չլինելը
7. ՊԻԳԲ շրջափուլի գործածության թերի լինելը և ոչ պարբերական գործընթացները
8. Տեսական գիտելիքի անկատարությունը
9. Միջազգային փորձի ուսումնասիրման թույլ արտացոլումը
10. Գործատուների հետ համագործակցության սահմանափակ շրջանակը և համագործակցությունների ինստիտուցիոնալացման պակասը:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1) Ապահովել ՌԾ մշտադիտարկման և գնահատման գործընթացի կազմակերպում՝ ներառելով պլանների մշակում և վերլուծությունների իրականացում:
2) Ապահովել շահակիցների ակտիվ ներգրավվածությունն ու նախաձեռնողականությունը իրենց վերաբերող կառավարչական գործընթացներում՝ նաև աշխատանքներ կատարելով նրանց լայն շրջանակի իրազեկվածության բարձրացման և տեսակետների արտահայտման ուղղությամբ:
3) Քայլեր ձեռնարկել ֆինանսական մուտքերի բազմազանեցման նպատակով՝ կիրառելով եղած հնարավորությունները և բացահայտելով նոր հնարավորություններ:
4) Բարելավել քոլեջի կառուցվածքը՝ հստակեցնելով ուղղաձիգ և հորիզոնական կապերը և արտահայտելով կապերը կրթահամալիրի հետ:
5) Զարգացնել ռազմավարական կառավարման մեխանիզմներն ու գործընթացները՝ ապահովելով երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումների և գնահատումների փոխկապակցվածություն, սահմանելով չափելի արդյունքներ և ցուցիչներ, հստակ պատասխանատվություններ և ռեսուրսային բաշխում:
6) Ապահովել հաշվետվողականության հստակ գործընթաց՝ հենված նաև աշխատանքի արդյունավետության գնահատման և վերլուծականության վրա:
7) Ապահովել քոլեջի գործընթացներին վերաբերող համակողմանի տվյալների հավաքագրման, հետազոտությունների, փաստահեն վերլուծությունների իրականացման գործընթաց և դրանց հենքով հիմնավորված կառավարչական որոշումների կայացում և բարեփոխումներ:
8) Վերանայել և հստակ ձևակերպել Քոլեջի որակի ապահովման կենտրոնի նպատակները, գործառույթները, ներգրավված մարմինների պատասխանատվության շրջանակը և գործողությունների համակարգը:
9) Բազմազանեցնել գնահատման գործիքակազմը՝ ներառելով հարցումներ, բենչմարքինգ, կլոր-սեղան քննարկումներ, ավարտական քննությունների արդյունքների վերլուծություն, ինքնագնահատում, SWOT վերլուծություն և այլն:
10) Արդիականացնել շահակիցների (ուսանողներ, շրջանավարտներ, ծնողներ, գործատուներ) կարիքների գնահատման մեխանիզմները՝ օգտագործելով տարբերակված հարցադրումներ և ապահովելով արձագանքման հետևողականություն:

11) Զարգացնել որակի ապահովման ուղղությամբ պատասխանատու անձանց գիտելիքներն ու հմտությունները՝ վերապատրաստումների և շարունակական ուսուցման միջոցով:
12) Հասանելի դարձնել որակի ապահովման տվյալներն ու վերլուծությունները ներքին և արտաքին շահակիցներին՝ ապահովելով թափանցիկություն և հաշվետվողականություն:
13) Մշակել որակի ապահովման գործողությունների պլան՝ համահունչ Քոլեջի ռազմավարական զարգացման ծրագրերին, ապահովելով պլանավորում, իրագործում, գնահատում և բարելավում (ՊԻԳԲ) փուլերի արդյունավետ վերահսկում:

Որակավորումների արժանահավատ շնորհում

14) Գործածել առավել հստակ մեխանիզմներ և մոտեցումներ՝ ուղղված տեսական գիտելիքների և տեսական վերլուծական տարրերի ապահովմանը:
15) Մշակել և ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման ընթացակարգ՝ հենված համակողմանի տվյալների համաքագրման և բազմակողմանի վերլուծությունների (այդ թվում՝ համեմատական վերլուծություն, հենանիշավորում) վրա, միաժամանակ գործատուների (ինստիտուցիոնալացված համագործակցություններով), արտաքին շահակիցների առավել լայն շրջանակի ներգրավմամբ:
16) Դասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները տարանջատել ըստ մասնագիտական կրթական ծրագրերի առանձնահատկությունների:
17) Ապահովել դասախոսական կազմի պարբերաբար գնահատման մեխանիզմների ու գործիքների արդյունավետության գնահատում և վերլուծություն:
18) Դասախոսական կազմի վերապատրաստումները պայմանավորեցնել ՄԿԾ-ների դասավանդման առաջնահերթ կարիքներով:
19) Գործուն քայլեր ձեռնարկել որոշ նեղ մասնագիտական ուղղություններով դասավանդողներ ներգրավելու ուղղությամբ:
20) Ավելացնել միջազգային և օտարալեզու գրականության հասանելիությունը, դիտարկել էլեկտրոնային գրքերի և միջազգային գիտական շտեմարանների հասանելիության ընդլայնման տարբերակը՝ ուղղված ուսանողների մասնագիտական զարգացման նոր հնարավորությունների ստեղծմանը:
21) Իրականացնել ուսանողների կողմից ապահովվող ֆինանսական հոսքերի վերլուծություն՝ ռեսուրսների օպտիմալ բաշխումն ապահովելու համար:
22) Մշակել լրացուցիչ ֆինանսավորման մոդելներ, օրինակ՝ կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ, համագործակցային ծրագրեր և գործատուների հետ պայմանագրային համագործակցություն:

Երկարաժամկետ զարգացում

23) Նպատակաուղղել ՈւԽ գործունեությունը նաև ուսանողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:
24) Կատարելագործել կարիերային նպաստող ծառայությունները, ներդնել շրջանավարտների հետադարձ կապի մշտադիտարկման համակարգ՝ նրանց զբաղվածության մակարդակի վերահսկման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր մոտեցումների մշակման նպատակով:
25) Նախաձեռնել համագործակցություն այլ քոլեջների ՈւԽ-ների հետ՝ փորձի փոխանակման, համատեղ միջոցառումների կազմակերպման և ուսանողական կյանքի բարելավման համար, միաժամանակ նպաստելով ուսանողների ավելի լայն սոցիալական ցանցի ձևավորմանը և մասնագիտական ու մշակութային փոխանակումներին:
26) Մշակել հստակ ռազմավարական պլան հետազոտական աշխատանքների զարգացման համար, ներդնել հետազոտական արդյունքների վերլուծության մեխանիզմներ, տվյալների

հավաքագրման և մշտադիտարկման գործիքներ՝ ապահովելով հետազոտական գործընթացների շարունակական կատարելագործումը:

27) Ամրապնդել հետազոտություններում գրականության վերլուծության և ակադեմիական աղբյուրների կիրառման մշակույթը՝ ապահովելով ուսանողների և դասախոսների համար հասանելի միջազգային գիտական բազաներ, գրադարանային ռեսուրսներ և գիտական հոդվածների որոնման գործիքներ:
28) Ստեղծել հարթակ (օրինակ՝ գիտաժողովներ, սեմինարներ, հանրային քննարկումներ)՝ հնարավորություն ընձեռելով ուսանողների և դասախոսների համար ներկայացնելու իրենց հետազոտական նախագծերը և ստանալու փորձագիտական կարծիք:
29) Վերանայել Քոլեջի ներքին հաշվետվողականության մեթոդաբանությունը՝ ընդգրկելով ամբողջ ուսումնական տարվա գործունեության վերլուծությունը, գնահատումը և բարելավման ուղիների նախանշումը հաշվետվություններում:
30) Քոլեջի պաշտոնական կայքէջի տեղեկատվությունը համակարգել ըստ ենթաբաժինների՝ բացառելով կրկնությունները, ոչ նպատակային հրապարակումները, ապահովել քոլեջի հաշվետվությունների հասանելիություն:
31) Ներդնել դասախոսների և ուսանողների՝ արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման գործընթացներում ներգրավվածության խթանման փաստաթղթավորված մեխանիզմներ:
32) Ապահովել համագործակցությունների իրավական հիմքեր, ստեղծել գործընթացները համակարգող մարմին, որը կզբաղվի միջազգային կապերի կառավարմամբ և փաստաթղթային ձևակերպումներով՝ ուղղված հաստատված համագործակցությունների շարունակականության երաշխիքների ամրապնդմանն ու միջազգային կապերի ուղղությամբ գործընթացների արդյունավետ կառավարմանը, համագործակցության նոր տիրույթների բացահայտմանը:
33) Ընդլայնել գործատուների հետ համագործակցությունների շրջանակը՝ առնվազն ըստ կրթական ծրագրերի արդյունքների, և առավել սերտ համագործակցություններ հաստատել՝ ուսումնական ծրագրերի արդիականացման և պրակտիկաների արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև դուալ ուսուցման մոդելի զարգացման նպատակով:
34) Կապեր հաստատել տեղական և միջազգային քոլեջների հետ՝ լավագույն փորձի փոխանակման և համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:
35) Ընդլայնել տեղական և միջազգային համագործակցությունները՝ ուղղված ռազմավարական նպատակների, այդ թվում՝ ռեսուրսների համալրմանն ու զարգացմանը:
36) Բարձրացնել քոլեջի միջազգային տեսանելիությունը՝ հրապարակումների և գործընկերային ցանցի ընդլայնմամբ:
37) Վերլուծությունների իրականացման հիմքով դիտարկել միջազգային ուսանողներ (այդ թվում՝ Սփյուռքից) ներգրավելու հնարավորությունները և քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ:

_____

Փորձագիտական խմբի ղեկավար

Արմենուհի Սարգսյան
Ապրիլի 10, 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[2] կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան՝** ֆիզմաթ գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար
2. **Մարինա Փոթիկյան՝** տնտեսագիտության թեկնածու, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի և ՀՀ ՆԳ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
3. **Քանաքարա Հայրապետյան՝** պատմական գիտությունների թեկնածու է, Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ,
4. **Ամալյա Ստեփանյան՝** Հայաստանի Եվրոպական համալսարանի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Լիանա Ալավերդյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 03.02.2024թ.-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո 02.04.2024թ.-ին «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 20.08.2024թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[3]:

Նախնական այց

11.12.2024թ.-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. դեկտեմբերի 17-19-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսերի[4] դիտարկում, և փաստաթղթերի[5] դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 06.03.2025թ.: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին: Այնուհետև ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[5] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հաստատության դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 08.04.2025թ.-ին:

Համակարգող
Լիանա Ալավերդյան

Ապրիլի 10, 2025թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի առաքելությունը ներկայացված է 2021-2025թթ. Զարգացման ծրագրում և 2021-2027թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ԶԾ կամ ՌԾ): ՌԾ-ն լայնածավալ փաստաթուղթ է, որը սահմանում է ռազմավարական ուղղությունները, մինչդեռ ԶԾ-ն ավելի կոնկրետ գործողությունների ծրագիր է, որը տրամադրում է միջոցառումներ՝ ռազմավարական նպատակների իրագործման համար: Քոլեջի առաքելությունն է՝ ազգային ու միջազգային փորձի վրա հիմնված մասնագիտական-կրթական ծրագրերի միջոցով պատրաստել միջին մասնագիտական որակավորումով համակողմանի զարգացած, աշխատաշուկայում մրցունակ, ժամանակի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ կադրեր՝ տնտեսության, արդյունաբերության ու տեղեկատվակական տեխնոլոգիաների ոլորտների համար, ապահովելով՝ ուսանողակենտրոն, համագործակցային բաց կրթական միջավայր՝ մշակված նորագույն և արդի մեթոդների ու դասընթացների կազմակերպմամբ: Հարկ է նշել, որ ԶԾ-ում նշվում է, որ քոլեջի գործունեության հիմքում դրվում են արժեհամակարգային հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են նորարարության սկզբունքը, որը ենթադրում է նորարական մոտեցումների կիրառում ուսումնական գործունեության ընթացքում: Փորձագիտական այցի և ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ այս գործընթացում ներգրավված են նաև ծնողական համայնքի ներկայացուցիչները: Քոլեջը կազմակերպում է միջին մասնագիտական կրթություն ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան: Քոլեջի ԶԾ-ով սահմանված են մի շարք հիմնական նպատակներ, որոնցից են մասնագիտական կրթական ծրագրով գիտելիքահենք կարողությունների և հմտությունների ձևավորում, զարգացում, աշխատաշուկայում մրցունակ կադրերի պատրաստում, կրթական բաց միջավայրի ստեղծում, մանկավարժական առաջավոր փորձի, կրթական գործի կազմակերպման որակապես նոր ձևերի ու մեթոդների ներդնում, և հեղինակային մանկավարժությունն ընտրած դասավանդողների պատրաստում ու վերապատրաստում: ԶԾ նպատակների իրականացման համար կազմվել է պլան-ժամանակացույց, որում նշված են գործողություններ և ժամկետներ: Սակայն, պլան-ժամանակացույցում բացակայում է պատասխանատուների կոնկրետ շրջանակը, ինչպես նաև որոշ գործողություններ չեն համապատասխանում նպատակներին: Բացի այդ, պլանում սահմանված չէ բյուջե, և բացակայում են գնահատման ցուցիչները: Հարկ է նշել, որ որոշ նպատակների ուղղությամբ արդեն իրականացվել են քայլեր, օրինակ՝ ռեսուրսների զարգացման, գրադարանի թվայնացման և ՈւԽ ձևավորման ուղղություններով:

Փորձագիտական այցի և ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ շահակիցները կարևորում են քոլեջում ձևավորված միջավայրը, որտեղ խրախուսվում է ստեղծարար աշխատանքը: Քոլեջում գործում են լաբորատորիաներ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին իրագործելու իրենց կարևոր մտահաղացումները: Ուսանողների համար միջավայրը գրավիչ է ոչ միայն ուսումնական գործընթացով պայմանավորված հնարավորությունների, այլև իրենց նախասիրությունների հիման վրա զարգացման լրացուցիչ հնարավորությունների առկայությամբ: Փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ քոլեջում ձևավորված է կրթական միջավայր, որը համատեղում է ազգային մշակույթի արժևորումը և նորարարական մոտեցումները:

Կրթահամալիրի տնօրենի 2023թ. հրամանի համաձայն, քոլեջի ներքին շահակիցներն են՝ քոլեջի դասավանդողները, ուսումնաօժանդակ կազմը, կրթահամալիրի մասնաճյուղերի

ղեկավարները, ուսումնական կենտրոնների և լաբորատորիաների ղեկավարները, վարչական և կառավարման խորհրդի անդամները, մասնաժողովի և մասնախմբերի անդամները, ինչպես նաև ուսանողները: Արտաքին շահակիցներն են՝ շրջանավարտները, աշխատաշուկայի ներկայացուցիչները, գործատուները, ծնողները, պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները, մասնագիտական ոլորտի մասնագետները և ներկայացուցիչները, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները և ԶԼՄ-ները:

Չնայած այն հանգամանքին, որ ԶԾ և ՌԾ մշակման ընթացքում կարիքների համակարգված վերլուծություն չի իրականացվել, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ շահակիցների կարիքները, որոնք բացահայտվել են քոլեջի կողմից իրականացված քննարկումների և հարցումների միջոցով, արտացոլված են ծրագրերում: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ նաև, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցներն ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները:

ԶԾ գնահատման հստակ մեխանիզմներ քոլեջում դեռևս առկա չեն: Քոլեջի հաշվետվությունները չեն համադրվում ԶԾ նպատակների հետ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը մրցակցային պայմաններում ձևավորել է իր առանձնահատկությունները, ինչը նպաստել է նրա վարկանիշի ձևավորմանը և կորպորատիվ հեղինակության ամրապնդմանը:

Խումբը նաև գնահատում է, որ քոլեջն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որը համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին և ուղղված է աշխատաշուկայում մրցունակ ու ժամանակի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մասնագետների պատրաստմանը: Ուսանողակենտրոն և համագործակցային կրթական միջավայրի ձևավորումը ապահովում է քոլեջի կայուն զարգացումը միջին մասնագիտական կրթության ոլորտում:

Նշվում է նաև, որ քոլեջի առաքելության և նպատակների մեջ ընդգրկված են նորարարական մոտեցումներ և շահակիցների ներգրավման սկզբունքներ, ինչը կարող է բարելավել կրթական գործընթացի արդյունավետությունը և խթանել համագործակցային մշակույթի ձևավորումը: Այնուամենայնիվ, խումբը նկատում է, որ շահակիցների կարիքների վերաբերյալ համապափակ վերլուծությունների բացակայությունը կարող է սահմանափակել ծրագրերի համապատասխանությունը նրանց ակնկալիքներին:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ քոլեջը իր զարգացման ծրագրի պլան-ժամանակացույցում հստակեցնի գործողությունների և նպատակների միջև կապը, սահմանի գնահատման մեխանիզմներ (ԳԱՑ), պատասխանատուների շրջանակ և բյուջե, որը քոլեջին հնարավորություն կտա անընդհատ դիտարկել ըստ ԶԾ նպատակների առաջընթացը և կնպաստի Ռազմավարական ծրագրի նպատակների արդյունավետ իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը յուրօրինակ դիրք և հեղինակություն է ձևավորել, մշակվել է քոլեջի զարգացման ՌԾ և պլան-ժամանակացույց, ինչպես նաև քոլեջի շահակիցները հիմնականում կիսում են ԶԾ-ով և ՌԾ-ով սահմանված նպատակները, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը համապատասխանում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ընթացիկ կառավարումն իրականացվում է կրթահամալիրի տնօրենի, Քոլեջի ղեկավարի, ինչպես նաև Կառավարման, Վարչական, Մանկավարժական խորհուրդների և Մասնաժողովի կողմից: Վարչական խորհուրդը կրթահամալիրի տնօրենի խորհրդատվական մարմին է, իսկ Մասնաժողովը՝ կրթահամալիրի մանկավարժական, ուսումնամեթոդական, հետազոտական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին: Կրթահամալիրի մասնախմբերի, ուսումնական կենտրոնների ղեկավարները ձևավորում են մասնաժողովը: Ըստ կրթահամալիրի կառուցվածքի՝ քոլեջը, լինելով Վարչական խորհրդի մաս, ուղղաձիգ կապով ենթակա է կրթահամալիրի տնօրենին, ինչը կառուցվածքի մակարդակով քոլեջի և կրթահամալիրի միջև միակ կապն է: Միևնույն ժամանակ, փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի բոլոր ստորաբաժանումները սերտ համագործակցում են թե՛ միմյանց հետ և թե՛ կրթահամալիրի բոլոր ստորաբաժանումների հետ:

Քոլեջում դեռևս սահմանված չէ Որակի ներքին ապահովման (ՈՆԱ) համար առանձին հաստիք: Տնօրենի հրահանգով այս գործառույթն իրականացվում է վեց հոգուց բաղկացած խմբի կողմից՝ տնօրենի ղեկավարությամբ: Արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքները համակարգում են այդ խմբի երկու անդամները: Մի շարք այլ գործառույթներ, ինչպիսիք են կարիերայի զարգացումը, կադրային և այլ հարցերը, իրականացվում են կրթահամալիրի համապատասխան ստորաբաժանումների և պատասխանատուների կողմից: Միևնույն ժամանակ, քոլեջը կարևորում է կարիերայի զարգացման և որակի ապահովման պատասխանատուների առանձին հաստիքների ներդրման անհրաժեշտությունը:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կառուցվածքում քոլեջը ենթակառուցվածք է, որի համար առկա է կազմակերպական կառուցվածք ենթակայության կապերով, հորիզոնական կապերը տեսանելի չեն: Միաժամանակ, քոլեջը ներկայացված է կրթահամալիրի կառուցվածքում միայն որպես Վարչական խորհրդի մաս: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի ստորաբաժանումների միջև գործում են ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական համագործակցային կապեր: Քոլեջի կազմում ներկայացվում է Մանկավարժական խորհուրդը, Ուսանողական խորհուրդը, գրասենյակը, լաբորատորաներն ու արհեստանոցները, ՄԶԿ-ն, Ուսումնաօժանդակ կազմը, 2-5 տարեկանների խնամքի և զարգացման ծառայությունը, բուժքույրը և հոգեբանը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ 2021-2027թթ. ՌԾ-ում, 2021-2025թթ.-ի ԶԾ-ում և 2021-2027թթ.-ի ՌԾ պլան-ժամանակացույցում ֆինանսական պլանավորումներ առկա չեն: Բացի այդ, քոլեջի ռազմավարական նպատակներին հասնելու և պլանավորված գործողությունների իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորում դեռևս չի իրականացվել, և առկա չեն հստակ հաշվարկներ:

Ֆինանսների բաշխումը քոլեջը իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա: 2023 թ. ֆինանսական հաշվետվության տվյալներով ծախսերի բաշխումը հետևյալն է՝ 77,5%-ը աշխատավարձ, 18,5%-ը ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, 4%-ը այլ ծախսեր: Փորձագիտական այցից պարզվեց, որ հետազոտական ծախսերի ներքո ներառվել են հարցումների իրականացման համար հարկ եղած ծախսերը, ինքնավերլուծության իրականացման համար վճարված հավելավճարները, այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են լինում տարբեր նախագծերի իրականացման համար և այլն:

Ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերի հիման վրա տրամադրվում են անհրաժեշտ միջոցներ: Չնայած տարեկան ֆինանսական պլաններում և ծախսերում չեն արտացոլվում նորոգման, տեխնիկական զինման կամ ռեսուրսների զարգացման ծախսերը, այնուամենայնիվ, փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում նման ներդրումներ իրականացվում են կրթահամալիրի բյուջեից և հիմնադրամից: Սակայն այդ ծախսերը չեն առանձնացվում և չեն հավաքագրվում որպես առանձին տվյալներ: Հարկ է նշել, որ քոլեջն ունի 2016 թվականին հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականություն: Կայքում հրապարակված են ֆինանսական պլանավորումները և հաշվետվությունները՝ եռամսյակային և տարեկան կտրվածքով, ինչպես նաև ներկայացված են աուդիտի արդյունքները:

Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է Քոլեջի և կրթահամալիրի կանոնակարգերով, Մանկավարժական խորհրդի աշխատակարգով, ԿԽ-ի աշխատակարգով և այլ փաստաթղթերով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռազմավարական ծրագրի (ՌԾ) իրականացման հետ կապված բազմաթիվ գործառույթներ կատարվում են քոլեջի տարբեր աշխատակիցների կողմից՝ տնօրենի հրամանով: Նման աշխատանքները վարձատրվում են լրավճարների տեսքով:

Դասախոսական, ուսանողական և ծնողական համակազմերը, ինչպես նաև գործատուները ընդգրկված են Կրթահամալիրի կառավարման խորհրդում, իսկ դասախոսական կազմը մասնաժողովում և մասնախմբերում: Կառավարման խորհրդի նիստերին մասնակցում է արհեստակցական կազմակերպության ղեկավարը, ինչը նպատակ ունի ապահովելու դասավանդողների և ուսանողների շահերի պաշտպանությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները և դասախոսները նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կարիքների վերհանման համար, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ վերհանված կարիքները լուծվում են մինչ Խորհուդ հասնելը: Միաժամանակ պարզվեց, որ Խորհուրդը գնահատում է կրթահամալիրի զարգացման ուղղությունները և կարևորում քոլեջի դերը, սակայն քոլեջի գործունեության արդյունավետության գնահատման համար հստակ մոտեցումներ դեռևս չեն սահմանվել և կիրառվել: Սակայն ԿԽ-ն հանդիսանում է քոլեջի ֆինանսավորման հիմնական աղբյուրներից մեկը՝ տրամադրելով անհրաժեշտ միջոցներ «Սեբաստացիներ» Կրթական հիմնադրամի և կրթահամալիրի բյուջեից: Տեսանելի են կայքէջում բոլոր արձանագրությունները ազատ հասանելիությամբ, ինչի արդյունքում շահակիցներիը հնարավորություն ունեն ծանոթանալ նաև նիստերի արդյունքներին, ինչպես նաև տարածել տեղեկատվությունն ու իրազեկել մյուս շահակիցներին դրանց մասին:

Փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ դասախոսները ակտիվորեն ներգրավված են մասնաժողովների և մասնախմբերի քննարկումներում, որոնք կրթական հարցերի քննարկման և կոլեգիալ կառավարման կարևոր օղակներ են հանդիսանում:

Ամիսը մեկ անգամ գումարվում է աշխատողների ժողով, որտեղ քննարկվում են տարբեր հարցեր: Միաժամանակ աշխատակիցները հնարավորություն ունեն նախապես առաջարկություններ ներկայացնելու օրակարգի վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզվեց, որ արհեստակցական կազմակերպությունը (ԱՐՀԿՈՄ) հաճախ ֆինանսավորում է դասախոսների՝ վերապատրաստումների մասնակցության ծախսերը:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով: Երկարաժամկետ պլանավորումն արտահայտվում է 2021-2027 թթ.-ի ՌԾ-ով և 2021-2025 թթ.-ի ԶԾ-ով: 2021-2027 թթ.-ի ՌԾ-ով սահմանված է քոլեջի առաքելությունը, 8 ուղղությունների համապատասխան նպատակներ և նպատակներն իրականացնելու խնդիրներ: Առկա է 2021-2027 թթ.-ի ՌԾ-ին համապատասխան պլան-ժամանակացույց: Պլան-ժամանակացույցում յուրաքանչյուր խնդրի համար սահմանված է 1 կամ մի քանի միջոցառում: Յուրաքանչյուր միջացառման համար սահմանվում է ժամկետի սկիզբ և ավարտ, սակայն հիմնականում որպես ժամկետներ նշվում են պարբերաբար կրկնվող

ժամանակահատվածներ, այսինքն գործողությունները պարբերաբար կրկնվող են, չեն նշվում պատասխանատուներ, արդյունքներ, գնահատման ցուցիչներ և ռեսուրսներ: 2021-2025 թթ.-ի ԶԾ-ում առանձնացված է որակյալ կրթության, ֆինանսատնտեսական գործունեության ուղղություններն ու հեղինակայինի շեշտադրումը, առկա է նաև SWOT վերլուծություն: Այս ուղղություններով նշվում են գործողություններ, սակայն առկա չեն ժամկետներ, պատասխանատուներ, ռեսուրսներ, արդյունքներ, ցուցիչներ: Հարկ է նշել, որ սա քոլեջի՝ ՌԾ-ի մշակման առաջին փորձն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերոնշյալ երեք փաստաթղթերը ունեն համահավասար նշանակություն:

Ստորաբաժանումների աշխատանքային պլաններ չունեն, առկա չեն ըստ պատասխանատուների պլանավորումներ: Սակայն հարկ է նշել, որ քոլեջի կայքում առկա են պլանավորումներ ուսումնական տարվա համար և պլանավորում ըստ օրերի, որոնք, մասնավորաբար, վերաբերում են կոնկրետ միջոցառումների կազմակերպման: Այստեղ ևս ըստ պատասխանատուների բաշխումներ առկա չեն: Փորձագիտական այցից պարզվեց, որ պատասխանատվությունները որոշակիանում են ներքին քննարկումների արդյունքում: Դասախոսներն ունեն աշխատանքային պլաններ, սակայն այդ պլանավորումների մեջ չի ընդգծվում ՌԾ հիմնախնդիրը: Միաժամանակ նշված պլաններում սահմանված արդյունքներ առկա չեն:

Սակայն հարկ է նշել, որ քոլեջը մշտապես տարբեր գործընթացներ է իրականացրել ՌԾ նպատակների ուղղություններով՝ անընդհատ կատարելագործել է ռեսուրսները, ուսումնական գործընթացը՝ նորարարական մոտեցումների գործածմամբ, ուսանողների համար լրացուցիչ կրթության հնարավորությունների, միջազգային համագործակցությունների, անձնակազմի մասնագիտական զարգացման ծրագրերի և այլ ուղղություններով:

ՄՈՒՀ-ում ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ առկա չէ: Չնայած կարիերայի ստորաբաժանումը կրթահամալիրի ենթակայությամբ է (առանձին քոլեջի ենթակայությամբ համապատասխան պատասխանատու առկա չէ), այնուամենայնիվ, իրականացնում է քոլեջի մասով գործառույթներ, սակայն այդ ուղղությամբ հաշվետվություններ չկան: Առկա են Գրադարանի ու Հաշվապահության ֆինանսական հաշվետվություններ, առկա են նաև կրթահամալիրի հաշվետվություններ, որ ներկայացրել են ԿԳՄՄՆ: Քոլեջի տնօրենի հաշվետվությունը հասանելի է միայն վերջին 2023-2024 ուսումնական տարվա համար:

Ըստ այդ հաշվետվության անդրադարձ է կատարված 2021, 2022, 2023 ուստարիների SWOT վերլուծություններին, իրականացված գործընթացներին, դասախոսների հաշվետվություններին: Հաշվետվությունը նաև ներառում է նոր նախատեսումներին ու նախաձեռնություններին անդրադարձ: Սակայն հարկ է նշել, որ հաշվետվությունը նկարագրական է, չի պարունակում տվյալներ, վերլուծություններ, ցուցանիշների համեմատություններ: Չի ներառում անդրադարձ ՌԾ-ին:

Հարկ է նշել, որ քոլեջի կառավարումն ունի առանձնահատկություններ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կրթահամալիրի մաս է կազմում և անբաժանելի կապերով է կապված: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում կառավարումն իրականացվում է առաջնորդությամբ կառավարման մոդելով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջի կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարման մոդելով, մինչդեռ հաշվետվողականության համակարգը դեռևս ամբողջությամբ չի ձևավորվել ներքևից վերև գործող սկզբունքով: Փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսները ներկայացվում են հաշվետվությունները բլոգում ամիսը մեկ անգամ: Հարկ է նշել, որ ստորաբաժանումների միջև գործառնական կապերը զարգացած են ոչ միայն քոլեջի ներսում, այլև ամբողջ կրթահամալիրում: Կառավարման մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ կառավարումն իրականացվում է առավելագույնս ինքնաբավ տնտեսության կառավարման սկզբունքով, որում քոլեջն ունի իր անփոխարինելի դերը թե՛ մարդկային, թե այլ ռեսուրսներով հանդերձ: Այդ ինքնաբավ համակարգում նույնիսկ հաստատության համար անհրաժեշտ գույքը պատրաստվում է տեղում՝

մինիմալ ֆինանսական միջոցի արտահոսքով՝ միայն նյութի ձեռքբերմամբ, իսկ արտադրությունը, ըստ անհրաժեշտ առանձնահատկությունների, պատրաստվում է հաստատությունում, ինչի համար խրախուսվում է և՛ ստեղծագործ միտքը, և՛ աշխատանքը: Այսպիսի նախադեպերը բազում են, օրինակ ֆիզիկայի լաբորատորիայի սարքը կարող է պատրաստվել այլ լաբորատորիայի կողմից, կազմակերպվող միջոցառման անհրաժեշտ էլեմենտները կարող են պատրաստվել տարբեր լաբորատորիաներում՝ համապատասխան գեղարվեստական ձևավորման մասնագիտական մոտեցումներով: Ընդ որում այսպիսի արտադրական գործընթացների մասնակիցներ են ինչպես կրթահամալիրի տարբեր տարիքային ուսումնառողներ, այնպես էլ դասախոսներ, ըստ անհրաժեշության՝ ներգրավելով արտաքին համապատասխան մասնագետի:

Կառավարման կարևոր մոտեցում է նաև արդյունավետության հենքով խրախուսումները: Մասնավորաբար, դասավանդողների և ուսանողների աշխատանքների լավագույն նախագծերը մասնաժողովի որոշմամբ արժանանում են անվանական և խրախուսական մրցանակների՝ ֆինանսական միջոցներով կամ պատվոգրերով:

Տարբեր ուղղություններով հարցումներ են իրականացվում, հարցումներ իրականացվում են ուսանողների և ՈԱԿ հանձնախմբի կողմից, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ չնայած առկա են այդ հարցումների հիման վրա քանակական որոշ վերլուծական տվյալներ, այնուամենայնիվ համընդգրկուն վերլուծության չեն ենթարկվում: Հետևաբար չեն ծառայել հիմք կառավարչական որոշումների կայացման համար, չնայած հիմնականում առանձին խնդիրներ ուղղակիորեն ներկայացվում են շահակիցների կողմից, որոնք անմիջական լուծում են ստանում, մասնավորաբար՝ ուսանողների կողմից իրականացված հարցումներով վեր հանված առանձին խնդիրներ: Բացի այդ, քոլեջը նշում է առանձին խնդիրներ, որոնց ուղղությամբ աշխատանքներ է իրականացնում, մասնավորաբար՝ ուսանողների հոսունության խնդիր, վերլուծական տվյալների հավաքման և մշակման ոչ կատարյալ մեխանիզմներ, մշտադիտարկման իրականացման կարողությունների պակաս, մասնագիտական կրթության ոչ բավարար միջազգայնացման գործընթացներ, արտաբյուջետային ֆինանսական հոսքերի, ոչ բավարար նյութական ռեսուրսներ:

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություն իրականացվում է տարբեր քննարկումների, «տարեկան հեղինակային մանկավարժության աշնանային հավաք»-ների ժամանակ: Սակայն ուսումնասիրություններից պարզվեց, որ արտաքին գործոնների հստակ ուսումնասիրություններ և վերլուծություններ առկա չեն: Առկա են հարցումներ գործատուների շրջանում, սակայն դրանք առանձնապես թույլ չեն տալիս արտաքին ազդող գործոնների ուսումնասիրություն իրականացնելու: Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար այլ մշակված գործիքակազմ քոլեջը դեռևս չունի:

Որակի կառավարման հիմնական ՊԻԳԲ սկզբունքը, դեռևս լիարժեք ներդրված չէ քոլեջում: Քոլեջը փորձ է կատարել բոլոր գործընթացներում ներդնելու ՊԻԳԲ սկզբունքները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում տարբեր գործընթացները գտնվում են տարբեր փուլերում, մասնավորապես փաստաթղթերը մշակվել և ներդրվել են, սակայն գնահատում և բարելավում չի իրականացվել: Ռազմավարական պլանավորման գործընթացը պլանավորման փուլում դեռևս թերություններ ունի, իսկ գնահատման մեխանիզմներ առկա չեն: Փորձագիտական այցից պարզվեց, որ ռեսուրսների համալրումը ըստ ՄԿԾ-ների իրականացվում է ՊԻԳԲ շրջափուլով, ինչպես նաև որոշ հարցաթերթիկներ, որոնք մշակվել, ներդրվել, գործածման արդյունքում գնահատվել և բարելավման են ենթարկվել:

Քոլեջը գործածում է էլեկտրոնային կառավարման համակարգ՝ բլոգների միջոցով: 2024-2025 ուսումնական տարվա սկզբին նախատեսվում է ներդնել տեղեկատվության կառավարման մեկ այլ՝ MOODLE համակարգը:

Քոլեջը ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ է դիտում դասավանդողների, ուսանողների հաշվետվությունները, անհատական նախագծերի

ամփոփումները, ուսանողների ուսումնական առաջադիմության ցուցանիշները, արտադրական ուսուցմամբ տարբեր միջոցառումները, ցուցահանդես-վաճառքները, մրցույթների մասնակցության արդյունքները, հանրային ներկայացումները, կլոր սեղանները, ստեղծագործական հավաքները, հարցումները:

Քոլեջում առկա են որոշ մեխանիզմների բարելավման նախադեպեր, մասնավորաբար՝ հարցումների անցկացման, տվյալների արագ հավաքագրման, անանուն և հեշտ գնահատումների համար ՄՈՒՀ-ը սկսել է կիրառել Google Forms, Onedrive, Outlook.com ներքին համակարգերը և այլն: Այնուամենայնիվ, քոլեջում բացակայում են տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և գնահատման գործընթացները, ինչպես նաև այդ մեխանիզմների արդյունավետության գնահատման գործիքակազմը:

Քոլեջի ենթակայքում տեղադրված են ՄԿԾ և առարկայական ծրագրերը, որակի կենտրոնի, ուսումնական լաբորատորիաների, արհեստանոցների, կենտրոնների, մասնախմբերի բլոգները, ուսանողների և դասավանդողների ուսումնական բլոգները, ուսումնական օրացույցը, «Դպիր» էլեկտրոնային ամսագիրը, անհրաժեշտ փաստաթղթեր: Քոլեջն իրականացնում է էլեկտրոնային մատենավարություն, բոլոր փաստաթղթերը պահվում են Onedrive պահոցում: Դասավանդողները, ուսանողները կիրառում են ուսումնական բլոգային Wordpress հարթակը, որտեղ արտացոլված է նրանց ողջ գործունեությունը: Որպես առցանց նիստերի, ժողովների, հանդիպումների հաղորդակցման հարթակ՝ կրթահամալիրը կիրառում է Teams հարթակը:

Քոլեջն ունի պաշտոնական կայք, ֆեյսբուքյան էջ, ինստագրամյան էջ, տելեգրամյան էջ, լինքդինյան էջ, դասավանդողների բլոգներ, ուսանողների բլոգներ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, միաժամանակ մասնավորապես քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում իրականացվում է, ապահովված է կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար: Քոլեջը նաև հարցումներ է անցկացրել՝ գնահատելու կայքի հրապարակումների որակը, կայքում կողմնորոշվելու մատչելիությունը և այլն: Արդյունքում պարզել են, որ այս ուղղություններով հիմնականում խնդիրներ չկան:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում գործում են թե՛ կոլեգիալ, թե՛ միանձնյա կառավարման մարմիններ, ընդ որում՝ կոլեգիալ կառավարման տեսանկյունից առկա են կայացած օղակներ: Ուսանողները, դասախոսները և գործատուները ներգրավված են կառավարման խորհուրդներում, սակայն նրանց նախաձեռնողականության պակասը կարող է սահմանափակել քոլեջի զարգացման հնարավորությունները, ինչպես նաև ազդեցություն ունենալ խնդիրների բացահայտման և դրանց լուծման գործընթացների արդյունավետության վրա: Խումբը կարևորում է, որ քոլեջում պարբերաբար անցկացվում են խորհրդակցություններ և քննարկումներ, սակայն գտնում է, որ որոշումների ընդունման գործընթացում շահակիցների կարիքների լիարժեք վերլուծությունը դեռևս բավարար չափով չի իրականացվում:

Միևնույն ժամանակ, խումբը դրական է գնահատում այն փաստը, որ քոլեջում կիրառվում է առաջնորդությամբ կառավարման մոդել, ինչպես նաև առկա են լրացուցիչ աշխատանքի համար լրավճարներ և լավագույն աշխատանքի խրախուսման մեխանիզմներ: Սրանք նպաստում են նվիրական աշխատանքի արժևորման միջավայրի և մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև ապահովում են կառավարման ավելի ընդգծված կոլեգիալություն: Վերջինիս զարգացումն առավել խթանում են ստորաբաժանումների միջև ձևավորված ամուր համագործակցային կապերը:

Փորձագիտական խումբը նշում է նաև, որ քոլեջը հանդիսանում է կրթահամալիրի արժեհամակարգային մոտեցումների և սկզբունքների հիման վրա ձևավորված բաղադրիչ: Բացի այդ, կարևոր դրական կողմերից է այն, որ քոլեջը կարող է օգտվել կրթահամալիրի ռեսուրսներից, իսկ կրթահամալիրը ծառայում է որպես յուրօրինակ ֆինանսական հենարան՝ ապահովելով նաև ռիսկերի կառավարելիություն:

Խումբը դրական է գնահատում նաև այն հանգամանքը, որ վերհանված ցանկացած խնդիր արժանանում է ուշադրության և ստանում համապատասխան լուծում, ինչը նպաստում է արդյունավետ կառավարման գործընթացների ապահովմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսական տեսանկյունից քոլեջի բյուջեն հիմնականում ապահովում է միայն աշխատավարձերի վճարումը, մինչդեռ մնացյալ ֆինանսական միջոցները սահմանափակ են և չեն բավարարում անհրաժեշտ ծախսերի, այդ թվում՝ ռազմավարական ծրագրերի իրականացման համար: Բացի այդ, հետազոտական գործունեության ծախսերի սահմանումը և դասակարգումը չափազանց ընդհանուր է, և չկա հստակություն դրանց ազդեցության գնահատման հարցում: Չնայած կրթահամալիրի բյուջեից կատարվում են ներդրումներ, դրանց վերաբերյալ համակարգված տվյալներ չեն հավաքագրվում և վերլուծություն չի իրականացվում, ինչը կարող է սահմանափակել արդյունավետ ֆինանսական պլանավորման և հնարավորությունները: Ֆինանսական անկախության ապահովման և ռազմավարական նպատակների համար համապատասխան ֆինասներ ապահովելու տեսանկյունից խիստ կարևոր է, որ քոլեջը կարողանա այլընտրանքային մուտքեր ապահովել, հատկապես որ առկա են հնարավորություններ: Սա հնարավորություն կստեղծի նաև երկարաժամկետ ֆինանսական պլանավորում իրականացնելու՝ հաշվարկելով ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը և ապա՝ պլանավորելով գործընթացների արդյունքում մուտքեր և անհրաժեշտ ֆինանսկան ծախսեր:

Քոլեջը հաջողությամբ ներմուծում է նորարարական կրթական մեթոդներ, ինքնաբավ արտադրական գործընթացներ և ուսումնական ռեսուրսների զարգացում: Նման մոտեցումները նպաստում են ուսումնական գործընթացի ինտեգրմանը արտադրական գործունեությանը, ինչը դրական է և կարող է այլընտրանքային մուտքերի ապահովման հնարավորություններ ստեղծել:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի կառուցվածքը և կրթահամալիրի կառուցվածքը լիարժեք չեն արտահայտում իրականում գործող համագործակցային կապերը: Մինչդեռ այդ համագործակցային կապերը բնորոշում են հաստատության առանձնահատկությունն, ու, բացի այդ, աշխատանքային արդյունավետության կարևոր հիմնաքարեր են:

Քոլեջը հիմնականում համալրված է ՌԾ նպատակների իրագործման համար անհրաժեշտ կոմպետենտ մասնագետներով և շարունակաբար աշխատում է դրանց կատարելագործման վրա: Միևնույն ժամանակ, հաստիքային որոշ պատասխանատուների բացը լրացվում է լրավճարով իրականացվող աշխատանքների կամ կրթահամալիրի մակարդակով համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս լուծել առկա խնդիրները, սակայն գործընթացների կայուն զարգացման ապահովման տեսանկյունից կարևոր է, որ ՌԾ նպատակներին համապատասխան հաստիքային պատասխանատուներ ներգրավվեն: Բացի այդ, փորձագիտական խումբը կարևորում է որակի ապահովման գործընթացների անկախության ապահովման անհրաժեշտությունը՝ որպես կայունության և արդյունավետության կարևոր պայման:

Անդրադառնալով հաշվետվողականության համակարգին՝ փորձագիտական խումբը նշում է, որ գնահատելի է քոլեջի կողմից ներդրված որոշակի գործող հաշվետվողականության համակարգը, սակայն գտնում է, որ այս ուղղությամբ դեռևս բավականին աշխատանքներ կան իրականացնելու՝ ապահովելու վարչական կառավարման համակարգի աստիճանակարգված հաշվետվողականության գործընթաց՝ հենված ոչ միայն գործընթացների նկարագրման, այլև տվյալների հավաքագրման, վերլուծության և խնդիրների բացահայտման բաղադրիչների վրա: Սա իր հերթին հնարավորություն կստեղծի ապահովելու ըստ արդյունավետության հաշվետվությունների գնահատման գործընթաց:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի երկարաժամկետ պլանավորման փորձը (ՌԾ և ԶԾ), սակայն գտնում է, որ այն կարիք ունի հստակեցման՝ ապահովելու արդյունքահենք պլանավորում՝ հստակ ցուցիչներով, պատասխանատվությունների բաշխմամբ, ռեսուրսների կառավարումով և վերահսկման գործիքներով: Ռազմավարական նպատակների և

հիմնախնդիրների սահմանումը պետք է հիմնվի վերլուծությունների վրա, իսկ կարճաժամկետ պլանավորումը պետք է հստակ կապ ունենա երկարաժամկետ ռազմավարության հետ, ինչը դեռ բավարար չափով արտահայտված չէ:

Միևնույն ժամանակ, խումբը նշում է, որ համացանցային պլանավորումների կիրառումը և համագործակցային քննարկումները նպաստում են քոլեջի ակտիվ գործունեությանը՝ ապահովելով ուսումնական գործընթացի կազմակերպումը նորարարական և արդյունավետ մեթոդներով: Այնուամենայնիվ, այս մեխանիզմներն առայժմ չեն ստեղծում կայունության լիարժեք երաշխիքներ և սահմանափակում են առավել արդյունավետ գործունեության հնարավորությունները: Կարևոր է բոլոր ստորաբաժանումների համար ֆորմալ պլանավորումների մեխանիզմի ներդրումը:

ՊԻԳԲ սկզբունքը քոլեջում ներդրված չէ ամբողջությամբ. գործընթացների զգալի մասը դեռևս չի անցել գնահատման և բարելավման փուլեր կամ գտնվում է պլանավորման մակարդակում, որտեղ առկա են որոշակի խնդիրներ: Այնուամենայնիվ գնահատելի է, որ քոլեջում առկա են ՊԻԳԲ ամբողջական շրջափուլի նախադեպով գործընթացներ:

Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի կողմից բլոգային և էլեկտրոնային կառավարման համակարգերի հաջող կիրառումը և դրանց շարունակական զարգացումը: Սակայն անհրաժեշտ են տեղեկատվության վերլուծության և գնահատման ավելի արդյունավետ գործիքակազմեր, ինչպես նաև համակարգված մոտեցում տվյալների հավաքագրման և վերամշակման համար: Չնայած քոլեջը ձեռնարկում է քայլեր այս ուղղությամբ, հետազոտական տվյալների վերլուծության և մշտադիտարկման մեխանիզմները դեռ թերի են, ինչը սահմանափակում է կառավարչական որոշումների օբյեկտիվ կայացումը և ռիսկերի կառավարումը: Այնուամենայնիվ, խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ուշադրության կենտրոնում է պահում մի շարք կարևոր խնդիրներ և դրանց ուղղությամբ ակտիվորեն աշխատում է:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը հատուկ ուշադրություն է դարձնում գործընթացների թափանցիկության ապահովմանը, և նշում է, որ սա ձևավորված սկզբունք է, որն ընկած է գործունեության հիմքում: Նաև դրական է բազմազան գործիքակազմերի կիրառումը և այս ուղղությամբ անընդհատ զարգացումները: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարողացել է այս ուղղությամբ անընդհատ զարգացումների շրջափուլի մեջ հայտնվել: Միայն նշում է, որ կայքի կառուցվածքի բարելավման ուղղությամբ աշխատանքները կարող են նպաստել տեղեկատվության որոնման առավել արդյունավետության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջն ունի կառավարման համակարգ, որն ապահովում է քոլեջի հիմնական գործընթացների արդյունավետությունը և հանգեցնում է զարգացման, ներդրել է ռազմավարական կառավարման որոշ մոտեցումներ և գիտակցում է դրանց բարելավման ուղղությամբ աշխատանքների անհրաժեշտությունը, կարողանում է ներգրավել ռազմավարական նպատակների իրագործման համար բավարար ֆինանսական և նյութական ռեսուրսներ, ձևավորել է ակտիվ համագործակցային և առաջնորդությամբ կառավարման մշակույթ, կարևորում է ՊԻԳԲ սկզբունքը և ունի շրջափուլի նախադեպեր, որոշումների կայացման համար կարևորում է որոշակի տվյալների դիտարկումը և ակտիվ քննարկումները, հաջողությամբ կիրառում է բլոգային և էլեկտրոնային կառավարման համակարգերն ու անընդհատ ներդնում նորարական մոտեցումներ, ապահովում է գործընթացների թափանցիկություն, փորձագիտական խումբը գտնում է, որ Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջը համապատասխանում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջն իրականացնում է միջին և նախնական մասնագիտական 14 կրթական ծրագիր՝ «Նախադպրոցական կրթություն», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Գրադարանային գործ», «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում», «Զբոսաշրջություն», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն», «Լուսանկարչական գործ», «Հագուստի մոդելավորման նախագծում», «Շուկայաբանություն», «Զարդակիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ», «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Հացաթխման արտադրության տեխնոլոգիա», «Պարտեզապուրակային գործ»: Վերջին տարիներին ներդրվել է «Շուկայաբանություն» մասնագիտությունը, 2025-2026 թթ.-ից նախատեսում են կրթություն կազմակերպել նոր մասնագիտական կրթական ծրագրերով՝ «Համակարգչային գրաֆիկա», «Մեղվաբուծություն», «Ռոբոտաշինություն», ինչը պայմանավորեցնում են ժամանակի պահանջներով: Սակայն մասնագիտությունների ներդրման համար հիմք չեն հանդիսացել շուկայի հստակ ուսումնասիրությունները և արտաքին շահակիցներից ստացված արձագանքները, առկա չեն համապատասխան վերլուծություններ:

ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը չի մասնակցում պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը: Կրթական ծրագրերը պարունակում են համապատասխան մանրամասն նկարագրեր ըստ որակավորումների և բխում են ՊԿՉ-ներից:

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են նաև ընտրովի և պահուստային ժամերի հաշվին ներդրված առարկաներ, որոնք ներդրվել են՝ նկատի ունենալով հեղինակային ուսուցման առանձնահատկությունները: Օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Նախադպրոցական կրթություն» և «Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ների դեպքում նախատեսված են «Մասնագիտական ուսումնասիրություն կատարելու գիտելիք-հմտություն-կարողություն», «Նախագծային ուսուցման կազմակերպում» առարկաները:

Կրթական ծրագրերում փոփոխությունները տեղի են ունենում հիմնականում նախագծային աշխատանքների թեմաների փոփոխություններով պայմանավորված, որոնք մի դեպքում կարող են առաջադրվել դասավանդողների կողմից՝ նկատի ունենալով ոլորտի փոփոխությունները, մյուս կողմից՝ կարող են ներկայացվել ուսանողների կողմից՝ ելնելով իրենց հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակից: Հարկ է նշել, որ ուսումնական գործընթացում իրականացվում են նաև նախագծային աշխատանքներ, որոնք ընդգրկում են տարբեր առարկաների և մոդուլների փոխկապակցված թեմաներ: Մի նախագիծ կարող է ներառել մի քանի առարկայի կամ մոդուլի առաջադրանքներ, և դրանց արդյունքները գնահատվում են համապատասխանաբար՝ յուրաքանչյուր առարկայի կամ մոդուլի պահանջներին և չափանիշներին համապատասխան: Փորձագիտական այցից պարզվեց, որ վերջին պարագայում մի նախագծի շրջանակում կարող են ներգրավվել նաև խմբեր՝ թե նույն մասնագիտությամբ ուսանողներից և թե՛ տարբեր մասնագիտությամբ ուսանողներից: Բացի այդ, փոփոխություններ իրականացվում են նաև ըստ ՊԿՉ-ների պահանջների՝ մասնաժողովներում և մասնախմբերում քննարկումների արդյունքներով:

«Նախադպրոցական կրթություն» մասնագիտական կրթական ծրագրի դեպքում դասավանդողները մասնագիտական մոդուլները բարելավում են՝ հիմք ընդունելով մասնագիտական վերապատրաստումների արդյունքում ձեռք բերված փորձը, գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև առաջատար քոլեջների և բուհերի ուսումնական պլանները, դասընթացների ծրագրերի ուսումնասիրելու արդյունքում, կարևորելով բուհերի հետ թեմաների կրկնությունների բացառումը և քոլեջի առանձնահատկությունները: Օրինակ՝ «Մանկան հոգեբանություն», «Ներառական կրթություն» դասընթացների վերանայման, բարելավման համար հիմք են հանդիսացել դասավանդողի վերապատրաստման արդյունքները (վերապատրաստման թեմա՝ «Դիսլեքսիա, դիսգրաֆիա»): Վերապատրաստման արդյունքները հիմք են հանդիսացել նաև դասընթացների նախագծային աշխատանքների թեմաները վերանայելիս: Մասնավորապես՝ «Մանկան հոգեբանություն» դասընթացի «Հոգեկանի զարգացման առանձնահատկությունները վաղ տարիքում», «Իմացական գործընթացների զարգացումը վաղ տարիքում» թեմաների ուսումնասիրման շրջանակում որպես նախագծային աշխատանք առաջադրվել է «Աշխատանք հինգ տարեկանների հետ տարբեր իմացական գործընթացների զարգացման համար» թեման: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության մեջ ներդրվել են մոդելավորման և նախագծման արդի ծրագրային փաթեթներ: Ուսանողներին տրվող առաջադրանքներում, օրինակ՝ լոգոյի մակետի ստեղծման դեպքում, ընդգրկվում է դրա վերլուծությունը, ներառյալ ընտրված նախշերի պատմական ակնարկը, գրաֆիկական տարրերի ու գույների համադրության հիմնավորումը:

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ, ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման, նախավարտական, արտադրական պրակտիկա: Պրակտիկաներն իրականացվում են հստակ պլանավորումների արդյունքում՝ նախապես կազմելով պլաններ: Փորձագիտական այցից պարզվեց, որ պրակտիկաները հիմնականում իրականացվում են կրթահամալիրի ներսում, միաժամանակ գործատուների մոտ հաճախ են իրականացնում շրջայցեր՝ նպատակ ունենալով ուսանողներին ծանոթացնել ոլորտում կիրառվող մոտեցումներին և աշխատանքային գործընթացներին: Ընդ որում, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուների հետ համագործակցությունը չի սահմանափակվում կնքված պայմանագրերի և հուշագրերի շրջանակներով: Հարկ է նշել, որ առանձին դեպքերում որպես պրակտիկաների վայրեր հանդես են գալիս նաև ուսանողների աշխատավայրերը:

Մասնագիտական կրթական ծրագրերով պրակտիկաներն իրականացվում են նաև կրթահամալիրի բոլոր մասնաճյուղերում և լաբորատորիաներում պրակտիկաները որոշակիորեն վերածում է աշխատանքի վրա հենված ուսուցման ձևի: Կրթահամալիրում առկա բազմաթիվ լաբորատորիաները ակտիվ կիրառելիություն են ունենում, ընդ որում հարկ է նշել, որ քոլեջում պրակտիկայի ժամանակ կարևորվում է սխալվելու հնարավորությունը՝ դիտարկելով դա ուսուցման կարևոր մոտեցում: Միաժամանակ կրթահամալիրում ստեղծված համակարգի հիմքում դրված է ստեղծագործ աշխատանքը և նյութի մշակումից մինչև արտադրություն ճանապարհով «շրջագայությունը», ինչին մասնակցություն է ունենում ուսանողը: Նշենք նաև, որ արտադրության արդյունքը շատ պարագաներում նաև պայմանավորված է քոլեջի և կրթահամալիրի տարբեր կարիքներով: Մասնավորաբար, Սարքաշինության լաբորատորիայում օդափոխման համակարգ են պատրաստում կրթահամալիրի համար, ինչպես նաև գինու արտադրություն են իրականացնում, որը նաև վաճառվում է: Ուսանողները ներգրավված են նաև կայքի աշխատանքներում (նյութեր են պատրաստում կայքում տեղադրելու նպատակով, կայքի ձևավորման աշխատանքներում են ներգրավված և այլն): Ծրագրավորման, SS և ռոբոտաշինության լաբորատորիայում ուսանողները ստեղծել են ավտոմատացված հակակարգեր՝ օրինակ՝ ծաղիկների ինքնաշխատ ջրման սարք որն օգտագործվում է Բույսերի լաբորատորիայում:

Բրուտագործության լաբորատորիայում ուսանողները կավից ծաղկամաններ են պատրաստում, որոնք կիրառվում են Բույսերի լաբորատորիայում, իսկ Փայտամշակման, սարքաշինության լաբորատորիայում պատրաստված սեղաններն ու աթոռները ծառայում են կրթահամալիրի կարիքներին և այլն՝ ունենալով համապատասխան նյութերը: Ընդ որում նշենք, որ օրինակ՝ կավի ստացումը ևս Բրուտագործության լաբորատորիայում է կատարվում՝ ուսանողների հետ միասին:

Մասնավորապես, «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության դեպքում պրակտիկա է նաև, երբ ուսանողները կրթահամալիրին ծանոթացնող երթուղի են կազմում, իսկ «Նախադպրոցական կրթություն» մասնագիտական կրթական ծրագրի դեպում ուսանողները հնարավորություն են ստանում պրակտիկան անցնել Քոլեջի և Կրթահամալիրի ներսում գործող 20 նախակրթարաններում, որը հետագայում նրանց համար դառնում է նաև աշխատավայր: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում պրակտիկայի ընթացքում ուսանողները կատարում են նախագծային բնույթի աշխատանքներ, մասնավորապես իրականացնում բրենդինգ, ինֆոգրաֆիկա, օգտագործում մոդելավորման ծրագրային փաթեթներ՝ նպաստելով սեփական մասնագիտական կարողությունների գործնական կիրառման զարգացմանը: Վերոնշյալ աշխատանքները նաև նախագծային աշխատանքների շրջանակներում ստացված արդյունքներ են:

Մասնագիտական կրթական ծրագրերով պրակտիկան իրականացվում է նաև քոլեջի հետ համագործակցող կազմակերպություններում (որոնք ոչ բոլոր կրթական ծրագրերով են առկա), ինչպես նաև Արատեսի դպրական կենտրոնում, «Գագարին» պրոյեկտի գյուղերում, Ծաղկունքի բաց դպրոցում՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները լրացնում են օրագրեր և ներկայացնում հաշվետվություններ՝ ըստ սահմանված ձևաչափերի:

ՄՈՒՀ-ում առկա է դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդների ընտրության միասնական մոտեցում: Հաստատությունում կարևորվում են նորարար, փոխգործուն մեթոդների գործածումը: Կրթահամալիրում կրթությունը կազմակերպվում է հեղինակային-այլընտրանքային-նախագծային ուսուցմամբ, կիրառվում է նաև բլոգային ուսուցումը: Դասավանդման և ուսումնառության նյութերը առկա են առցանց հարթակում և հասանելի են բոլորին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդողները պարտադիր կերպով պետք է կիրառեն անհատական բլոգներ դասավանդման գործընթացում, որտեղ տեղադրում են ուսումնառության նյութերը, հաշվետվությունները, որոնք հասանելի են, ոչ միայն ուսանողների, այլ հասարակության բոլոր անդամների համար:

Ուսումնառության գործընթացում ուսանողները ևս կիրառում են բլոգ, որտեղ տեղադրում են նախագծային աշխատանքները, հանձնարարականների արդյունքները, սրանք ևս հասանելի են բոլորին: Այնուամենայնիվ, քոլեջում նաև Moodle համակարգի ներդրման և գործածման անհրաժեշտություն են տեսնում, սա դասավանդողները պայմանավորեցնում են այն հանգամանքով, որ Moodle համակարգը թույլ է տալիս հետադարձ կապի հնարավորություն, մինչդեռ այժմ կիրառվողը այդ տեսանկյունից ճկուն չէ:

Դասավանդման, ուսումնառության մեթոդները ներառում են տեսական և գործնական բաղադրիչների համադրում, ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառում, փորձառություն: Հիմնական մեթոդներն են՝ դասախոսություններ, սեմինարներ, պրակտիկա նախագծային ուսուցում, արտադրությամբ ուսուցում:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները առավել կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը, նորարությունը: Սակայն որոշ դեպքերում այս մոտեցումը բերում է տեսական գիտելիքի ապահովման նվազ ուշադրության: Հատկապես այս տեսանկյունից առանձնանում են նախագծային աշխատանքները, որոնք իրականացվում են բոլոր մոդուլների ու դասընթացների շրջանակներում՝ կամ առանձին, կամ համակցված միջառարկայական ձևերով:

Առկա են նաև վերլուծական մտքի զարգացմանն ուղղված այլ հանձնարարականներ: Մասնավորաբար, «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության դեպքում «Երկրագիտություն», «Սպասարկման ծառայությունների կազմում օտար լեզվով» և այլն մոդուլներում առկա են համապատասխան հանձնարարականներ, որոնք նպաստում են գործնական և վերլուծական կարողությունների ու հմտությունների զարգացմանը, իսկ «Նախադպրոցական կրթություն» ՄԿԾ-ի դեպքում «Մասնագիտական խոսքի զարգացում», «Երեխաների խոսքի զարգացում», «Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորում» մոդուլների շրջանակում կարևորվում են ոչ միայն ուսանողների ստեղծարար, վերլուծական, տրամաբանական մտածողության զարգացումը, այլև հաղորդակցման, գրավոր և բանավոր խոսքի զարգացումը: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտական կրթական ծրագրում «Եռաչափ մոդելավորման տեխնոլոգիա - 2d, 3d օբյեկտների մոդելների ստեղծում», «Եռաչափ մոդելավորման տեխնոլոգիա - մոդելների անիմացիա» մոդուլներում ներառված են հանձնարարություններ՝ գործնական առաջադրանքների տեսքով:

Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում ստեղծված է միջավայր, որտեղ նաև կարևորվում է ազգային մշակույթի ուսումնասիրումը և ուսուցումը՝ թե՛ կրթական ծրագրերով նախատեսված դասընթացների շրջանակում, թե՛ նախասիրական խմբակներում ներգրավմամբ և թե՛ քոլեջում ձևավորված ավանդույթների էլեմենտների արտահայտմամբ:

Քոլեջում ուսումնառության կազմակերպման համար գործածվում են ուսումնական նախագծեր, սեմինարներ, դասավանդողի կողմից հանձնարարվող լրացուցիչ նախագծերի մշակումներ, գործնական, լաբորատոր պարապմունքներ, մասնագիտական փորձառություններ, «Սովորող-սովորեցնող» նախագծով համագործակցություններ, կլոր սեղան-հանդիպումներ, բանավեճ-քննարկումներ, ինտերակտիվ դասընթացներ, անհատական, խմբային նախագծեր, հետազոտական աշխատանքներ, դիպլոմային նախագծեր: Տարբեր ոլորտների առաջատար մասնագետներ պարբերաբար վարպետության դասեր են վարում քոլեջում, կազմակերպվում են արտագնա դասեր արտադրամասերում, գործատուների աշխատավայրերում: Հարկ է նշել, որ կարևոր առանձնահատկություն է նաև ճամփորդությամբ ուսուցումը (Կազմակերպում են ճամփորդություններ թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանում, որոնցում ներգրավում են թե՛ ուսանողներ, թե՛ դասախոսներ, և այդ ժամանակահատվածը ուղղված է լինում ուսուցման գործընթացին):

Քոլեջն ունի նաև ՄԿԾ-ի շրջանակում ուսանողի մասնագիտական ուսումնասիրություն կատարելուն ներկայացվող հստակ պահանջներ, առկա է խրախուսող միջավայր:

Հաստատությունն ունի հետազոտական աշխատանքների սահմանած կառուցվածք և ուսանողների կատարած հետազոտական նախագծին ուղղված պահանջներ, որտեղ ուշադրություն է դարձվում հետազոտական խնդիրների, մեթոդաբանության, պլանավորման, գրականության, արդյունքների հետ կապված հարցերին:

Քոլեջն ունի մասնագիտական ուսումնասիրություն կատարելուն ներկայացվող պահանջներ, ըստ այս փաստաթղթի քոլեջն անդրադառնում է մասնագիտական ուսումնասիրություն կատարելու սկզբունքներին, իրականացման կարգին, ներկայացնում են ուսումնասիրություն կատարելու պահանջները, աշխատանքի կառուցվածքը, սկզբունքներն ու տեխնիկական պահանջները, հանրային ներկայացման պահանջները, գնահատման գործընթացը:

ՄՈՒՀ-ն ունի 2023 թ.-ին հաստատված «Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգ», որը սահմանում է դիպլոմային նախագծերի կառուցվածքը: Մասնավորապես՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության դեպքում ուսանողները մշակում են եռալեզու նախագծային աշխատանքներ: Օրինակ, «Հայաստանի հյուրանոցներ» թեմայով նախագծի դեպքում ուսանողները ինքնուրույն ընտրում են հետազոտվող տեղանքը, վերլուծում դրա առանձնահատկությունները և կազմում եզրակացություններ:

Այս մասնագիտության շրջանակում դիպլոմային աշխատանքների թեմաները ներառում են զբոսաշրջության արդի ուղղություններ, ինչպիսիք են «Փառատոնային տուրիզմը Հայաստանում», «Սյունիքի մարզի զբոսաշրջային ներուժը», «Կինոտուրիզմ» և այլն: «Նախադպրոցական կրթություն» մասնագիտական կրթական ծրագրում ավարտական և նախագծային աշխատանքների թեմաների ընտրությունը հիմնված է ոլորտի հիմնախնդիրների և երեխաների տարիքային հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրության վրա: Ուսանողները կարող են ընտրել թեմաներ, որոնք անդրադառնում են նախադպրոցական կրթության արդի մարտահրավերներին, մանկավարժական նոր մեթոդներին և երեխաների զարգացման առանձնահատկություններին: Օրինակ՝ «Մանկան հոգեբանություն» դասընթացի շրջանակում որպես դիպլոմային հետազոտական աշխատանք ուսումնասիրվում են «Նախադպրոցականի վախերի հաղթահարման միջոցները», «Նախադպրոցականի ուշադրության ձևավորումն ու զարգացումը խաղերի միջոցով», «Նախադպրոցականի հուզական ինտելեկտի զարգացումը՝ զգայական խաղերի միջոցով» թեմաները: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտական կրթական ծրագրի շրջանակում ավարտական ու նախագծային աշխատանքների թեմաների կազմման և ընտրման հիմքում ընկած են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում տեղի ունեցող դինամիկ փոփոխությունները, արդի աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող ծրագրային փաթեթների կիրառման առանձնահատկությունները:

Մասնավորապես, դիպլոմային աշխատանքի շրջանակներում ուսանողի կողմից իրականացվել է «Sculplast» կազմակերպության ստեղծումը, բրենդինգի և վեբ կայքի մշակումը, որի ընթացքում ուսանողի կողմից նախագծվել է կազմակերպություն, որը մասնագիտացած է լինելու վերամշակված պլաստիկից օգտակար իրերի, մասնավորապես կահույքի պատրաստման գործում և նպատակ է ունենալու առաջարկել երկարակյաց, բազմաֆունկցիոնալ և նրբագեղ լուծումներով արտադրանք: Մեկ այլ աշխատանքում իրականացվել է ArmCake կազմակերպության բրենդավորում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ առանձին դեպքերում, երբ ուսանողները նախագծային, հետազոտական աշխատանքների շրջանակում հարցումներ կամ հարցախույզ են անցկացնում, ապա թիրախային շրջանակը սահմանափակվում է քոլեջի աշխատակիցներով կամ ծանոթների շրջանակներով: Միաժամանակ առանձին հետազոտական աշխատանքների դեպքում հստակ գրականության վերլուծություն կամ տեսական ուսումնասիրություններ ու վերլուծություններ առկա չեն:

Քոլեջը որպես դասավանդման և ուսուցման մեթոդների արդյունավետության գնահատման միջոցներ համարում է նախագծային աշխատանքները, ամսական ամփոփիչ գնահատումները, ստուգարքները, քննությունները, կլոր սեղանները, հաշվետու համերգները, ցուցահանդես-վաճառքները, փառատոները, հարցումները, ամփոփիչ ատեստավորման արդյունքները, քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, գործատուների շրջանում անցկացված հարցումները: Սակայն սրանց հիմքով հստակ ցուցանիշներ, տվյալներ և վերլուծություններ առկա չեն:

ՄՈՒՀ-ում առկա է Ուսանողի գնահատման և բողոքարկման կարգ: Ամփոփիչ գնահատումն իրականացվում է դիպլոմային աշխատանքների հիման վրա: Նման մոտեցումը ընդունված է բոլոր մասնագիտություններում:

Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը: Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առանձնացված են բանավոր հարցեր, թեստային հարցեր, նաև տրվում են գործնական ու վերլուծական առաջադրանքներ: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մասնագիտական մոդուլները ևս մեկ անգամ ամփոփվում են, առկա է կիսամյակային ամփոփիչ հարցաշար:

Քոլեջի գնահատման կարգի համաձայն՝ գնահատումն իրականացվում է՝ ըստ դասերին ուսանողի հաճախումների, դասընթացի ծրագրով նախատեսված առաջադրանքների կատարման և ակտիվության աստիճանի, ինչպես նաև՝ ուսումնական նախագծերի: Ուսանողները գնահատվում են ներքին և արտաքին գնահատման ձևաչափով: Ներքին գնահատումն իրականացվում է ուսանողների՝ ըստ ամիսների, կիսամյակի, մոդուլների կամ վերջնարդյունքների շրջանակում, կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատմամբ: Ուսանողն իր բլոգում ներկայացնում է ըստ այդ ժամկետների հաշվետվություններ: ՄՈՒՀ-ում ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ սահմանված չեն, որ հնարավորություն կտան գնահատելու գիտելիք, կարողություն, հմտության աստիճանը: Արտաքին գնահատումն ամփոփիչ ատեստավորումն է: Սակայն պետք է նշել, որ նախագծային, հետազոտական աշխատանքների պարագայում հստակ չափանիշներ սահմանված են:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարող են փոխել իրենց գնահատականը տեղում՝ ըստ համապատասխան ընթացակարգի: Փորձագիտական այցից պարզվեց, որ գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում: Գնահատականներն արտահայտված են պրակտիկայի օրագրերում: Որպես այդպիսին պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված են, որտեղ կարևոր բաղադրիչ է կարողությունների դրսևորումը:

Քոլեջը մեծ ուշադրություն է դարձնում ակադեմիական ազնվությանը: Փորձագիտական այցից պարզվեց, որ գրագողության բացահայտման համար դասախոսները կիրառում են օնլայն որոնողական կայքերը, արհեստական բանականության միջոցները: Միաժամանակ բոլոր նախագծային հետազոտական աշխատանքները գրախոսության են ենթարկում: Քոլեջը նաև ձեռնարկել է արտաքին գրախոսություն կազմակերպելու գործընթաց՝ դիմելով առաջատար մասնագետների: Գրագողության դեպքերի առանձնացված ցուցանիշներ առկա չեն, որոնք նաև վերլուծության ենթարկվեին:

ՄՈՒՀ-ը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, սակայն իրականացրել է դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համեմատական վերլուծություն (Անտառային, Մոնտեսորի, Շտեյներ-Վալդորֆ, ԱՄՆ-ի հմուտ, Բրոնքսի Արենա միջին և այլ դպրոցների շրջանակներում): Մշտադիտարկման և բենչմարքինգի իրականացման կարգ առկա չէ և հստակ մեխանիզմներ դեռևս ներդրված չեն:

Ըստ ինքնավերլուծության՝ Բլեյան բաց ցանցի նպատակն է ստեղծել և տարածել հեղինակային կրթական ծրագրերը՝ համագործակցելով տարբեր ուսումնական հաստատությունների, ուսուցիչների և սովորողների հետ: Սրա արդյունքում դասավանդողները և սովորողները ներգրավվում են նորարարական ծրագրերում, մասնակցում կրթական փոխանակումների: Այս գործընթացները հնարավորություն են տալիս քոլեջին զարգացնելու միջազգային շահակիցների հետ համագործակցությունը:

ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման քաղաքականություն է առկա, սակայն դեռևս հստակ կիրառելիություն չի ունեցել: Պետք է նշել, որպես ՄԿԾ մշտադիտարկման, գնահատման, վերանայման մեխանիզմներ քոլեջը դիտարկում է ուսանողների և շրջանավարտների շրջանում պարբերաբար անցկացվող հարցումները, հարցազրույցները դասընթացների որակի, դասավանդողների աշխատանքի և ուսումնական միջավայրի վերաբերյալ, կարծիքների հավաքագրումը, կլոր սեղան-քննարկումները, դասավանդողների գնահատումը և այլն:

Փորձագիտական այցից պարզվեց, որ որոշակի տվյալներ քննարկվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա առաջին 2 ամիսների ընթացքում տեղի ունեցող հեղինակային մանկավարժության աշնանային հավաքների ժամանակ, որտեղ անդրադառնում են նաև նոր անելիքներին: Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ որոշ քննարկումներ տեղի են ունենում նաև մասնախմբերում և մասնաժողովում, սակայն համընդհանուր տվյալների հավաքագրում և վերլուծություն քոլեջը չի իրականացնում:

Վերջին տարիներին ՄԿԾ-երի վերանայման շրջանակներում կատարված փոփոխություններից քոլեջն առանձնացնում է կրթական ծրագրերի արդիականացումը, արդի պահանջներին համապատասխան նոր առարկաների ավելացումն ու նոր ՄԿԾ-ների ներդրումը, դասավանդման մեթոդների, մեդիակրթության բարելավումը, ուսումնական նախագծերի բազմազանեցումը: Ընդ որում, վերջինի արդյունքում ներդրել են արտադրությամբ ուսուցման մոտեցումը, միջմասնագիտական, ինտեգրված նախագծերը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի կողմից իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունը ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին և դրանց համապատասխանեցումը ՊԿՉ-ների պահանջներին: Քոլեջը պարբերաբար վերանայում և ընդլայնում է իր կրթական ծրագրերը՝ արձագանքելով ժամանակի պահանջներին, ինչը նպաստում է ուսանողների մրցունակության բարձրացմանը աշխատաշուկայում: Չնայած աշխատաշուկայի հստակ վերլուծություններ առկա չեն, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ կարևոր է, որ այդպիսի կրթական ծրագրերի ներդրմանը քոլեջում նախորդում են բազմաթիվ քննարկումներ և քոլեջում հնարավորությունների դրտարկում: Սա ապահովում է կրթական առաջարկի առավել համարժեք համապատասխանությունը ոլորտի զարգացման միտումներին և շուկայի պահանջներին:

Կրթական ծրագրերը մանրամասն նկարագրված են ըստ որակավորումների, միաժամանակ ՄՈՒՀ-ը կիրառում է հաստատության առանձնահատուկ մոտեցումները, որոնք բխում են նաև արդի պահանջներից: Սա նպաստում է կրթական գործընթացի ճկունության ապահովմանը և ուսանողների՝ մասնագիտական ոլորտին ինտեգրման դյուրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դասավանդման և ուսումնառության գործընթացում ներդրված են նորարար, փոխգործուն մեթոդներ, որոնք շարունակաբար կատարելագործվում են: Ընդ որում, այս ուղղությամբ քոլեջը, որպես կրթահամալիրի բաղադրիչ, հստակ քաղաքականություն է վարում: Սա նպաստում է ուսանողների ակտիվ ներգրավվածությանը և նրանց քննադատական մտածողության զարգացմանը: Փորձագիտական խումբը նաև դրական է համարում այն, որ քոլեջը հանդես է գալիս ինքնատիպ կրթություն կազմակերպողի դիրքերից՝ գործածելով հեղինակային-այլընտրանքային-նախագծային և բլոգային ուսուցման մոտեցումներ, բացի այդ, այս մոտեցումների հենքը ժամանակի հարափոփոխ պահանջներին համապատասխանեցումը, ուսանողների նախասիրությունների նկատի առնելը, ուսանողների և դասախոսների՝ ուսուցման կազմակերպման գործընթացում մոտիվացված ներգրավվածության ապահովումն է՝ նաև նրանց անընդհատ ինքնակատարելագործմամբ: Միաժամանակ, խմբի կողմից կարևորվում է, որ քոլեջն ընդգծված ուշադրություն է դարձնում ուսանողների պրակտիկ և վերլուծական, հետազոտական կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Այս նպատակով կիրառվում են հստակ ինստիտուցիոնալ մոտեցումներ, որոնք ապահովում են ուսանողների մասնագիտական հմտությունների ձևավորումը, աշխատաշուկայի պահանջներին համահունչ լինելու հնարավորությունը և նրանց կարիերայի կայուն զարգացման հեռանկարները:

Դրական է, որ ուսանողները ներգրավվում են հետազոտական և նախագծային աշխատանքներում, որոնք հաճախ ներառում են նաև բազմամասնագիտական համագործակցություն, ինչը զարգացնում է թիմային աշխատանքի և միջառարկայական մտածողության կարողությունները:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ արտադրական պրակտիկաներ են կազմակերպվում կրթահամալիրի լաբորատորիաներում՝ խրախուսելով ստեղծագործական մոտեցումն և սխալվելու հնարավորությունից ուսուցումը: Փորձագիտական խումբը նշում է, որ ուսումնական ռեսուրսների և լաբորատորիաների օգտագործումը նպաստում է ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացմանը, ընդ որում դա ներառում է մինչև արտադրություն տարբեր փուլերի համադրում: Այս տեսանկյունից քոլեջում առկա է աշխատանքի վրա հենված ուսուցման փորձ, որը կարող է վերածվել նաև դուալ կրթության: Փորձագիտական խումբը նաև դրական է համարում քոլեջի համագործակցությունը տարբեր հաստատությունների հետ՝ թե՛

պրակտիկաների և թե՛ շրջայցերի կազմակերպման տեսանկյունից: Միաժամանակ դրական է, որ քոլեջը ներգրավում է ոլորտի առաջատար մասնագետների և՛ դասավանդման, և՛ տարբեր միջոցառումների շրջանակներում: Դրա հետ մեկտեղ փորձագիտական խումբը գտնում է, որ համագործակից հաստատությունների շրջանակն ընդլայնելու և ինստիտուցիոնալ հիմքերով ամրացնելու կարիք կա, ինչը համագործակցությունների շարունակականության ապահովման կայուն երաշխիքներ կստեղծի և նոր հնարավորությունների դաշտ կստեղծի:

Փորձագիտական խումբը քոլեջում իրականացվող կրթության կարևոր առանձնահատկություն է համարում նորարարության և ավանդական ազգային մշակույթի յուրօրինակ թելերով միահյուսված ուսուցումը, ինչը արտահայտված է ոչ միայն կրթական մեթոդներով և բովանդակությամբ, այլև՝ կառավարման մոտեցումներով, միջավայրով, ռեսուրսներով և ձևավորված ավանդույթներով: Սա, թերևս, հաստատության յուրօրինակ առաքելությունն է:

Սակայն փորձագիտական խումբը, դիտարկելով առավել կատարելագործման հնարավորությունները, կարևորում է, որ քոլեջը նաև ուշադրություն դարձնի տեսական գիտելիքի որոշակի խորը ուսուցմանը և տեսական հետազոտությունների իրականացմանն ու վերլուծությանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս հնարավորությունն առկա է քոլեջում, առավել ևս, որ նախագծերի և հետազոտական աշխատանքների իրականացման համար բերված փաստաթղթերումարտացոլված են նման պահանջներ, այսինքն այս ուղղությամբ արդեն իսկ ինստիտուցիոնալ քայլեր կան կատարված:

Դրական է, որ գնահատման գործընթացը ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գնահատում՝ դիպլոմային աշխատանքների, նախագծային առաջադրանքների և քննությունների միջոցով: Նաև դրական է, որ քոլեջը մեծ ուշադրություն է դարձնում ակադեմիական ազնվությանը՝ գրագողության բացահայտման միջոցների կիրառմամբ: Փորձագիտական խումբը նշում է, որ գնահատման համակարգը ընդհանուր առմամբ համապարփակ է, սակայն ուսանողների հետադարձ կապի տվյալների վերլուծության բացակայությունը խոչընդոտում է կրթական բարեփոխումների հիմնավորման գործընթացին: Միաժամանակ կարևոր կլինի Moodle համակարգի ներդրումը, որը հետադարձ կապի ապահովման առավել ճկուն հնարավորություններ է ընձեռում: Խումբը նաև գտնում է, որ ընթացիկ գնահատումների համար առավել հստակ չափանիշ, չափորոշիչների սահմանումը կարող է նպաստել գնահատման գործընթացի առավել թափանցիկության և արդյունավետության ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում առկա են մի շարք մեխանիզմներ, որոնք հանգեցնում են կրթական ծրագրերի արդիականացմանն ու արդի պահանջներին համապատասխանեցմանը, և այստեղ շատ կարևոր նշանակություն ունեն ինչպես ակտիվ քննարկումները մասնախմբերում ու մասնաժողովներում և տարեկան հեղինակային մանկավարժության աշնանային հավաքները, այնպես էլ հարցումները և դասախոսների նախաձեռնությունները: Դրական է նաև Բլեյան ցանցի ընձեռնած հնարավորությունները միջազգային զարգացման միտումներին համահնչեցման տեսանկյունից: Նաև գնահատելի է քոլեջի նախաձեռնողականությունը միջազգային ծրագրերում ներգրավվելուն ուղղված: Վերոնշյալը ձևավորված մշակույթ է, որը հանգեցնում է անընդհատ բարելավումների և սա խիստ կարևոր է: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ տվյալների համակողմանի հավաքագրումն ու վերլուծությունները (այդ թվում՝ համեմատական) առավել հիմնավոր կդարձնեն գործընթացների իրականացումը, մինչդեռ դրանց բացակայությունը նաև սահմանափակում է ծրագրերի որակի շարունակական բարելավման հնարավորությունները: Այս գործընթացի առավել համակարգված իրագործելիության նպատակով կարևոր կլինի ընթացակարգային դրույթների ներդրումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Մ. Մեբաստացի կրթահամալիրի քոլեջում առկա ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության առաքելությանը, ՈԱՇ-ին և ՊԿՉ-ներին, առկա է ըստ որակավորումների մանրամասն նկարագիր, գործում են

դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետ մոտեցումներ, առկա է կրթական յուրօրինակ միջավայր և մեթոդաբանություն, աշխատանքի վրա հենված ուսուցման մոտեցումներ, առկա են ակադեմիական ազնվության ապահովման մոտեցումներ, առկա են փոխանակումների նախադեպեր, առկա է ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն, իրականացնում են անընդհատ բարելավումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Մ. Սեբաստացի քոլեջը համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ: Ընդունելության գործընթացին վերաբերող տեղեկատվությունը տարածվում է տարբեր հաստատություններ շրջայցերի միջոցով և մեդիահարթակներում, կազմակերպվում են քոլեջում իրազեկում-հանդիպումներ ամենամյա մայիսյան հավաքի շրջանակներում, մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական այցեր Երևանի և մարզերի դպրոցներ, Բաց դռների օրեր, որի շրջանակում Զբոսաշրջության ուսանողների կողմից տուրեր են կազմակերպվում քոլեջում, որոնց ընթացքում իրականացվում են մասնագիտական կողմնորոշման սեմինարներ, շրջայցեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են ուսանողները և դասախոսները:

Փորձագիտական այցից պարզվեց, որ կրթահամալիրի դպրոցի աշակերտները ևս համալրում են քոլեջի դիմորդների կազմը, սակայն հիմնական կազմը համալրվում է այլ դպրոցներից:

Փորձագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին նկատվում է դիմորդների թվի դինամիկ աճ, հատկապես «Նախադպրոցական կրթություն» և «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտությունների գծով: Քոլեջի ներկայացուցիչների գնահատմամբ, այս աճը պայմանավորված է տվյալ մասնագիտությունների նկատմամբ աշխատաշուկայի պահանջարկով, դրանց արդիականությամբ և դիմորդների հետաքրքրվածությամբ: Ներկայումս քոլեջում սովորում է 419 ուսանող:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել՝ սեփական դիմումի համաձայն, երկրից երկարաժամկետ բացակայելու, աշխատանքի և ուսուցման հետ անհամատեղելիության, ուսման անբավարար առաջադիմության, կարգապահական կանոնների խախտման և այլն:

Հեռացումների քանակը նվազեցնելու նպատակով քոլեջում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ և քննարկումներ ուսանողների ծնողների հետ: Եթե պարզվում է, որ ուսանողի բացակայության պատճառը մասնագիտության ոչ ճիշտ ընտրությունն է, նրան հնարավորություն է տրվում փոխել բաժինը: Վերջին 5 տարվա ընթացքում վերոնշյալ պատճառներով դուրս մնացած ուսանողների թիվը 9 հոգի է:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է դասախոսների և կազմակերպիչի աջակցությամբ: Կրթական կարիքների վերհանման հիմնական մեխանիզմներն են հարցումները, կլոր սեղան քննարկումները, ֆոկուս խմբերը և բլոգներում

հարցադրումների ներկայացումը: Նախագծային աշխատանքների շրջանակներում ուսանողների կողմից իրականացվող հարցումները նույնպես ներառված են կրթական կարիքների վերհանման գործընթացում:

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր դեր է խաղում նաև Ուսանողական խորհուրդը (ՈՒԽ): Մասնավորապես, ՈՒԽ-ն, ուսանողների առաջարկների հիման վրա, կազմակերպում է հանդիպումներ և քննարկումներ ոլորտում հայտնի մասնագետների հետ:

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնք չունեն հստակ ժամանակացույց, սակայն ուսանողները կարող են մշտապես դիմել դրանց: Քոլեջի կողմից իրականացված հարցումների համաձայն, ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների անցկացումը, և 94%-ը ակտիվորեն մասնակցում է դրանց: Այնուամենայնիվ, ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ չեն կազմակերպվում: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվել է, որ դասախոսները անհրաժեշտության դեպքում պատրաստակամ են աջակցելու ուսանողներին և պատասխանելու նրանց հարցերին՝ ապահովելով անհատական մոտեցում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Առկա չէ վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույց: Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարավածությունը, ըստ որի ուսանողների 100%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 90%-ը բավարարված է այդ ծառայություններից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով կրթահամալիրում առկա է կարիերայի պատասխանատու, որն իրականացնում է նաև քոլեջի գործառույթներով պայմանավորված գործընթացներ: Կրթահամալիրի կարիերայի պատասխանատուն քոլեջում ևս կատարում է որոշ գործողություններ, որոնք ներառում են շրջանավարտների հետ կլոր սեղան քննարկումների կազմակերպում, էլեկտրոնային փոստի բազայի միջոցով նրանց հետ կապ հաստատում: Բացի այդ, նա և ՈՒԽ-ի անդամները միասին ներքին և արտաքին շահակիցների շրջանում հարցումներ են անցկացնում: Հարկ է նշել, որ քոլեջը տեսնում է կարիերայի պատասխանատուի հաստիքի անհրաժեշտությունը:

Քոլեջը կնքել է շուրջ 5 պայմանագրեր և հուշագրեր հաստատությունների հետ՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով: Կարիերայի պատասխանատուն պարբերաբար իրազեկում է շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին, այդ թվում՝ կրթահամալիրում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Սակայն կարիերայի պատասխանատուն դեռևս չի իրականացրել իր գործունեության արդյունքների վերլուծություն: Վերջին հինգ տարիների ընթացքում շրջանավարտների հետագծի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 516 շրջանավարտներից 54-ը շարունակում են ուսումը բուհերում, 426-ը աշխատում են, որոնցից 261-ը՝ իրենց մասնագիտությամբ: Զբաղվածության ապահովման առումով լավագույն արդյունքներն ունեն «Նախադպրոցական կրթություն» և «Լուսանկարչական գործ» մասնագիտությունները: Փորձագիտական այցի ընթացքում պարզվել է, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների տվյալների բազան, որն ունի ինքնաշխատ բնույթ:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով նրանց տրվում են հետազոտական առաջադրանքներ: Բացի այդ, ուսանողները կարող են իրենց կամքով և նախասիրություններով մասնակցել նախագծային աշխատանքներին, որոնք դասընթացների և մոդուլների շրջանակներում նախատեսված չեն: Հետազոտական աշխատանքի թեմաները կարող են ընտրվել դասախոսների առաջարկած ցանկից կամ առաջարկվել ուսանողների կողմից և հաստատվել մասնախմբերում: Ուշագրավ է, որ բոլոր առաջադրանքների կատարման գործընթացում գերակշռում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

Ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) բաղկացած է 11 անդամից, որոնց ընտրությունը կատարվում է քվեարկությամբ: Յուրաքանչյուր կուրս քվեարկության միջոցով ընտրում է իր ներկայացուցչին, իսկ անդամների մեծամասնության ձայներով ընտրվում է խորհրդի նախագահը:

ՈՒԽ-ն իր նախատեսած միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում, թեև միջոցառումների իրականացման հստակ ժամկետներ չեն նշվում: ՈՒԽ-ի գործունեությունը ներառում է սեմինարների կազմակերպում, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի շարունակական կառավարում, դիմորդների ներգրավման աշխատանքներ, հասարակական-կամավորական նախագծերի իրականացում, ազգագրական նախագծերի կազմակերպում, ինչպես նաև ուսանողների արտադրանքի՝ մասնավորապես գինու և այլն, վաճառքի ուղիների որոնում: ՈՒԽ նիստերն արձանագրվում են:

ՈՒԽ-ն ուսանողների խնդրանքով հրավիրում է ոլորտի մասնագետներին, հայտնի մտավորականների և մշակութային գործիչների, տարեցների տան անդամների փափուկ հմտությունների զարգացմանը միտված՝ կազմակերպում են այցելություններ քոլեջի լաբորատորիաներ և ստեղծագործական կենտրոններ, իրականացնում են ծառատունկ, ազգային ծիսակարգի կիրառմամբ իրականացնում են բերքահավաք, մեղրաքամ, լավաշի թխում, ինչպես նաև մանսակցում են տարբեր էքսպոների, աշխատանքի տոնավաճառների և այլն:

Փորձագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ Ուսանողական խորհրդի նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ դրանց պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել: Միաժամանակ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների վերաբերյալ իրազեկման միջոցառումները բավականին ակտիվ են: Իրազեկումը հիմնականում իրականացվում է սոցիալական ցանցերի միջոցով, որոնցով ուսանողներին տեղեկացնում են բոլոր կազմակերպվող միջոցառումների, սեմինարների և քննարկումների մասին:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների արդյունավետությունը գնահատվում է հարցումների և քննարկումների միջոցով: Հարցման արդյունքների վերլուծություններից պարզ է դառնում, որ ուսանողների կողմից վերհանված հիմնական խնդիրները վերաբերում են ուսումնական արշավների կազմակերպմանը, մտավորականների և մշակութային գործիչների հետ հանդիպումների պակասին, ինչպես նաև կամավորական աշխատանքներին, որի արդյունքում էլ քոլեջը սկսել է ըստ ուսանողների պահանջի ավելի հաճախ հրավիրել ոլորտի մասնագետներ և մտավորականներ :

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողների հավաքագրման գործընթացում ներգրավված են ուսանողները և դասախոսները, ինչը նպաստում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և նոր ուսանողների հետաքրքրության մեծացմանը: Ուսանողների անմիջական մասնակցությունը գործընթացում ապահովում է գործնական և ներառական մոտեցում, ինչը ստեղծում է վստահելի և մոտիվացնող միջավայր ապագա դիմորդների համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ կրթահամալիրն իրազեկման ակտիվ միջոցառումներ է սկսել իրականացնել սոցիալական մեդիայի միջոցով, ինչն ապահովում է ուսանողների և հանրության լայն շրջանակների տեղեկացվածության բարձրացմանը կրթական հնարավորությունների մասին: Սոցիալական հարթակներում իրականացվող գործունեությունը մեծացնում է տեսանելիությունը և հնարավորություն տալիս հասանելի դառնալ երիտասարդ լսարանի համար: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՈՒԽ նիստերում ուսանողների իրավունքների պաշտպանությանն ուղղված հարցերի քննարկումը կարող է նպաստել ուսանողների շահերի ավելի արդյունավետ ներկայացմանը և խնդիրների արագ լուծմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում իրականացվում են ուսանողների կարիքների գնահատման տարբեր մեխանիզմներ, ինչպիսիք են հարցումները, կլոր

սեղան քննարկումները և ֆոկուս խմբերը: Այս մեխանիզմները հնարավորություն են տալիս պարզել ուսանողների ակնկալիքները և առաջնահերթ խնդիրները, ինչը կարևոր է ուսումնական գործընթացների շարունակական բարելավման համար: Չնայած դեռևս տեսանելի չէ այդ մեխանիզմների արդյունքում կրթական ծառայությունների բարելավման նախադեպեր, սակայն դրանք հետագայում կարող են նման նպաստ ունենալ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների կարիքների գնահատման մեխանիզմների կիրառման արդյունավետության ավելի սերտ վերահսկումը կարող է նպաստել այնպիսի խնդիրների բացահայտմանը, որոնք ներկայումս մնում են չլուծված: Համակարգված վերլուծությունը կօգնի ճիշտ ուղղորդել կրթական գործընթացների բարելավման ջանքերը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, ինչը նպաստում է ուսանողների ակադեմիական հաջողությունների բարելավմանը: Խորհրդատվությունները հնարավորություն են տալիս ուսանողներին ստանալ անհատական մոտեցում և վեր հանել դժվարություններն առարկայական առումով: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների համար օտար լեզուների լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը կարող է նպաստել նրանց մասնագիտական և ակադեմիական հմտությունների զարգացմանը: Օտար լեզուների կարողությունների բարելավումը կարող է մեծացնել ուսանողների մրցունակությունը թե՛ աշխատաշուկայում, թե՛ կրթական առաջխաղացման հնարավորություններում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան, ինչն ապահովում է շրջանավարտների հետագա աշխատանքի և կարիերայի զարգացման հետադարձ կապի ապահովմանը: Թարմացված տվյալները հնարավորություն են տալիս իրականացնել նպատակային ծրագրեր շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի ապահովման ուղղությամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ կարիերայի պատասխանատուի գործունեության արդյունքների վերլուծության իրականացումը կարող է նպաստել ծառայությունների առավել արդյունավետ կազմակերպմանը և շրջանավարտների զբաղվածության մակարդակի բարձրացմանը: Կարիերայի պատասխանատուի աշխատանքի գնահատումը կօգնի հայտնաբերել ուժեղ և թույլ կողմերը և մշակել նոր մոտեցումներ շրջանավարտների աջակցման ուղղությամբ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ուսանողներին ներգրավում է հետազոտական աշխատանքներում, ինչը նպաստում է նրանց վերլուծական և պրակտիկ հմտությունների զարգացմանը, ինչպես նաև կարող է ապահովել շրջանավարտների ավելի նպատակային մասնագիտական առաջընթացը և հաջող ինտեգրումը աշխատաշուկայում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը իրականացրել է ուսանողների հավաքագրման նպատակով բազմաբնույթ միջոցառումներ, ապահովել է դիմորդների թվի դինամիկ աճ, կիրառել է ուսանողների կրթական կարիքների գնահատման մեխանիզմներ, բավարարում է ուսանողների կարիքները, ակտիվացրել է Ուսանողական խորհրդի աշխատանքները և իրականացրել է կարիերայի աջակցման ծառայություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի 2021-2027թթ.-ի Ռազմավարական ծրագրի և 2021-2025թթ.-ի Զարգացման ծրագրի՝ ՄՈՒՀ-ը նպատակադրել է զարգացնել Քոլեջի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը: Սահմանված նպատակն իրագործելու համար մատնանշվել են հետևյալ քայլերը՝ դասավանդողների և ուսումնաօժանդակ կազմը համալրել ոլորտի որակյալ մասնագետներով, կատարելագործել նրանց մասնագիտական որակները, ապահովել շարունակ զարգացող, նորարական մոտեցումներով, տեխնոլոգիական միջոցներով զինված, ինքնուրույնության, ինքնաբուխ գործունեության զարգացման համար անհրաժեշտ պայմաններ՝ կարևորելով դասավանդողի անհատական, շարունակական կրթության իրավունքը:

Քոլեջի դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մանկավարժական աշխատողի ընդունելության կարգի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում է մրցույթ, որին մինչ այժմ հիմնականում 1-3 թեկնածու է մասնակցել: Քոլեջի դասախոսական կազմի ընտրության մրցույթը 4 փուլով է ընթանում՝ 1-ին՝ քառօրյա վերապատրաստում, որի ընթացքում թեկնածուն «կամավորների մուտքի ճամաբար»-ի ներքո հանդիպում է տնօրենի, փոխտնօրենների և այլ ստորաբաժանումների պատասխանատուների հետ, մենթորների օգնությամբ մշակում և ներկայացնում է նախագծային աշխատանք, սովորում է բլոգավարություն, մշակում իր անհատական էջը: Քառօրյա «կամավորների մուտքի ճամաբար»-ին հաջորդում է 2 շաբաթից մինչև 1 ամիս տևող կամավորական աշխատանքը, որի ընթացքում թեկնածուն սեբաստացիների հետ մասնակցում է ճամփորդության, արշավների, որի ընթացքում ավագ գործընկերների կողմից գնահատվում է թեկանածու դասախոսի միջանձնային հաղորդակցման կարողությունները և հմտությունները: Կամավորական աշխատանքին հաջորդում է փորձաշրջանը, որը կարող է տևել մինչև 3 ամիս: Փորձաշրջանի ընացքում թեկնածուն վարում է դասընթաց, կարող է նույնիսկ մեթոդական հոդված տպագրել Քոլեջի «Դպիր» ամսագրում, իրականացնել ուսանողների և դասախոսների հետ նախագծեր և այլն:

Ներկայումս քոլեջում աշխատում են 48 դասախոսներ, որոնցից 7-ը գործատուներ են: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մանկավարժական աշխատողի պաշտոնական հրահանգով դասախոսների համար սահմանված են հստակ պահանջներ, սակայն դրանք չեն տարանջատվում ըստ կրթական ծրագրերի:

2023թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ դասախոսական կազմի 46 անդամն ունեն բարձրագույն կրթություն, 2-ը՝ միջին մասնագիտական կրթություն, իսկ 1-ը ՀՀ ԳԱԱ հայցորդ է: 46 դասախոսներ աշխատում են հիմնական հաստիքով, 2-ը՝ համատեղող: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցուց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին, բացառությամբ առանձին դեպքերի, օրինակ՝ ինժեներ կոնստրուկտոր տեխնոլոգը դասավանդում է «Գրադարանային գործունեության տեղեկատվական տեխնոլոգիաներ» և «Գրադարանային սպասարկման հմտություններ» մոդուլները, իսկ պատմության ուսուցչի որակավորմամբ դասախոսը՝ «Իրավունքի հիմունքներ» և «Ծառայությունների կազմակերպման հիմքերը և իրավական կարգավորումը» մոդուլները: Դասախոսական կազմի ներկայացուցիչներն առնվազն վարում են 2 և առավելագույնը՝ 16 մոդուլ:

2023 թվականին քոլեջում հաստատվել է «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման» ընթացակարգը, որի նպատակներն են մասնագիտական կարողությունների զարգացումը, որակների բարձրացումը, հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը, ինչպես նաև սովորողների կրթության որակի բարձրացումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ըստ նույն ընթացակարգի քոլեջում դասախոսական կազմի գնահատման հետևյալ մեխանիզմներն ու ձևերն են կիրառվում՝ Վարչական գնահատում, որն իրականացվում է դասախոսի մասնագիտական որակների և

աշխատանքի ամենամյա գնահատում՝ մասնագիտական զարգացման աշխատանքներին մասնակցության, ուսումնական այլ հարթակներում գործունեության, «Դպիր» ամսագրում տպագրությունների, բլոգներում ուսումնական նյութերի տեղադրման քանակի և որակի հաշվառմամբ, գործընկերային գնահատում՝ իրականացվում է մանկավարժական խորհրդի քննարկումների արդյունքում, անհատ գործընկերների կարծիքների հաշվառմամբ, սովորողի/ուսանողի գնահատում՝ Իրականացվում է հետադարձ կապի միջոցով՝ առցանց հարցումների միջոցով:

Քոլեջի դասավանդողների աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգում ընդգրկված է նաև նրանց անձնային որակների գնահատումը՝ արշավներին մասնակցության հիմքով:

Դասավանդողների գնահատման մեխանիզմների կիրառման արդյունքում առավելագույն միավորներ հավաքած դասավանդողներին տրամադրվում են անվանական մրցանակներ՝ ներառյալ աշխատավարձի հավելավճարներ, լրավճարներ, պարգևավճարներ կամ խրախուսանքի այլ ձևեր:

Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվեց, որ դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակների գնահատման նպատակով Քոլեջում կիրառվում է ներքին ատեստացիա: Ատեստացիայի պահանջներն ու չափանիշները (օրինակ՝ «Դպիր» ամսագրում տպագրություններ, թարգմանություններ, նախագծային աշխատանքներ, բլոգում հրապարակումներ) հաղթահարելու դեպքում նախատեսվում է դասախոսների աշխատավարձի բարձրացում: Այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ մինչ այժմ ներքին ատեստացիայի շեմը հաղթահարել է միայն մեկ դասավանդող՝ Կառավարման խորհրդի քարտուղարը:

Քոլեջում դասալսումների գործընթաց որպես այդպիսին չի իրականացվում, ինչը պայմանավորված է քոլեջում ձևավորված ուսուցման անհատական մոտեցմամբ: Դասապրոցեսն իրականացվում է բաց, թափանցիկ միջավայրում, Քոլեջի շենքային ներքին հարդարման պայմանները հարմարեցված են այդ նպատակին՝ լսարանները միջանցքից և միմյանցից բաժանված են թափանցիկ ապակիներով: Այս կառուցվածքը հնարավորություն է տալիս ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին անմիջականորեն դիտարկել դասապրոցեսը՝ ապահովելով ուսումնական գործընթացի թափանցիկություն և հաղորդակցման ազատություն: Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվեց, որ ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները պլանավորված են և կանոնակարգված, իսկ միջոցառումների մասին տեղեկատվությունը հասանելի է շահակիցներին: Քոլեջում յուրաքանչյուր երեք շաբաթը մեկ իրականացվում են մասնագիտական վերապատրաստումներ, որոնց մասնակցում են ոչ միայն քոլեջի դասախոսներ, այլև արտաքին շահակիցներ:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ֆինանսական միջոցներ նախատեսվում դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Դասախոսները պարբերաբար մասնակցում են ինչպես ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված, այնպես էլ այլ մասնագիտական և մեթոդական վերապատրաստումների: Վերջին հինգ տարիների ընթացքում քոլեջի 48 դասախոսներից մոտ 12-ը մասնակցել են վերապատրաստումների: Վերապատրաստումները հիմնականում վերաբերել են մասնագիտական առարկայի դասավանդման մեթոդաբանությանը, երեխաների իրավունքների պատպանության հիմնախնդիրներին, կոռուպցիայի դեմ պայքարին, անգլերեն լեզվի զարգացմանը և այլն:

ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների արդյունքում երեք դասախոս մասնակցել են կամավոր ատեստավորմանը, հաղթահարել այն և վաստակել 90 և ավել միավորներ:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 40 է: Դասավանդողների կազմի կայունության ապահովումը

կրթահամալիրի կադրային քաղաքականության զարգացման ռազմավարական կարևոր, երկարաժամկետ ուղղություններից է՝ ուղղված բարձր որակավորում ունեցող կազմի ձևավորմանը, պահպանմանը և զարգացմանը: Այն սահմանում է հետևյալ մոտեցումները՝ մասնագետի թիրախային ընտրություն (այդ թվում՝ Կադրերի բանկից), աջակցող աշխատանքային մշակույթ և միջավայր, մենթորություն, վարձատրության ճկուն համակարգ՝ լրավճար, հավելավճար, պարգևավճար, մասնագիտական գործունեությունից բավարարվածության բարձրացում, մասնագիտական զարգացման հնարավորություններ, բաց համագործակցություն, ինստիտուցիոնալ աջակցություն, կրթական բաց համայնքի ստեղծում: «Նախադպրոցական կրթություն» ՄԿԾ-ի մասնագիտական դասընթացների ուսումնական գործընթացը ապահովող դասավանդողների թիվը 8-ն է, «Համակարգչային գեղարվեստական նախագծում» կրթական ծրագրում՝ 4-ը, «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» ՄԿԾ-ում ՝ 8-ը: Վերջին չորս ուսումնական տարիների ընթացքում քոլեջում որպես դասավանդող աշխատանքի է ընդունվել 12 մասնագետ, իսկ ազատվել՝ 4-ը:

Քոլեջում գործում է դասախոս թեկնածուների բազա՝ Կադրերի բանկ, որի համալրման գործընթացը իրականացվում է պարբերական հիմունքներով: Յուրաքանչյուր ամիս Քոլեջի պաշտոնական կայքէջում տեղադրվում են վերապատրաստումների վերաբերյալ հայտարարություններ, որոնց կարող են դիմել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները: Վերապատրաստումների նպատակն է նոր մասնագետների ներգրավումը և մասնագիտական հմտություններով, կարողություններով վերազինումը: Վերապատրաստումների փուլը հաջողությամբ ավարտելուց հետո, մասնակիցները ներառվում են «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Կադրերի բանկում, որը ծառայում է որպես ապագա դասավանդող թեկնածուների բազա:

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցներն իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը հետևողական է դասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատման և խրախուսման գործընթացին. Օրինակ՝ ներքին ատեստացիայի փուլը հաղթահարած դասավանդողի աշխատավարձն էական փոփոխման է ենթարվել: Բացի այդ տարբերակվող աշխատավարձ է սահմանվում նաև աշխատանքային ստաժի հիման վրա. 3 և 5 տարի ավելի ստաժ ունեցող դասավանդողների աշխատավարձերը նույնպես ենթակա են բարձրացման՝ հաստիքի համաձայն:

Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների, ինչպես նաև մասնագիտական կենտրոնների, լաբորատորիաների պատասխանատուների գործառույթները, իրավասություններն ու պարտականությունները սահմանվում են «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պաշտոնական հրահանգներով և աշխատանքային պայմանագրերով, որոնք շահակիցներին հասանելի են կրթահամալիրի պաշտոնական կայքէջում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ քոլեջն իր նպատակները հիմնականում փորձում է իրականացնել քոլեջի աշխատակիցների ներուժի օգնությամբ, սակայն մի շարք գործընթացների ուղղությամբ կարևոր ներդրում ունեն կրթահամալիրի աշխատակիցները: Այնուամենայնիվ, քոլեջը որոշ համալրումների անհրաժեշտություն է տեսնում, մասնավորապես կարիերայի պատասխանատուի, որակի ապահովման պատասխանատուի:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ռազմավարական ծրագրերով նախատեսել է մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացում՝ ներառելով դասախոսների մասնագիտական որակների բարելավում, նորարարական լուծումների կիրառություն և շարունակական կրթության հնարավորություն: Դրական է նաև, որ քոլեջի դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է քառափուլ մրցույթի միջոցով, գործընթացը նպաստում է որակյալ մասնագետների ներգրավմանը և նրանց անձնային ու մասնագիտական հմտությունների համակողմանի գնահատմանը, ինչպես նաև ըստ

քոլեջի պահանջների համապատասխան մասնագիտական և մանկավարժական հմտությունների ձևավորմանը:

Թեև պաշտոնական հրահանգով ամրագրվել են դասախոսական կազմին ներկայացվող անձնային, մանկավարժական և մասնագիտական որակների պահանջներ, սակայն դրանք տարանջատված չեն ըստ մասնագիտական կրթական ծրագրերի առանձնահատկությունների: Նման պահանջների առկայությունը կարող է նպաստել ուսումնական գործընթացի առավել նպատակային կազմակերպմանը և կրթական ծրագրերի առանձնահատկություններին համապատասխան դասավանդման ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում կիրառվում են դասախոսական կազմի գնահատման բազմակողմանի մեխանիզմներ, ներառյալ վարչական, գործընկերային և ուսանողական գնահատում, ինչը նպաստում է դասավանդողների մասնագիտական զարգացմանը և պատասխանատվության բարձրացմանը: Դասավանդողների աշխատանքի արդյունքների հիման վրա խրախուսման միջոցառումների (հավելավճարներ, պարգևավճարներ) կիրառումը նպաստում է նրանց մասնագիտական գործունեության որակի բարձրացմանը և առաջընթացի ապահովման հնարավորություն ստեղծում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին ատեստացիայի փուլը հաղթահարած դասախոսների փոքր թիվը սահմանափակում է համակարգի ընդհանուր արդյունավետության գնահատումը: Ատեստացիայի գործընթացում դասախոսների թվաքանակի ավելացումը կարող է նպաստել նրանց մասնագիտական, մանկավարժական, ընդհանրական հմտությունների, կարողությունների բարելավմանը, զարգացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ դասախոսական կազմի պարբերաբար գնահատման մեխանիզմների և գործիքների արդյունավետությունը կարիք ունի գնահատման և վերլուծության, ինչը կարող է նպաստել այդ մեխանիզմների կատարելագործմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում է Կադրերի բանկ, որը պարբերաբար համալրվում է վերապատրաստումների միջոցով, ինչը կարող է նպաստել դասախոսական կազմի կայունության ապահովմանը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի, դասավանդողների միջին տարիքը կազմում է 40: Դասախոսական կազմի կայունության ապահովման համար կիրառվող մոտեցումները՝ մենթորություն, վարձատրության ճկուն համակարգ և շարունակական զարգացման հնարավորություններ, կարևոր են և կարող են նպաստել դասախոսների ներգրավվածության և մասնագիտական աճի ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի լսարանների թափանցիկ կառուցվածքը թույլ է տալիս անմիջականորեն դիտարկել դասապրոցեսը՝ առանց դասալսումների կազմակերպման անհրաժեշտության, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի թափանցիկության ապահովմանը և դասավանդման որակի մշտադիտարկման արդյունավետությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում պարբերաբար կազմակերպվում են մասնագիտական վերապատրաստումներ, ինչը նպաստում է դասախոսական կազմի մասնագիտական որակների և ուսումնական գործընթացում նորարարական մոտեցումների կիրառման խթանմանը, ուստի կարևոր է դրանց շարունակականության ապահովումը:

Դրական է, որ դասախոսների մեծամասնության մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում արձանագրվել են անհամապատասխանություններ, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ուսումնական գործընթացի որակի վրա՝ նվազեցնելով մասնագիտական գիտելիքների և հմտությունների ամբողջական փոխանցման արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը հիմնականում ապահովված է ՌԾ նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսով և դրական է համարում նրանց կարողությունների զարգացմանն ուղղված մշտական գործընթացները, այնուամենայնիվ,

որոշ կադրային համալրումները կարող են նպաստավոր լինել (որակի ապահովման, կարիերայի ծառայություններ) ըստ ՌԾ նպատակների անհրաժեշտ զարգացումների ապահովման, գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջն ապահովված է համապատասխան մասնագիտական որակներով օժտված դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով, գործում են նրանց ընտրության, ձևավորման, ազատման, խրախուսման համար համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր, գործում են դասախոսական կազմի կարիքների վերհանման, նրանց կարողությունների զարգացման, կատարելագործման և առաջընթացի ապահովման որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը համապատասխանում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի որդեգրած քաղաքականության անխախտ տարր է հանդիսանում հետազոտական գործունեության իրականացումը: Ըստ 2021-2027 թթ.-ի ՌԾ-ի քոլեջը որպես նպատակ սահմանել է. քոլեջի գործունեության շարունակական զարգացում: Քոլեջը սահմանել է հինգ հիմնական նպատակ, որոնք ընդգրկում են կրթական ծրագրերի զարգացումը, հետազոտական գործունեության խթանումը, նորարարական միջավայրի ձևավորումը, մասնագիտական ուսումնասիրությունների կատարելագործումը և գիտահետազոտական աշխատանքների շարունակական օժանդակությունը:

Ուսանողների և դասավանդողների մասնագիտական զարգացման նպատակով ստեղծվել և կահավորվել են հետազոտական լաբորատորիաներ, որոնցում իրականացվող հետազոտությունների արդյունքները կիրառվում են կրթահամալիրի և Քոլեջի կարիքների բավարարման նպատակով: Սակայն, Քոլեջը չի հավաքագրել տվյալներ ըստ տարիների՝ հետազոտական աշխատանքների համար կատարված ծախսերի վերաբերյալ, և այս ուղղությամբ վերլուծություններ չեն իրականացվել: Ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսները հետազոտական գործունեության համար տրամադրվել են կրթահամալիրի կամ հիմնադրամի կողմից այն դեպքերում, երբ Քոլեջի բյուջեն բավարար չի եղել:

Քոլեջում հետազոտությունը իրականացվում է բոլոր մասնագիտություններով՝ ընդգրկելով մասնագիտական և ոչ մասնագիտական մոդուլները, ինչպես նաև միջոլորտային կապերը: Կիրառվում են սովորող-սովորեցնող, նախագծային, հետազոտական և բլոգային ուսուցման մոդելներ: Ուսանողները կատարում են նախագծային և դիպլոմային հետազոտական աշխատանքներ, համապատասխան Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի պահանջներին: Քոլեջն ունի հետազոտական նախագծային աշխատանքների համար հստակ սահմանված պահանջներ:

«Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի քոլեջ»-ում ուսումնառությունը կազմակերպվում է նախագծային ուսուցմամբ, ինչը հանդիսանում է շուրջտարյա հետազոտական գործունեություն: Նախագծային ուսուցման թեմաներն, ըստ ՄԿԾ-երի և դասավանդվող մոդուլների, բազմազան են և ներառում են հումանիտար, բնագիտական, հասարակագիտական, ձեռնարկատիրական, արվեստի, մշակութային-ծիսական, ռոբոտաշինությանը, ծրագրավորմանը վերաբերող և այլ ոլորտներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին դասախոսների կողմից կազմվում են նախագծային աշխատանքների փաթեթներ և դրանց կատարման հստակ ժամանակացույցեր: Ուսանողները կարող են ընտրել նախագծային, հետազոտական աշխատանքների թեմաներն արդեն իսկ հաստատված ցանկերից կամ առաջարկել իրենց նախասիրությունների շրջանակներում: Ընդ որում նախագծային աշխատանքները կարող են կատարվել ինչպես մեկ ուսանողի կողմից, այնպես էլ թիմի ձևավորման սկզբունքով: Բացի այդ կարող են լինել ինչպես որոշակի մոդուլի շրջանակում, այնպես էլ միջոլորտային: Քոլեջում առկա է հաստատված «Մասնագիտական նախագծային գործունեության կարգ», որում սահմանվում են նախագծերի կատարման փուլերը և հստակ ձևավորվում վերջնարդյունքի նկատմամբ առաջադրվող պահանջները:

Փորձագիտական խմբի դիտարկումներից պարզ դարձավ, որ կատարված նախագծային և հետազոտական աշխատանքներն ուսանողների կողմից հրապարակվում են իրենց բլոգներում, ինչը հասանելի է նաև հասարակության համար: Դասախոսները և ուսանողները, երբեմն նաև համատեղ, իրականացրած հետազոտական աշխատանքները տպագրում են կրթահամալիրի «Դպիր» էլեկտրոնային ամսագրում: Վերջին հինգ տարիների կտրվածքով ամսագրում հրապարակվել են շուրջ 60 անուն հոդված՝ տպագրված քոլեջի դասախոսների կողմից: Նշենք, որ ամսագրերում հոդվածները տպագրվում են խմբագրական կազմի որոշման արդյունքում: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի դասավանդողները մոտիվացված են հետազոտական աշխատանք իրականացնելու: Ընդ որում դա պայմանավորված է նախ քոլեջում ձևավորված միջավայրով, որտեղ աշխատակիցները ձգտում են անընդհատ զարգացնել իրենց հմտությունները, կիրառել նոր արդյունավետ մեթոդներ և ներկայացնել ու տարածել լավ փորձը: Բացի այդ հետազոտական աշխատանքների իրականացման համար քոլեջում գործում են խրախուսման մեխանիզմներ: Մասնավորաբար, տպագրված աշխատանքի համար ուսանողներին և դասախոսներին տրվում է պարգևավճար:

Հարկ է նշել, որ քոլեջի աշխատակիցների կողմից ամսագրում տպագրված հետազոտական աշխատանքները հենված են կիրառվող փորձի վրա և անմիջական կիրառություն ունեն կամ դասավանդման գործընթացում կամ վարչական, կառավարչական: Մասնավորաբար՝ «Կամավորական գործունեությունը «Սովորող-սովորեցնող» նախագծի զարգացում», «Հեռավար ուսուցում. այլընտրանքային իրականություն», «Մասնագիտական զարգացման և ատեստավորման մասին», «Անգլերեն դասավանդողի ուղեցույց: Լեզվական խաղեր», «Մուտք» ճամբարը՝ որպես դասավանդողի ընտրության այլընտրանքային գործիք:

Դասախոսական կազմը նաև հետամուտ է մասնագիտական ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրման հարցում: Օրինակ, կիրառվում է Ֆրանկֆուրտի փորձը լուսանկարչության մոդուլի սահմաններում: Հարկ է նշել, որ բոլոր հետազոտական աշխատանքները, որոնք իրականացվում են ուսանողների կողմից, հրապարակվում են բլոգներում, հասանելի են բոլորի համար, բացի այդ առկա է հետադարձ կապի հնարավորություն և յուրաքանչյուրը կարող է մեկնաբանություն ներկայացնել:

Ուսանողների հետազոտական աշխատանքները ներառում են միջմոդուլային և առարկայական կապեր, որոնք ձևավորվում են դասավանդողների համագործակցության և ոլորտային արդի պահանջների ու ուսանողների նախասիրությունների համադրման արդյունքում:

Մասնավորաբար, «Նախադպրոցական մանկավարժություն» մասնագիտական դասընթացի շրջանակում նախագծային աշխատանքի թեմաներն առաջադրելիս կարևորվում են դաստիարակության հիմնախնդիրները, նախադպրոցական երեխաների տարիքային առանձնահատկությունները (օրինակ՝ Վերլուծել տարիքային կոնկրետ փուլում երեխաների զարգաց-ման և դաստիարակության առանձնահատկությունները): «Մանկական գրականություն» դասընթացի շրջանակում կարևորվում են երեխայի բազմաբնույթ մտածողության զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրումը (օրինակ՝ Ներկայացնել

գրական նյութի գործնական աշխատանք երեխայի գործու-նեության տարբեր ձևերով՝ նկարչություն, տեխնոլոգիա, երգպար, թատրոն, այլ):

Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ մասնագիտության շրջանակներում Հայաստանի հյուրանոցները մասնագիտական նախագծի շրջանակներում ուսանողները ընտրել են իրենց նախընտրելի մարզը և կատարել ուսումնասիրություն: «Ղեկավարման հմտություններ, հոգեբանություն և սպասարկման էթիկա» մոդուլի շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են ղեկավարման հմտությունները վերջինիս հոգեբանական կողմը, ապա հետազոտում կառավարիչների, նրանց կառավարման ոճերը մեկնաբանում բլոգում, ուսանողները նաև հետազոտում են մարդկանց իրենց արտաքին տեսքով՝ համեմատելով մարմնի ձևը ղեկավարման որևէ ոճի հետ: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտական կրթական ծրագրում դասավանդվող մասնագիտական մոդուլների շրջանակներում նախագծային աշխատանքների կատարման ընթացքում շեշտադրվում է միջառարկայական կապը, օրինակ կազմակերպությունների համար նախագծվող լոգոների հիմքում կիրառվում են մինչ այդ ուսումնասիրված մոդուլներում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները, հիմնավորվում ընտրված դետալների գույնն ու համադրությունը լոգոյի բովանդակային ներկայացման հետ:

Հարկ է նշել, որ ուսանողների կողմից իրականացված հետազոտակա աշխատանքները ներառում են նաև վերլուծություններ և եզրակացություններ:

Փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողներն հնարավորություն ունեն հետազոտական աշխատանք կատարելու նաև մոդուլների պարտադիր պահանջներից դուրս՝ կամավոր ներգրավվելով տարբեր խմբերում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում հատուկ ուշադրություն է հատկացվում ակադեմիական ազնվությանը և գրագողության բացառմանը: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կողմից սահմանված են ակադեմիական ազնվությունն ապահովող քաղաքականություն: Ակադեմիական ազնվության ապահովմանը միտված օգտագործվում են ինչպես արտաքին գրախոսման մոտեցումը, այնպես էլ արհեստական բանականությունը՝ որպես բացահայտման գործիք: Փորձագիտական այցից պարզվեց, որ այդ գործիքները հնարավորություն են ընձեռել բացահայտելու առանձին դեպքեր, սակայն դրանք հստակ արձանագրում չեն ունեցել:

Հարկ է նշել, որ տարբեր լաբորատորիաներում իրականացվող մի շարք աշխատանքներ պայմանավորված են քոլեջի և կրթահամալիրի կարիքներով: Այս հետազոտական-արտադրական աշխատանքներում ներգրավվում են ինչպես դասավանդողները, այնպես էլ ուսանողները: Մասնավորաբար, կարի արտադրության լալաբորատորիայում ուսումնասիրել են նախադպրոցականների նախասիրությունները, հոգեբանական առանձնահատկությունները և պատրաստել միջոցառման համար անհրաժեշտ հագուստ, զարդարման պարագաներ: Ինժեներատեխնիկական սարքաշինության կենտրոնում ուսանողները ջերմոցի մոդել են մշակում, իսկ Ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքեր են պատրաստում: Գինու, կարի, զարդակիրառական արվեստի լաբորատորիաներում նախագծային աշխատանքի շրջանակներում ուսանողները ստեղծում են արտադրանք, որոնք ներկայացվում են տարբեր ցուցահանդես-վաճառքներին և տոնավաճառներին: Ուսանողները ուսումնասիրությունների արդյունքում է նաև մշակվել ու կիրառվում արտադրվող գինու 22ի պիտակը:

Հետազոտական աշխատանքների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանցում հաճախ թույլ է արտահայտված տեսական վերլուծության մասը, կամ ուսանողների համար որպես ուսումնասիրման աղբյուրներ կարող են հանդես գալ անհայտ ծագման աղբյուրներ կամ Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարանը և այլն: Հիմնականում առկա չեն գրականության ցանկ կամ աղբյուրների վերլուծություններ, տեսական որոշակի ուսումնասիրություններ: Մինչդեռ այս հանգամանքները կարևորվել են ըստ նախագծային, հետազոտական աշխատանքների նկատմամբ քոլեջի կողմից սահմանված պահանջների, որոնք արտահայտված են համապատասխան կարգերում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքների իրականացումը և համապատասխան հմտությունների զարգացումը դիտում է որպես ռազմավարական նպատակ և այս ուղղությամբ նկատելի է անընդհատ կատարվող աշխատանք: Ընդ որում փորձագիտական խումբը գնահատելի է համարում, որ նախագծային, հետազոտական աշխատանքների իրականացումը ուսումնական գործընթացի հստակ բաղադրիչ է և անխախտ տարր, որը անընդհատ բազմազանեցվում և կատարելագործվում է թե՛ իրականացման ձևերի, մոդելների և թե՛ թեմաների տեսանկյունից: Միաժամանակ հատկանշական է, որ քոլեջը վարում է այնպիսի քաղաքականություն, որ դասախոսների և ուսանողների կողմից իրականացվող հետազոտությունները նաև նպաստում են քոլեջի և կրթահամալիրի զարգացմանը: Ուստի փորձագիտական խումբը կարևորում է իրականացվող գործընթացների և քաղաքականության շարունակականությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում նախագծային հենքով ուսուցումը նպաստում է սովորողների հաղորդակցության հմտությունների կատարելագործմանը և մասնագիտական կարողությունների զարգացմանը, զարգացնում են քննադատական մտածելակերպը, ստեղծագործական ու վերլուծական կարողությունները: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսանողները կարողանում են իրենց հետազոտությունները վերածել իրական նախագծերի մասնավորաբար՝ արտադրական լաբորատորիաների միջոցով: Նաև դրական է, որ նախագծային աշխատանքները նպաստում են, որ տարբեր մոդուլների և մասնագիտությունների միջև ձևավորվում են կապեր, որոնք նպաստում են համալիր հետազոտությունների իրականացման: Փորձագիտական խումբը կարևորում է, որ նշված ուղղությամբ քոլեջում առկա լավ փորձը տարածելու ուղղությամբ աշխատանքներ իրականացվեն, քանի որ վերջինս կարող է նպաստել այլ միջին մասնագիտական հաստատություններում այսպիսի գործընթացների զարգացմանը: Միաժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտություններում գրականության վերլուծությունը, առավել ակադեմիական աղբյուրների կիրառումը կարող են առավել նպաստել հետազոտական աշխատանքների որակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում առկա են հետազոտական աշխատանքների հրապարակման մեխանիզմներ թե՛ «Դպիր» ամսագրում տպագրությամբ և թե՛ բլոգներում հրապարակմամբ: Ընդ որում գնահատելի է խրախուսման մեխանիզմների թափանցիկությունը ևս, ինչը հանգեցրել է քոլեջում հետազոտական աշխատանքների մշակույթի ձևավորմանը, դրա կարևորության գիտակցմանը: Փորձագիտական խումբը գնահատելի է համարում, որ դասախոսների և ուսանողների կողմից իրականացված հետազոտությունները նաև նպաստում են քոլեջի և կրթահամալիրի թե՛ ուսումնական և թե՛ կառավարչական գործընթացների շարունակական բարելավմանը, կարիքների բավարարմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում անընդհատ աշխատանքներ են իրականացվել հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, հետազոտական լաբորատորիաների, արհեստանոց-արվեստանոցների ապահովման համար, նաև կարևոր է քոլեջում գործող խրախուսման մեխանիզմներն այս ուղղությամբ, որոնք հանգեցրել են ուսանողների և դասախոսների մոտիվացված գործունեության: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ առավել հստակ ռազմավարական պլանավորումը, տվյալների հավաքագրումն ու վերլուծումը կարող են ապահովել գործընթացների արդյունավետության գնահատման մոտեցումների ներդրման և դրանց շարունակական առավել նպատակասլաց բարելավման և կայուն զարգացման երաշխիքների ապահովման՝ հենված տվյալահեն վերլուծությունների վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի հետազոտական ուղղությամբ սահմանված ռազմավարական նպատակներ, ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի ապահովման հստակ մոտեցում, հետազոտական աշխատանքների իրականացման ձևավորված մշակույթ, առկա են հետազոտությունների արդյունքների կիրառման մոդելներ, արդյունքներ,

հետազոտական աշխատանքների իրականացման խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև ուսանողների և դասախոսների հետազոտական արդյունքների ներկայացման և հրապարակման հնարավորություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը համապատասխանում է չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2021-2027թթ. ՌԾ-ի խնդիրներից է արդիականացնել ուսումնական գործունեությունն ապահովող լաբորատորիաները, արհեստանոց-արվեստանոցները, արտադրամասերը, ստեղծել նոր լաբորատորիաներ, արհեսատնոց-արվեստանոցներ, արտադրամասեր, ստեղծել զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման կենտրոն:

Քոլեջն ունի 4200 մ2 ընդհանուր մակերեսով տարածք, մեկ ուսանողին բաժին ընկնող լսարանային մակերեսը կազմում է շուրջ 10,02մ2: Քոլեջում առկա են կարի արտադրության, տեխնոլոգիայի, բուսաբուծության, գինեգործության, բրուտագործության, փայտամշակման, ծրագրավորման, SS, ինժեներատեխնիկական և սարքաշինարարական լաբորատորիաներ, ինչպես նաև նախակրթարանային հատվածներ, լսարաններ, խոհանոց, բուժկետ, գրասենյակ, բաց պատշգամբ, պարասրահ, վերնատուն (հանդիպումների սրահ), հյուրատուն-կացարան, հիդրոպոնիկայի կենտրոն, մեկուսարան և բացօթյա ուսումնական պարապմունքների համար նախատեսված կանաչապատ տարածքներ:

Կրթահամալիրի կողմից օգտագործվել են նկուղային հարկերը, որոնք գտնվում են բարեկարգ վիճակում և կիրառվում են որպես լաբորատորիաներ, միաժամանակ մշտական աշխատանք է տարվում դրանց բարելավման և զարգացման ուղղությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն իր գործունեության ընթացքում հավասարապես օգտվում է կրթահամալիրի բոլոր ռեսուրսներից: Քոլեջի ուսումնական տարածքներն ունեն անսահմանափակ ինտերնետ կապ, անլար համացանցային կապակցում (Wi-Fi): Կրթահամալիրում ուսումնական կենտրոններն ու լաբորատորիաները գտնվում են տարբեր մասնաճյուղերում, որոնք բաց են կրթական համայնքի առջև: ՄՈՒՀ-ն օգտվում է կրթահամալիրի մյուս մասնաշենքերում գործող ուսումնաարտադրական արհեստանոցներից, արվեստանոցներից, լաբորատորիաներից, մասնավորապես՝ Ագարակից, Արատեսի դպրական կենտրոնից, քանդակի դպրոցից, խոհանոցի ուսումնական ծառայությունից, թոնրատնից, մարզադահլիճներից, լողավազանից և Մարմարյա սրահից: Կրթահամալիրում առկա են տարբեր մարզաձևերի իրականացման համար նախատեսված մարզադահլիճներ, մասնավորապես՝ դյուդոի, մարմնամարզման, մենամարտի, սուսերամարտի, թենիսի դահլիճներ, լողավազան, վոլեյբոլի և ֆուտբոլի դաշտ, հեծանիվներ, հրաձգարան, նետաձգարան, Ռոքի ակումբ /Զենիդ բենդ/, հանդիսությունների սրահ, կացարան: Նախատեսում են և աշխատանքեր են իրականացնում նաև անօդաչու թռչող սարքերի լաբորատորիա ստեղծելու ուղղությամբ:

Քոլեջն ունի 13 լսարան, սակայն հարկ է նշել, որ դասընթացներն իրականացվում են նաև կրթահամալիրի տարբեր մասնաշենքերում: Համակարգչային լսարանն ունի 5 համակարգիչ և 20 նոթբուք, որոնք պարբերաբար արդիականացվում են: Ուսանողների ներգրավվածությունը դասերին տեղի է ունենում բացառապես նոթբուքերի օգտագործմամբ: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի երկու քիմիայի, երկու ֆիզիկայի և

կենսաբանության լաբորատորիաներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լաբորատորիաների վերազինումն իրականացվում է ինչպես լաբորատորիաներին տրվող պատվերների շրջանակներում սարքերի ձեռքբերման միջոցով, այնպես էլ նոր սարքերի գնման միջոցով:

Գրադարանն ունի շուրջ 21987 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն, էլեկտրոնային գրքերի թիվը կազմում է 2500: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով է: Գրադարանը թվայնացված է և հասանելի հասարակությանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջը հիմնականում չի օգտագործում գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, քանի որ հիմնականում կազմակերպում է կրթահամալիրում:

Քոլեջն ունի 2 պրոյեկտոր, 6 հեռուստացույց, որից մեկը՝ շարժական: Վերջին տարիների կտրվածքով եղել են տեխնիկական բազայի թարմացում և վերազինում, որոնցից ուշագրավ են օպտիկայի երեք նոր սարքերի, լայն արտադրության համար նախատեսված կարի մեքենայի, լազերային կտրիչի, եռաչափ տպիչի, գինու թորման սարքի ձեռք բերումը, ինչպես նաև գրադարանի համալրումը նոր գրականությամբ և այլն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կրթահամալիրին պատկանող լաբորատորիաներին տրված պատվերների միջոցով քոլեջը համալրվել է գինու շշալցման սարքով, դասասենյակների սեղաններով և աթոռներով, պատուհաններով, օդափոխման համակարգով և մարզասարքերով, ինչպես նաև սեփական ռեսուրսներով արտադրվել են ծաղկամաններ, կյանքի կոչվել ծաղիկների ջրման ավտոմատ համակարգը, անօդաչու թռչող սարքը և այլն: Հարկ է նշել, որ սարքերի և պարագաների արտադրման ընթացքում ձեռք է բերվում միայն հումքը: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջը պարբերաբար իրականացրել է լսարանային ֆոնդի վերանորոգումներ, որոշ բարելավումներ՝ սեփական մարդակային ռեսուրսների և կրթահամալիրի ու հիմնադրամի ֆինասական միջոցներով:

Փորձագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով և պաշտոնական էլեկտրանյին փոստի միջոցով, իսկ հաստատության ներսում՝ Microsoft365-ի mskh.am: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է բլոգային համակարգի (wordpress.com), էլեկտրոնային նամակագրության (https://outlook.office), Teams էլեկտրոնային հարթակների, GoogleDrive, Onedrive կիրառմամբ: Քոլեջում ներդրված է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ: Դասախոսները և ուսնոողներն ունեն իրենց անհատական փոստի հասցեները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Քոլեջում առկա չեն տեսախցիկներ՝ պայմանավորված կրթահամալիրի բաց կրթության քաղաքակությամբ, շենքային պայմանները և լսարանները հարմարեցված են բաց կրթության չափանիշներին. մասնավորապես վարագույրներ և փակ դռներ չկան, ինչպես նաև լսարանները տարանջատված են թափանցիկ ապակիներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 6 ուսանող, որոնց նկատմամբ տարվում են հստակ աշխատանքներ՝ ինտեգրելու կրթական ծրագրերում: Առկա են թեքահարթակներ, որպես ապաստարան հատկացված տարածքը գտնվում է բարվոք վիճակում: Քոլեջի առաջին հարկն ամբողջությամբ հարմարեցված է ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց համար: Քոլեջն ունի բուժկետ, ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են բուժկետի ծառայություններից:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել և հստակ չէ, թե՝ ուսանողների ո՞ր քանակն է ապահովում կրթական ծրագրերի համար ինքնածախսածածկում: Վերջին ուստարում արձանագրվել է ուսման վարձի փոփոխություն:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 77.56 %-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին: Ըստ 2023 թթ. ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների բյուջեի բաշխման տվյալների՝ սարքավորումների և գույքի ձեռք բերման, ծառայությունների ձեռք բերման և պրակտիկաների ուղղությամբ քոլեջի կողմից դրամական հատկացումները կազմել են ՄՈՒՀ-ի բյուջեի 18.53%-ը, կրթաթոշակ՝ 3.9%:

Փորձագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն: 2023 թ. քոլեջի բյուջեի եկամուտների շուրջ 62 %-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 38%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: 2024 թ. քոլեջի բյուջեի եկամուտների շուրջ 55%-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 45%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջը 2023թ-ին կարճաժամկետ դասընթացներ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան չի իրականացրել:

2024թ.-ին քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են բժշկական և անվտանգության ծառայություններից: Ըստ հարցումների՝ ուսանողների 5.8%-ն առարկայական կաբինետների և լաբորատորիաների վիճակը գնահատել է գերազանց, 53.3%-ը՝ լավ, 35.8%-ը՝ բավարար, 5%-ը՝ անբավարար, տեխնիկական հագեցվածության վերաբերյալ արձանագրվել են հետյալ ցուցանիշները՝ շատ հարմարավետ՝ 10,8%, հարմարավետ՝ 12%, գոհացուցիչ՝ 30%, անբավարար՝ 5%: Բուժկետի մատուցած ծառայություններից հարցման մասնակիցներից գոհ են 86,7 %: Դասավանդողների շրջանակում շենքային պայմաններից գոհ են հարցման մասնակիցների շուրջ 41.2%-ը, իսկ բուժկետի մատուցած ծառայություններից գոհ են հարցման բոլոր մասնակիցները: Մարզադահլիճները հասանելի են քոլեջի բոլոր ուսանողներին: Ուսանողներին և աշխատակազմին ըստ անհրաժեշտության հոգեբանական, խորհրդատվական ծառայություններ է մատուցում կրթահամալիրի բազմամասնագիտական թիմի մասնագետը՝ Քոլեջի հոգեբանը: Դասավանդողներն օգտվում են նաև բժշկական ապահովագրության ծրագրից: ՄՈՒՀ-ի աշխատակիցների համար գործում է բժշկական ապահովագրություն: Բոլոր աշխատակիցներն առողջապահական խնդիրների վերհանման, բուժման նպատակով անցնում են տարեկան բուժզննումներ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները իրականացվող հարցումներն և քննարկումները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջն ունի ուսումնական գործընթացն ապահովող բազմազան ռեսուրսներով, ներառյալ լաբորատորիաներ, արհեստանոցներ, մարզադահլիճներ, տեխնիկական սարքավորումներ և այլ ուսումնական ենթակառուցվածքներ, ինչը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների և մասնագիտական կարողությունների զարգացմանը: Ուսանողների ակտիվ մասնակցությունը կրթահամալիրում գործող տարբեր մարզաձևերին կարևոր նշանակություն ունի, քանի որ այն նպաստում է նրանց ֆիզիկական պատրաստվածության, մարզական դաստիարակության և առողջ ապրելակերպի խթանմանը: Ուսումնական տարածքները հագեցած են անհրաժեշտ ռեսուրսներով, ինչն ապահովում է ուսման արդյունավետությունը:

Լսարանների բաց և թափանցիկ կառուցվածքն ապահովում է դասավանդման գործընթացին հասանելիություն օրվա ցանկացած պահի՝ նպաստելով ուսումնական միջավայրի թափանցիկությանը: Ուսանողների անմիջական ներգրավվածությունը գույքի արտադրման, սենյակների համալրման և լաբորատոր սարքավորումների ստեղծման գործընթացներին արժևորվում է, քանի որ այն խթանում է նրանց գործնական հմտությունների, ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացումը:

Կրթահամալիրի կողմից ներդրված գործընթացները, որոնք ուղղված են նոր սարքավորումների ձեռքբերմանը և լաբորատոր սարքերի արտադրությանը, ինչպես նաև ցանցի սպասարկման արդյունավետ կազմակերպմանը, նպաստում են ուսանողների տեխնիկական և կիրառական հմտությունների խորացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ գրադարանում մեծաքանակ գրքերի առկայության փաստը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ թվայնացված և թարգմանված օտարալեզու գրականության ավելացումը կխթանի ուսանողների մասնագիտական զարգացումը:

Ներդրված փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը բարձրացնում է աշխատանքային գործընթացների կազմակերպման արդյունավետությունը, ապահովում է թափանցիկություն և խնայում է ժամանակը:

Քոլեջի կողմից իրականացվող լսարանային պայմանների, տեխնիկական հագեցվածության և ծառայությունների վերաբերյալ հարցումները և քննարկումները կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանք ապահովում են շահակիցների կարիքների վերհանումը և ուսումնական միջավայրի շարունակական բարելավումը:

Քոլեջի տարածքներն ու ենթակառուցվածքները՝ ներառյալ թեքահարթակները, բուժկետը, ապաստարանն ու ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց համար հարմարեցված միջավայրերը, գտնվում են բարվոք վիճակում, ինչը նպաստում է ներառական կրթության ապահովմանը: Հարկ է նշել, որ ուսանողների և դասախոսների հարցումների համաձայն՝ ուսումնական լաբորատորիաների և տեխնիկական հագեցվածության վիճակը բավարար է, սակայն բարելավման կարիք կա: Հստակ չէ, թե ուսանողների որ քանակն է ապահովում կրթական ծրագրերի ինքնաձախսածածկումը, ինչը կարող է խոչընդոտել ռեսուրսների օպտիմալ բաշխմանը: Ուստի փորձագիտական խումբը կարևորում է նման վերլուծություններն ու ֆինասական մուտքերի բազմազանեցման ապահովմանն ուղղված մոդելների գործածումը:

Քոլեջի ֆինանսական կառավարման թափանցիկությունը դրական է գնահատվում, քանի որ բյուջեի բաշխման, ծախսերի և ռեսուրսների օգտագործման վերաբերյալ տրամադրված տվյալները վկայում են հաշվետվողականության մասին: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր կլինի կարճաժամկետ դասընթացների իրականացումը, որոնք կարող էին լրացուցիչ ֆինանսավորման և նոր հմտությունների ձեռքբերման աղբյուր դառնալ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարողացել է ստեղծել անվտանգությունն ապահովող կրթական միջավայր և գնահատում է, որ քոլեջում այս ուղղությամբ աշխատանքները շարունակական են:

Միաժամանակ, փորձագիտական խումբը նկատում է, որ քոլեջը գործնական պարապմունքների և պրակտիկաների իրականացման համար հիմնականում չի օգտագործում գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Արտաքին ռեսուրսների ակտիվ ներգրավումը կարող է նպաստել ուսանողների մասնագիտական պատրաստվածության և շուկայի պահանջներին համապատասխանության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ առկա է բավարար նյութատեխնիկական և ռեսուրսային բազա քոլեջի ՄԿԾ-ների իրականացման համար, ռեսուրսային կարիքների վերհանման համար իրականացվում է ներքին շահակիցների կարիքների գնահատում, ստեղծված է ապահով և անվտանգ ուսումնական միջավայր, քոլեջն ապահովում է ռեսուրսների հասանելիությունը ուսանողների և դասավանդողների համար, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը համապատասխանաում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի հաշվետվողականության կարգի համաձայն՝ ՄՈՒՀ-ում հաշվետվողականությունը տարանջատվում է արտաքին և ներքին մակարդակների: Արտաքին հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ ԿԳՄՄՆ-ին, ինչպես նաև հասրակությանը՝ պաշտոնական կայքէջի, սոցիալական հարթակների և այլ տեղեկատվական միջոցների միջոցով: Ներքին հաշվետվողականությունն իրականացվում է Քոլեջի շրջանակներում, որտեղ դասավանդողները ներկայացնում են ամսական և տարեկան հաշվետվություններ Քոլեջի տնօրենին և մասնախմբերին, իսկ Քոլեջի տնօրենը՝ ամենամյա հաշվետվություն կառավարման խորհրդին և կրթահամալիրի տնօրենին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաշվետվողականության համակարգը չի կրում ընթացակարգային բնույթ. հաշվետվությունները ներկայացվում են ոչ կանոնակարգված ձևով, առանց հստակ փաստաթղթավորման և հաստատված ժամկետների: Օրինակ, լաբորատորիաների պատասխանատուները հաշվետվություն են ներկայացնում կրթահամալիրի տնօրենին, սակայն հաշվետու չեն Քոլեջի տնօրենին: Նույն կերպ, կրթահամալիրի կարիերայի կենտրոնի պատասխանատուն, ով նաև կատարում է Քոլեջի կարիերայի կենտրոնի պատասխանատուի գործառույթներ, հաշվետու չէ Քոլեջի տնօրենին: Քոլեջի տնօրենին հաշվետվություններ չեն ներկայացվում նաև գրասենյակի ղեկավարը և կազմակերպիչը: Հաշվետվությունները չեն կազմվում ըստ հստակ ձևաչափերի՝ հիմնված հարցադրումների և խնդիրների վրա: Բացի այդ, ներկայացված հաշվետվությունները հիմնականում կրում են նկարագրական բնույթ, ընդհանրական են և չեն ենթարկվում վերլուծության՝ ըստ առաջնահերթությունների և հիմնահարցերի:

Դասավանդողների հաշվետվությունների հավաքական տեղեկատվության հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում Քոլեջի գործունեության վերաբերյալ հաշվետվություն՝ կից SWOT վերլուծությամբ, որը քոլեջի գործունեության մասին միակ հաշվետու փաստաթուղթն է: Սակայն, պետք է նշենք, որ Քոլեջի տնօրենի հաշվետվությունները չեն տեղադրվում Կրթահամալիրի կամ Քոլեջի կայքէջերում, հասանելի չեն շահակիցներին:

Քոլեջն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով Facebook, Instagram, LinkedIn սոցիարթակները: ՄՈՒՀ-ի գործունեությունը ակտիվորեն լուսաբանվում է նաև դասավանդողների, ուսանողների բլոգներում, ինչպես նաև YouTube-յան ալիքներում:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի Facebook, Instagram և LinkedIn սոցիալական հարթակներում ուսումնական գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է: Փորձագիտական վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ այդ հարթակներում ներկայացվում են Քոլեջի կրթական գործընթացները, ուսումնական նախագծերը, ինչպես նաև ուսանողների ներքոլեջային և արտաքոլեջային ակտիվությունը: Հրապարակվող նյութերը հիմնականում ներառում են տեղեկատվություն մասնագիտական կարողությունների զարգացման հնարավորությունների, ինչպես նաև մշակութային և կրթական միջոցառումների մասին, որոնց շարքում են համերգները, ցուցահանդեսները և ստուգատեսերը: Քոլեջը սոցիալական հարթակներում ներկայացնում է իր բազմապրոֆիլ կրթական ծրագրերը:

Քոլեջում տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունը ապահովվում են պաշտոնական կայքէջի՝ college.mskh.am միջոցով: Քոլեջի կայքէջի բաժինները մեծամասամբ կազմակերպված են, սակայն որոշակի տեղեկատվություն դժվար է գտնել: Օրինակ, կրթական

ծրագրերը, նախագծերի նկարագրություններն ու գնահատման գործիքները, հաշվետվությունները համակարգված չեն ըստ ենթաբաժինների: Քոլեջին վերաբերող տեղեկատվությունը հիմնականում շահակիցներին հասանելի է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի՝ mskh.am պաշտոնական կայքէջի միջոցով:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ հետադարձ կապի ապահովմանը նպաստող մեխանիզմներ: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը կարևորում է հասարակության հետ հետադարձ կապի ապահովումն ու շահակիցների հետ համագործակցության արդյունավետության բարձրացումը՝ օգտագործելով պաշտոնական կայքէջերի (arhestagorc.wordpress.com և college.mskh.am) առցանց հնարավորությունները: Քոլեջի կայքէջի այցելուները կարող են իրենց հուզող հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար ուղղել նամակներ և ստանալ պատասխաններ: ՄՈՒՀ-ի դասավանդողների բլոգներն ու Քոլեջի Facebook, Instagram և LinkedIn սոցիալական հարթակները նույնպես ծառայում են հետադարձ կապի հաստատմանը, որտեղ օգտատերերը կարող են մեկնաբանություններ թողնել և հաղորդագրություններ ուղարկել: Շահակիցների շրջանում իրականացվող առցանց հարցումները ևս հանդիսանում են հետադարձ կապի միջոց: Լրացուցիչ հաղորդակցության միջոցներ են ՄՈՒՀ-ի հեռախոսակապն ու էլփոստը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի Facebook, Instagram սոցիալական հարթակներին ուղղված հարցադրումները հիմնականում վերաբերում են ընդունելության գործընթացին, որոնք ստանում են արագ արձագանք:

ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում և իրականացվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանն ուղղված միջոցառումներ: Քոլեջն առանձնակի ուշադրություն է դարձնում ազգային արժեքների պահպանմանը և հանրային թափանցիկ ուսուցման կազմակերպմանը: Այս համատեքստում ուսանողները հանրակրթական հաստատությունների շրջանավարտների և դիմորդների համար կազմակերպում են խորհրդատվական այցեր, հանդիպումներ, «Բաց դռների օր» միջոցառումներ: Նրանք նաև ակտիվորեն ներգրավվում են «Սովորող-սովորեցնող» նախագծում, որի շրջանակում, համաձայն դրա կազմակերպման կարգի, ուսանողները հնարավորություն են ստանում փոխանցելու իրենց ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Այս գործընթացը կարող է իրականացվել ինչպես ուսանողների առաջարկով և համակարգմամբ, այնպես էլ՝ դասավանդողի նախաձեռնությամբ: «Սովորող-սովորեցնող» նախագծի մասին տեղեկատվությունը հրապարակվում է Քոլեջի կայքում՝ առնվազն երկու շաբաթ առաջ: Նախագծի շրջանակում Քոլեջի ուսանողները, ինչպես նաև դասավանդողները, կարող են կազմակերպել որևէ մոդուլի շրջանակում բաց դասեր կամ ուսանողների կողմից գիտելիքի փոխանցում կրտսեր դպրոցի աշակերտներին:

Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման գործընթացում կարևոր նշանակություն ունեն կամավորական աշխատանքները, ինչպիսիք են՝ ծերերի խնամքը, փափուկ հմտությունների փոխանցումը և այլ նախաձեռնություններ: Քոլեջի դասավանդողների և ուսանողների նախաձեռնությամբ մեծ թվով ուսանողներ մասնակցում են տարբեր միջոցառումների, ցուցահանդես-վաճառքների, փառատոների, ինչպես նաև կազմակերպում և իրականացնում են բնապահպանական նախագծեր ու ճամփորդություններ: Քոլեջը տրամադրում է նաև սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ աջակցելով հոգեբանական աջակցության կարիք ունեցող ուսանողներին և դասավանդողներին:

Քոլեջի Երաժշտության կենտրոնը ուսանողների և դասավանդողների մասնակցությամբ յուրաքանչյուր ուրբաթ կազմակերպում է ուսումնական ժամերգություններ Սուրբ Երրորդություն եկեղեցում, որտեղ ուսանողները կատարում են շարականներ:

Քոլեջում օրը սկսվում է առավոտյան ընդհանուր պարապմունքով՝ ազգային պարով, որին մասնակցում են կրթահամալիրի սովորողները, ուսանողները և դասավանդողները:

Կրթահամալիրի օրացույցի համաձայն՝ ամեն ուրբաթ ծեսերի բաց լաբորատորիան կազմակերպում է համերգ-միջոցառում, որին մասնակցում են ոչ միայն Կրթահամալիրի և Քոլեջի ուսանողներն ու դասավանդողները, այլև հասարակության լայն շրջանակներ:

Քոլեջի Վերնատանը պարբերաբար կազմակերպվում են գրքերի, հոդվածների քննարկումներ, գրական ընթերցումներ: Հանդիպումների ընթացքում բանախոս-հյուրերի շարքում ընդգրկվում են ուսանողներ, դասավանդողներ, հրավիրյալ մտավորականներ և հանրային գործիչներ: Այս միջոցառումները լուսաբա:

Միաժամանակ, պետք է նշել, որ Կրթահամալիրի լաբորատորիաները հասանելի են հասարակության լայն շրջանակի համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում սահմանված է հաշվետվողականության երկաստիճան համակարգ, որը ներառում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հաշվետվությունների տրամադրում շահակիցներին, որն ապահովում է Քոլեջի գործունեության հանրային պատասխանատվության բարձրացումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ տնօրենի հաշվետվությունները չեն ներառում վերլուծական հիմք և չեն ներկայացվում ըստ տարիների, ինչի հետևանքով բացակայում է տվյալների համադրման և համեմատական վերլուծության հնարավորությունը: Հաշվետվությունները հիմնականում նկարագրական են, չեն ընդգրկում առաջնահերթությունները և հիմնահարցերը, իսկ որոշ կառուցվածքային միավորներ դուրս են մնում հաշվետվողականության ընդհանուր շրջանակից: Սա կարող է սահմանափակել ձեռքբերումների և թերակատարումների տեսանելիությունը, ինչպես նաև դժվարացնել կատարողականի ցուցիչների գնահատումը, ինչը կարող է ազդել ռազմավարական որոշումների հիմնավորվածության վրա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը ապահովում է տեղեկատվության թափանցիկություն և հասանելիություն հասարակությանը՝ տարբեր թվային հարթակների միջոցով, ներառյալ պաշտոնական կայքէջը, սոցիալական մեդիան և բլոգերային հարթակները, որն ապահովում է շահակիցների իրազեկվածության բարձրացումը, կրթական ծրագրերի հանրայնացումը և Քոլեջի գործունեության նկատմամբ վստահության ամրապնդումը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ Քոլեջը սոցիալական հարթակներում ներկայացնում է կրթական գործընթացների բազմազանությունը, ուսումնական նախագծերը, մշակութային և մասնագիտական միջոցառումները, ինչպես նաև ուսանողների ներգրավվածությունը կրթական ծրագրերում, որն ապահովում է Քոլեջի հանրային ճանաչելիության բարձրացումը, մեծացնում շահակիցների ներգրավվածությունը կրթական կյանքում և աջակցում ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում ձևավորված է հասարակության հետ հետադարձ կապի բազմազան և կայուն համակարգ, որը ներառում է պաշտոնական կայքէջեր, սոցիալական մեդիայի հարթակներ, բլոգերային հարթակներ, առցանց հարցումներ և էլեկտրոնային հաղորդակցություն: Այս մեխանիզմները ոչ միայն ապահովում են ուսումնական գործընթացների թափանցիկությունը, այլև նպաստում են շահակիցների ներգրավվածության բարձրացմանը և Քոլեջի գործունեության վերաբերյալ հետադարձ կապի արդյունավետության ամրապնդմանը: Բացի այդ, սոցիալական հարթակները ծառայում են որպես ոչ միայն տեղեկատվության տարածման միջոց, այլև շահակիցների հետ երկկողմանի հաղորդակցման հարթակ, որտեղ, մասնավորապես, ընդունելության գործընթացին վերաբերող հարցերին տրվում են արագ արձագանքներ, որն ապահովում է Քոլեջի հանրային ճանաչելիության բարձրացումը, մեծացնում շահակիցների ներգրավվածությունը կրթական կյանքում և աջակցում ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը:

Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջի պաշտոնական կայքէջում որոշ կարևոր տեղեկատվություն՝ ուսումնական ծրագրեր, նախագծերի նկարագրություններ, գնահատման գործիքներ և հաշվետվություններ, հասանելի չեն կենտրոնացված ձևով, ինչը կարող է սահմանափակել օգտատերերի արագ և արդյունավետ

տեղեկատվություն ստանալու հնարավորությունը: Կայքէջի կառուցվածքի բարելավումը և տեղեկատվության ավելի հստակ դասակարգումը կարող են նպաստել շահակիցների համար տեղեկատվության հասանելիության բարձրացմանը և Քոլեջի հաշվետվողականության ուժեղացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը գիտակցում է իր հասարակական պատասխանատվությունը և կարևորում է հանրությանն ուղղված կրթական, մշակութային և սոցիալական նախաձեռնությունները, ինչը դրսևորվում է հեղինակային կրթական ծրագրերի իրականացման, հանրային բաց ուսուցման կազմակերպման, սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման, կամավորական աշխատանքների և բնապահպանական նախագծերի միջոցով: Այս ամենն ապահովում է հասարակության տարբեր խմբերի կրթական կարիքների բավարարումը և Քոլեջի՝ որպես հանրային գիտելիքի և մշակույթի տարածման կենտրոնի դերի ամրապնդումը:

Քոլեջի իրականացրած մշակութային և կրթական միջոցառումները, ներառյալ «Բաց դռների» օրերը, խորհրդատվական հանդիպումները, ազգային ծեսերին ու արարողություններին մասնակցությունը, գրական ընթերցումներն ու երաժշտական միջոցառումները, նպաստում են ազգային մշակութային ժառանգության պահպանմանը և հանրայնացմանը, միաժամանակ ձևավորելով ուսանողների սոցիալական գիտակցվածություն, նախաձեռնողականություն և քննադատական մտածողություն:

Քոլեջի ուսանողների ակտիվ ներգրավվածությունը կամավորական նախաձեռնություններում, ինչպիսիք են ծերերի խնամքը, կրթական և մասնագիտական հմտությունների փոխանցումը, բնապահպանական ծրագրերը և համայնքային աջակցության նախագծերը, վկայում է նրա՝ որպես հասարակական արժեքների վրա հիմնված կրթական հաստատության դերի կարևորության մասին:

Միաժամանակ, Քոլեջի կողմից լաբորատորիաների և ուսումնական ռեսուրսների հասանելիությունը հասարակության համար ապահովում է ոչ միայն կրթական հնարավորությունների ընդլայնումը, այլև հաստատության դերի ուժեղացումը հանրային կյանքում, ինչն ապահովում է Քոլեջի ճանաչելիության բարձրացմանը և շահակիցների հետ համագործակցության ամրապնդմանը:

Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջի հաջողված հասարակական նախաձեռնությունները կարող են լայն տարածում ստանալ և դառնալ կրթական ու հասարակական լավ փորձի օրինակ այլ հաստատությունների համար, ինչը թույլ կտա ոչ միայն ընդլայնել Քոլեջի սոցիալական ազդեցության շրջանակը, այլև խթանել կրթության և հասարակության միջև ավելի արդյունավետ համագործակցություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջում ձևավորված է հաշվետվողականության որոշակի համակարգ, գործում են շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման կայուն մեխանիզմներ, և Քոլեջը ակտիվորեն օգտագործում է իր պաշտոնական կայքէջն ու սոցիալական հարթակները՝ ապահովելով գործունեության թափանցիկությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը համապատասխանում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:
Փաստեր

Քոլեջը 2021-2027 թթ.-ի ՌԾ-ում որպես նպատակ սահմանել է Քոլեջի գործունեության միջազգայնացման, միջազգային կրթական գործընթացներին ներգրավվածության, գործընկերային փոխգործակցության խթանում և զարգացում: Նպատակին հասնելու համար որպես խնդիրներ դիտարկվել են. 1. Ձեռք բերել միջազգային գործընկերային կապեր: 2. Զարգացնել քոլեջի համագործակցությունը միջազգային շահակիցների հետ: 3. Խթանել ուսանողների և դասավանդողների մասնակցությունը միջազգային կրթական գործընթացներում:

Այնուամենայնիվ, ի տարբերություն ՌԾ-ի 2021-2027 թթ.-ի ՌԾ-ի պլան-ժամանակացույցում նախատեսված է 2 խնդիր. 1. Զարգացնել միջազգային շահակիցների հետ քոլեջի համագործակցությունը միջազգային կրթական գործընթացներում: 2. Զարգացնել համագործակցությունը ՀՀ-ում և արտերկրում տարբեր քոլեջների, կազմակերպությունների հետ:

Փորձագիտական այցից պարզվեց, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներ ՄՈՒՀ-ում իրականացնում է ՈԱԿ հանձնախմբի երկու անդամ: Միաժամանակ պետք է փաստել, որ քոլեջը հանդիսանում է Կրթահամալիրի անբաժանելի բաղադրիչ, ուստի Կրթահամալիրի բոլոր համագործակցություններն էլ ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է քոլեջի զարգացման վրա: Կրթահամալիրի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման հարցերով զբաղվում են կրթահամալիրի գրասենյակը, եվրոպական և տարածաշրջանային օտար լեզուների ուսուցման լաբորատորիան, քոլեջի մասնագիտական զարգացման կենտրոնը: Ընդ որում քոլեջը նախատեսում է նաև ստեղծել Կարիերայի կենտրոն, որը արտաքին կապերի զարգացմանն ուղղված գործառույթներ էլ է ստանձնելու: Հատկապես կարևորում են այդ կենտրոնի դերակատարությունը՝ ուղղված միջազգային ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների հետ համագործակցային կապեր ձևավորելու տեսանկյունից:

Հաստատությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 5 տեղական և միջազգային գործընկերների հետ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուների հետ համագործակցության շրջանակը չէր սահմանփակվում պայմանագրերով և հուշագրերով, այսինքն այդ շրջանակն առավել լայն էր՝ կրելով ոչ ֆորմալ բնույթ: ՄՈՒՀ-ն ունի գործատու գործընկերներ ոչ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է պրակտիկաներ: Մասնավորապես՝ «Նախադպրոցական կրթություն», «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» և այլն: Քոլեջի ամենախոշոր գործատու-գործընկերներից է հենց Կրթահամալիրը:

ՄՈՒՀ-ն ունի որոշակի փորձ նաև միջազգայնացման գործընթացում և ակտիվ քայլեր է ձեռնարկում «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Դեռևս «Էրազմուս +»-ի շրջանակում ծրագիրը նախնական փուլում է, և աշխատակիցներից մեկը այցով գտնվում է Շվեդիայում: Այս ծրագիրը համակարգվում են Շվեդիայի և Էստոնիայի գործընկերների կողմից:

Քոլեջը ակտիվ գործունեություն է ծավալում՝ հյուրընկալելով օտարերկրյա առաջավոր մասնագետների (այդ թվում նաև՝ գերմանացի մանկավարժ Հանս Քրիստոֆ Պոխան, Ֆրանսիացի հոգեբան և արտ թերապևտ Դարիա Ժումելը), ովքեր վարում են դասախոսություններ, դասընթացներ, սեմինարներ, բաց դասեր ուսանողների և դասավանդողների համար: Փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողներն ու դասախոսները կարևորում են այդ գործընթացները իրենց մասնագիտական և լրացուցիչ կարողությունների ու հմտությունների զարգացման տեսանկյունից: Փորձագիտական այցից պարզվեց, որ օտարերկրյա մասնագետների հրավիրելու հարցում նախաձեռնողականություն կարող են դրսևորել նաև դասավանդողները:

2023 թ.-ին «Հայաստանի Հմտություններ (WorldSkills Armenia) 2023» մրցույթին մասնակցել են նաև քոլեջի ուսանողները, իսկ մրցույթի եզրափակիչ փուլը կազմակերպել է քոլեջը՝ կրթահամալիրում:

2023-2024 ուստարում քոլեջի ուսանողները մասնակցել են Հայկական վիրտուալ համալսարանի արհեստական բանականության դասընթացներին, ինչը նախնական պայմանավորվածությամբ է իրականացվել: 2024 թ.-ի մարտին քոլեջը մասնակցել է կրթական փոխանակումների մոսկովյան մշակութային բիզնես կենտրոնում՝ ուսանողները և դասավանդողները ներկայացրել են կրթահամալիրի գործունեությունը, հեղինակային կրթական ծրագիրը, ծեսով ուսուցումը:

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ «Գագարին» նախագծով իրականացված հանդիպումներին մասնակցություն են ունեցել նաև քոլեջի դասավանդողներն ու ուսանողները: Այս ծրագրի շրջանակներում նաև պրակտիկաներ են իրականացվել ուսանողների համար:

Հայաստանի ԿԳՄՍ և Վրաստանի ԿԳ նախարարների գրավոր հավանությամբ՝ համաձայնագրով, 2009 թվականից կրթահամալիրում իրականացվում է «Վրաստան-Հայաստան հանրակրթական կամուրջներ» կրթական փոխանակման ծրագիրը: Այս ծրագրի շրջանակում քոլեջի դասավանդողներն ու ուսանողները ևս հնարավորություն են ունենում լինելու Վրաստանի կրթական հաստատություններում, միաժամանակ փոխադարձ այցելություններ են լինում: Այս ծրագրի նպատակն է դասավանդողների և ուսանողների փորձի փոխանակումն ու կարողությունների զարգացումը:

Քոլեջի դասավանդողները նաև մասնակցել են միջազգային ծրագրերի (EPRC հետազոտական ընկերություն, Education for All Georgia կառույց, My Right- Empowers people with disabilities ծրագիր, Sida դրամաշնորհային կազմակերպություն, Fryshuset, Alma, My Right- Empowers people with disabilities, Fabrica):

Հարկ է փաստել, որ թե՛ օտարերկրա առաջատար մասնագետների հետ համագործակցությունների, թե՛ այլ ծրագրերի շրջանակներում համագործակցությունների պարագայում Կրթահամալիրը, այդ թվում նաև քոլեջը, հեղինակային ծրագրերով յուրահատուկ մոտեցում են գործածում: Վերջինս մեծ հետաքրքրություն է ներկայացնում և համագործակցությունների հաստատման ու շարունակականության հիմք է հանդիսանում: Սակայն հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, մի շարք համագործակցություններ փաստաթղթավորված հիմքեր չունեն հուշագրերի, պայմանագրերի կամ այն ձևերով:

Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների շուրջ 22 %-ը (100 %-ը), վարչական աշխատակիցների՝ 0 % (100 %-ը), ուսանողների շուրջ 50 % (շուրջ 76 %) տիրապետում են անգլերենի (ռուսերեն), միաժամանակ Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ Իսպաներեն մասնագիտությամբ սովորող ուսանողների շուրջ 80 % տիրապետում է իսպաներենի: Անհրաժեշտ է փաստել, որ ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով անգլերենի դասընթացներ դասավանդողների համար: Դասընթացները 2023-2024 ուստարում կազմակերպվել են ըստ համապատասխան ժամանակացույցի, որին մասնակցել են 12 աշխատակիցներ՝ ըստ A1 և A2 մակարդակների: Դասընթացները անցկացրել է քոլեջի օտար լեզվի մասնագետը:

Փորձագիտական այցից պարզվեց, որ դասավանդողները կարևորում են այս դասընթացները և դրանց մասնակցության հնարավորությունը, քանի որ քոլեջը խրախուսում է դասավանդողների կողմից միջազգային փորձի ուսումնասիրումն ու կիրառումը:

Փորձագիտական այցից պարզվեց, որ սովորող-սովորեցնող նախագծային ծրագրերի շրջանակում ուսանողները ևս օտար լեզուների դասընթացներ են իրականացնում, որոնց ներգրավվում են և՛ դասախոսները, և՛ ուսանողները: Այս պարագայում տարանջատվում են համապատասխան մակարդակների խմբեր: Պարզվեց նաև, որ դասավանդողները կարևորում են միջազգային փորձի ուսումնասիրումը և այս տեսանկյունից լեզվամիմացության զարգացման կարիք են տեսնում:

Կրթահամալիրի «Դպիր» ամսագիրն ունի օտարալեզու էջեր, որոնք սպասարկում են օտար լեզվի դասավանդողները: Մասնավորաբար, դասավանդողները թարգմանում են մանկավարժական մեթոդական հոդվածները տարբեր լեզուներով: Միջազգային գործընկերներին հասանելի են օտար լեզվի մասնագետների ուսումնական բլոգները: Քոլեջը կայքում ունի որոշ օտարալեզու հրապարակումներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը 2021-2027 թթ.-ի ՌԾ-ում նշել է արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված նպատակ, խնդիրներ և որոշ գործողություններ՝ ուղղված դրանց իրականացմանը: Սակայն փորձագիտական խումբը նշում է, որ առանձնացված գործողությունները ամբողջությամբ չեն հանգեցնում նպատակի իրագործմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջը այս ուղղությամբ իրականացնում է ավելին, քան ՌԾ-ով սահմանված գործողություններն են, ինչը թույլ է տալիս մեծացնել միջազգային գործընկերության շրջանակները և ապահովել միջազգայնացման գործընթացների զարգացումը: Ուստի, ՌԾ-ով սահմանված նպատակը հիմնականում հասանելի է դառնում:

Անդրադառնալով ՌԾ-ով սահմանված 3-րդ խնդրին, փորձագիտական խումբը նշում է, որ, չնայած փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսներն ու ուսանողները մոտիվացված են մասնակցելու միջազգային կրթական գործընթացներում, սակայն գտնում է, որ կարևոր կլինի համապատասխան բաղադրիչի սահմանումն ըստ Կրթահամալիրի դասավանդողների կազմի առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ և/կամ այլ փաստաթղթի (այդ թվում նաև՝ միջազգային փորձի ուսումնասիրման): Սա կարող է նպաստել ըստ ՌԾ նպատակների գործընթացների առավել արդյունավետ իրականացմանը:

Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում, խումբը նշում է, որ, Կրթահամալիրի յուրօրինակ և հեղինակային ծրագրերով ուսուցումը մեծ հետաքրքրություն առաջացնում միջազգային գործընկերների շրջանում և հիմք են դառնում համագործակցության համար: Այս տեսանկյունից կարևոր կլինի, որ քոլեջը դիտարկի նաև միջազգային ուսանողների (այդ թվում՝ Սփյուռքից) ներգրավման հնարավորությունը՝ ձեռնարկելով այս ուղղությամբ ուսումնասիրություններ: Քանի որ սա կարևոր ուղի կլինի նաև ֆինանսական մուտքերի ավելացման և միջազգայնացման ուղղությամբ: Այս տեսանկյունից խիստ կարևոր կլինեն քոլեջի՝ միջազգային հարթակում տեսանելիության բարձրացման ուղղությամբ աշխատանքները: Վերջինս կնպաստի նաև համագործակցային դաշտն ընդլայնելու, ինչը զարգացման կարևոր հիմք է: Չնայած քոլեջն արդեն որոշակի հրապարակային օտարալեզու նյութեր ունի, ինչը դրական է, սակայն վերոնշյալ նպատակի տեսանկյունից դեռևս բավարար չէ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի՝ միջազգային ծրագրերում ներգրավվածության և արտաքին կապերի հաստատման ուղղությամբ զբաղվում են համապատասխան կոմպետենտությամբ աշխատակիցներ: Սա հանգեցրել է մի շարք արդյունավետ ծրագրերի և համագործակցությունների իրագործման: Այնուամենայնիվ, չնայած քոլեջի նախատեսմանը, քոլեջի Կարիերայի կենտրոնը դեռևս չի գործարկվել, ինչը սահմանափակում է արտաքին կապերի առավել արդյունավետ զարգացումը: Մինչդեռ ըստ համապատասխան պատասխանատուների գործառույթների հստակ բաշխումը կարող է այս գործընթացն առավել արդյունավետ դարձնել: Սա իր հերթին կարող է նպաստել գործընթացների առավել ինստիտուցիոնալացման՝ համագործակցությունների շարունակականությունը երաշխավորող փաստաթղթավորման ապահովման տեսանկյունից: Դրա հետ մեկտեղ փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում և կրթահամալիրում ձևավորված այն դրական, վստահելի ու գրավիչ միջավայրը, ինչը համագործակցությունների շարունակականության ապահովման չփաստաթղթավորված յուրօրինակ երաշխիք է՝ հեղինակությունից բխող:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի՝ մի շարք ծրագրերի շրջանակում արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև օտարերկրյա և տեղի առաջատար մասնագետների ներգրավմամբ տարբեր միջոցառումների իրականացումը: Այս ամենը

նպաստում է ուսանողների և դասախոսների կարողությունների և հմտությունների շարունակական զարգացմանը: Միաժամանակ կարևոր է, որ քոլեջը եղած գործընթացները բավարար չի համարում և այդ ուղղությամբ զարգացումներ ապահովելուն ուղղված ակտիվ քայլեր է ձեռնարկում, այդ թվում՝ «Էրազմուս +» ծրագրի շրջանակում: Սա կարևոր է և կարող է նպաստել թե դասախոսների և ուսանողների կարողությունների շարունակական զարգացմանը, այնպես էլ համագործակցության նոր տիրույթներ ձևավորել՝ ուղղված ռեսուրսների համալրմանն ու զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ կրթահամալիրն ունի որոշակի համագործակցային շրջանակ գործատուների հետ, թերևս այդ շրջանակը ևս չի սահմանափակվում փաստաթղթավորված համագործակցություններով: Այս համագործակցությունները նպաստում են նաև ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը: Ուսանողների պրակտիկաների կազմակերպման տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է Կրթահամալիրի բաղադրիչ հանդիսանալու հանգամանքով պայմանավորված Կրթահամալիրի մյուս կառույցների հետ սերտ համագործակցությունը, ինչը հանգեցրել է նույնիսկ ուսանողների համար աշխատանքի վրա հենված ուսուցման կազմակերպման: Սա թերևս հնարավորություն է աշխատանքի վրա հիմնված ուսուցման առավել հեռանկարային մոդելի՝ դուալ համակարգի կայացմանը: Ինչի հնարավորությունները քոլեջն ունի: Այնուամենայնիվ, զարգացման առավել ընդլայնված հնարավորությունների ստեղծման տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է գործատուների հետ համագործակցության շրջանակի ընդլայնումը և համագործակցությունների առավել սերտացումը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը դիտարկի այլ քոլեջների հետ համագործակցությունների հաստատման հնարավորությունները:

Փորձագիտական խումբը նաև դրական է համարում քոլեջի աշխատանքները՝ ուղղված աշխատակիցների լեզվամիմացության զարգացմանը, և գտնում է, որ նման միջոցառումների շարունակականությունը կարևոր է համապատասխան արդյունք ապահովելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջն ունի արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ սահմանված ռազմավարական նպատակներ, այս ուղղությամբ ակտիվ գործունեություն է ծավալում՝ ուղղված համագործակցության շրջանակների ընդլայնմանը և միջազգային ծրագրերում ներգրավմանը, քոլեջում ձևավորված է այնպիսի միջավայր, առկա են մի շարք միջազգային կառույցների հետ աշխատելու հաջողված փորձեր, կնքված և գործող որոշ հուշագրեր ու պայմանագրեր, հնարավորություն է ստեղծել՝ բարելավելու ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակը, փորձագիտական խումբը գտնում է, որ Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջը համապատասխանում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Մ. Սեբաստացի կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման գործընթացը մեկնարկել է 2022 թվականից՝ փաստաթղթերի մշակմամբ, իսկ 2023 թվականին ստեղծվել է որակի ապահովման աշխատանքային խումբ, որը բաղկացած է 5 դասախոսներից և գործում է տնօրենի ղեկավարությամբ: Խմբի անդամների գործառույթները

բաշխված են ըստ ոլորտների. մասնավորապես, մեկ անդամ պատասխանատու է ուսումնական ծրագրերի և ՊԿՉ-ների համապատասխանության համար, երկու անդամներ զբաղվում են քոլեջի միջազգայնացման գործընթացներով, խմբի կողմից վերահսկվում են դասավանդման նյութերի համապատասխանությունը ծրագրերին, դասախոսների դասավանդման արդյունավետությունը և այլն: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում դեռևս առկա չէ առանձին հաստիք որակի ապահովման պատասխանատուի համար, թեև քոլեջը տեսնում է հաստիքի համալրման կարիք[6]:

Գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջում մշակվել են որոշակի փաստաթղթեր: Քոլեջում մշակվել է «Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգ», որտեղ սահմանվել է կենտրոնի գործունեության նպատակը, խնդիրները, գործառույթները, տեղեկատվության հավաքագրման մեխանիզմները, աշխատակիցների գործառույթների շրջանակը, թեև դեռևս կենտրոնը չի գործում:

2023 թվականին քոլեջում մշակվել և հաստատվել են «Մասնագիտական կրթական ծրագրերի որակի ապահովման կենտրոնի աշխատակարգը», «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի «Ուսանողների մասնագիտական, ֆիզիկական և հոգեբանական կարիքների վերհանման, գնահատման և աջակցման կարգը», «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգերը», «Դասավանդողների կազմի առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը»: Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք ամբողջական չեն և հստակ սահմանված չեն որակի ապահովման ոլորտների նպատակները, խնդիրները և պատասխանատուների գործառույթների շրջանակը:

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ որակի ապահովման տարեկան գործողությունների պլան առկա չէ: Այնուամենայնիվ, Քոլեջի կողմից ներկայացված «Բարելավման պլաններ» (2022-2024թթ. գործողությունների պլան-ժամանակացույց) փաստաթղթում ներառված են նաև որակի ապահովման գործողություններ: Դրանց թվում են ՈԱԿ-ի փաստաթղթերի մշակումը, դասավանդողների և ուսանողների շրջանում կրթության որակի, գնահատման, հետազոտության և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ հարցումների և վերլուծությունների իրականացումը: 2024 թվականը սահմանվել է որպես վերջնաժամկետ մի շարք գործողությունների համար, այդ թվում՝ Որակի ապահովման կենտրոնի ստեղծման, դրա փաստաթղթերի մշակման ու հրապարակման, ինչպես նաև հարցումների ու վերլուծությունների կազմակերպման համար: Աշխատանքների ընթացիկ արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ կենտրոնի ստեղծման գործընթացը դեռևս շարունակվում է, սակայն դրա կանոնակարգն արդեն հաստատվել է: Փաստաթղթում ներկայացված են գործողությունների ցանկը, պատասխանատու անձինք, աշխատանքի կատարման ժամանակացույցը և նախատեսված արդյունքները: Սակայն, գործողությունների կատարման գործիքակազմը, անհրաժեշտ ռեսուրսները և դրանց արդյունավետության գնահատման ցուցիչները դեռևս հստակ սահմանված չեն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջում տեղեկատվության հիմնական աղբյուրը շահակիցների՝ ուսանողների, դասախոսների և շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումներն են: Սակայն հարցաշարերի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք հիմնականում ընդգրկում են ընդհանրական հարցեր, իսկ հարցումներին մասնակցող շահակիցների թվաքանակը քիչ է: Հարցումների արդյունքները քննարկվում են Քոլեջի ղեկավար կազմի և մանկավարժական խորհրդի հետ, ինչպես նաև հրապարակվում են Քոլեջի կայքում: Բացի այդ, հարցումների հիման վրա որոշակիորեն վերհանվում են շահակիցների կրթական կարիքները, և որոշ դեպքերում դրանք ստանում են համապատասխան լուծումներ: Օրինակ, ուսանողների կողմից ռեսուրսների վերաբերյալ անցկացված հարցման արդյունքում պարզվել է, որ Քոլեջը քարտեզների համալրման կարիք ունի, ինչը ներկայացվել է ղեկավարությանը և

[6] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

լուծվել: Նմանապես, դասավանդողների ակադեմիական կարիքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մեծամասնությունը չի տիրապետում անգլերեն լեզվին, ինչի հետևանքով Քոլեջում պլանավորվել է անգլերենի խմբակի ստեղծմանգործընթաց: Չնայած առկա դեպքերին, պետք է նշել, որ շահակիցների կարիքների ուսումնասիրության և դրանց լուծման գործընթացները դեռևս չունեն ինստիտուցիոնալ և հստակ կանոնակարգված բնույթ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ Քոլեջը կազմակերպում է ֆոկուս-նպատակային խմբերի հետ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ հանդիպումներ, որոնցում ներգրավվում են թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցները: Այս հանդիպումների ընթացքում քննարկվում են ուսումնական գործընթացին, ինչպես նաև արտալսարանային միջոցառումներին առնչվող հարցեր, շահակիցների կարծիքները հավաքագրելու և կրթական միջավայրի բարելավման նպատակով:

Միևնույն ժամանակ, պետք է ընդգծել, որ Քոլեջի որակի ապահովման համակարգը դեռ նոր է ձևավորվում, և գործընթացները գտնվում են նախնական փուլում:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարող ենք նշել, որ քոլեջի որակի ապահովման պատասխանատուները՝ տնօրենի ղեկավարությամբ կազմակերպել և համակարգել են ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երբեմն պահանջվող քանակական և որակական տվյալները լիարժեքորեն ներառված չեն եղել փաստաթղթում և փորձագիտական խումբը անհրաժեշտություն է ունեցել տվյալների համալրման՝ վերլուծություններ իրականացնելու համար, միաժամանակ թույլ է արտահայտված վերլուծական մասը: Բացի այդ, փորձագիտական այցից պարզվեց, որ ինքնավերլուծության փաստաթղթին լավատեղյակ չէր շահակիցների լայն շրջանակ, իսկ գործատուների և ներքին շահակիցների կարիքները մասամբ են արտացոլված դրանում7:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը քայլեր է ձեռնարկել որակի ապահովման համակարգի ներդրման համար, որի արդյունքում Քոլեջում կապահովվի ուսումնական գործընթացների համակարգված և տվյալահենք կառավարումը, շահակիցների կարծիքների հավաքագրման և վերլուծության արդյունավետ մեխանիզմների ձևավորումը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացման համար հատկանշական է մշակել գործողությունների հստակ պլան-ժամանակացույց, ինչը հնարավորություն կտա հետևել աշխատանքների կատարմանը և ապահովել համակարգված զարգացում: Բացի այդ, տեղական և միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրումը կնպաստի որակի մշակույթի տարածմանը Քոլեջում և կօգնի խուսափել պլանավորման հնարավոր բացթողումներից:

Դրական է, որ Քոլեջը տեսնում է որակի ապահովման պատասխանատուի հաստիքի անհրաժեշտությունը: Այս հաստիքի ստեղծումը կնպաստի որակի ապահովման գործընթացների առավել համակարգված կառավարմանը, պատասխանատվության հստակ բաշխմանը, որակի վերահսկման մեխանիզմների արդյունավետ կիրառմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ որակի ապահովման կենտրոնի ձևավորման քայլերից մեկը եղել է աշխատանքային խմբի ստեղծումը, որն իրականացնում է որոշակի գործառույթներ որակի ապահովման տեսանկյունից: Սա որոշակիորեն ապահովում է գործընթացների իրականացում:

Միևնույն ժամանակ, խումբը գտնում է, որ որակի ապահովման աշխատանքային խմբի ձևավորումը կարող է հետագայում աջակցել որակի ապահովման պատասխանատուին իր գործառույթների կատարման հարցում: Այնուամենայնիվ, ներկայիս կառուցվածքում առկա է գործառույթների բաժանման խնդիր, քանի որ խմբի կազմում ներգրավված մարդիկ իրականացնում են նաև արտաքին կապերին առնչվող գործողություններ և դեռևս հստակ չեն

[7] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

որակի ապահովման ուղղությամբ անելիքները: Այս իրավիճակը կարող է նվազեցնել որակի ապահովման ուղղակի գործընթացներին տրամադրվող ուշադրությունը և ազդել դրանց արդյունավետության վրա: Բացի այդ, առկա է շահերի բախման խնդիր, քանի որ դասավանդողները և տնօրենը փաստացի գնահատում են սեփական գործունեությունը, ինչը կարող է ազդել գնահատման օբյեկտիվության վրա: Ուստի, նպատակահարմար կլինի վերանայել գործառույթների բաշխման սկզբունքները՝ ապահովելով ավելի հստակ դերաբաշխում և անկախ գնահատման մեխանիզմներ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում իրականացվում են հարցումներ և ապահովվում է դրանց արդյունքների թափանցիկությունը հասարակության համար: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ հարցումների անցկացումն, կարիքների վերհանումը և դրանց արդյունքում լուծումների տրամադրումը պետք է իրականացվի կանոնակարգված և ինստիտուցիոնալ բնույթով: Սա կնպաստի տվյալահենք որոշումների կայացմանը, կրթական ծրագրերի բարելավմանն ու ուսումնական միջավայրի շարունակական զարգացմանը: Համակարգված մոտեցման բացակայությունը կարող է սահմանափակել հարցումների արդյունավետությունն ու դրանց ազդեցությունը կրթական միջավայրի բարելավման վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ տվյալահենք որոշումների կայացումը հիմնված լինի ոչ միայն հավաքագրված տվյալների հրապարակման, այլև դրանց խորքային վերլուծության վրա: Սա թույլ կտա ոչ միայն փաստագրել իրավիճակը, այլև հայտնաբերել խնդիրները, բացահայտել կրթական գործընթացների բարելավման ուղիները և մշակել հիմնավորված ռազմավարություններ, որոնք ուղղված կլինեն ուսումնական միջավայրի շարունակական զարգացմանը:

Խումբը գտնում է, որ հարցաթերթերի վերանայումը պետք է լինի պլանային և իրականացվի ոչ միայն անհրաժեշտության դեպքում, այլ հստակ մշակված մեթոդաբանությամբ: Կանոնակարգված վերանայման մեխանիզմի ներդրումը կապահովի, որ հարցումները լիարժեքորեն արտացոլեն շահակիցների կարիքները և նպաստեն կրթական ծրագրերի ու միջավայրի բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ, չնայած որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթային հենքի առկայությանը, որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղղությամբ քոլեջում իրականացվող քայլերը համակարգված չեն, որակի ապահովման գործընթացներում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը գրեթե չի կիրառվում, ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում պասիվ է, ՈԱ գործընթացերի իրականացման ուղղությամբ առկա է մարդկային ռեսուրսների պակաս, փորձագիտական խումբը գտնում է, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջը չի համապատասխանում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Փորձագիտական խմբի ղեկավար
Արմենուհի Սարգսյան

Ապրիլի 10, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Արմենուհի Սարգսյան՝** 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ.-ին եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018-2023 թթ.-ին՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն: Մի շարք գիտական նախագծերում հանդիսացել և հանդիսանում է ավագ գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ.-ին դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակներում: 2018-2023 թթ.-ին ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և 70-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:
2. **Մարինա Փոթիկյան՝** 2003թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կիբեռնետիկայի դեպարտամենտի «Կառավարումը և տեղեկատվությունը տեխնիկական համակարգերում» մասնագիտությունը: Շարունակել է ուսումը նույն համալսարանի Կիբեռնետիկայի դեպարտամենտի «Ավտոմատացում և կառավարում» մասնագիտությամբ, ստացել մագիստրոսի աստիճան: 2012 թվականին ձևակերպվել է հայցորդ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսամաթեմատիկական մեթոդներ» ամբիոնում՝ «Տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում» մասնագիտությամբ: 2018 թվականին պաշտպանել է ատենախոսությունը «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ և ստացել տնտեսագիտության թեկնածուի աստիճան: 2005-2009 թթ աշխատել է Հայաստանի պետական ագրարային համալսարանում՝ որպես օպերատոր, 2009 -2017 թթ.՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ինֆորմատիկայի և մաթ. մեթոդների ամբիոնում՝ որպես ասիստենտ: 2017-2022թթ. նույն համալսարանում՝ որպես դասախոս: 2020-2022թթ. աշխատել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համասարանի ինֆորմատիկայի և դրա դասավանդման ամբիոնում՝ որպես ասիստենտ: 2022-2023թթ. աշխատել է ՀՀ ԱԻ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ որպես դասախոս: 2020թ.-ից առ այսօր աշխատում է Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի մեխատրոնիկայի ամբիոնում՝ որպես դասախոս: 2023թ. -ից առ այսօր աշխատում է ՀՀ ՆԳ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ որպես դոցենտ:
3. **Քանաքարա Հայրապետյանը՝** 2003-2008 թվականներին սովորել է Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում՝ ստանալով «Պատմություն» մասնագիտություն: 2015 թվականին դարձել է հայցորդ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում, իսկ 2024 թվականին պաշտպանել է ատենախոսությունը նույն ինստիտուտում՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 2011 թվականից աշխատում է Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնում՝ որպես լաբորանտ, իսկ նույն թվականի սեպտեմբերից մինչ օրս դասախոսում է հասարակական գիտությունների ամբիոնում: 2013 թվականից դասավանդում է որպես

ասիստենտ։ 2020 թվականի սեպտեմբերից Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնում աշխատել է որպես մասնագետ, 2021 թվականի հունիսի 2-ից դարձել է նույն բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 2023 թվականից մինչ օրս զբաղեցնում է Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի վարիչի պաշտոնը։

4. **Ամալյա Ստեփանյան՝** 2023 թ.-ից սովորում է Հայաստանում եվրոպական համալսարանի մարքեթինգ և կառավարում մասնագիտության 2- րդ կուրսում։ 2024թ.-ին մասնակցել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	17.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Քոլեջի տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:50	12:30	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների (10-12 ներկայացուցիչ) հետ	13:50	14:40	50 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:50	15:40	50 րոպե
7.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	15:50	16:40	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:00	70 րոպե

N.	18.12.2024 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում մասնախմբի ղեկավարների հետ			09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			11:40	12:30	50 րոպե
4.	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	12:40	13:30	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:40	14:30	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», « Նախադպրոցական կրթություն», «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ			14:40	15:30	50 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության կրթական ծրագրերի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	15:40	16:30	50 րոպե
8.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Կարիերայի կենտրոնի պատասխանատու, Պրակտիկայի վարիչ,			16:40	17:50	70 րոպե

	Գրադարանավար, Հաշվապահ, Կադրերի բաժնի վարիչ, Արխիվավար, Մեթոդիստ, Լաբորանտների, Արհեստանոցի վարիչների) ղեկավարների հետ			
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	18:30	30 րոպե

N.	19.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	10:20	11:20	60 րոպե
3.	Բաց հանդիպում	11:30	12:10	40 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:20	13:00	40 րոպե
5.	Դասալսումներ	13:10	13:40	30 րոպե
6.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:50	14:50	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:00	17:30	150 րոպե
8.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ստերաբաժանումների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ (վերջին 5 տարիների)	2
2.	2021-2027 թթ.-ի ՌԾ	2
3.	Քոլեջի ղեկավարի հաշվետվություններ (վերջին 1 տարիների)	2
4.	Վերջին 3 տարիների ֆին. հաշվետվություններ	2
5.	Կրթահամալիրի կանոնադրություն	2
6.	Քոլեջի կանոնադրություն	2
7.	Ֆինանսների տնօրինման քաղաքականություն	2
8.	Կրթության տեսչական մարմնի ստուգում	2
9.	Ներքին կարգապահական կանոններ	2
10.	Մանկավարժական աշխատողների խրախուսման կարգ, քաղաքականությունը և ընթացակարգեր	2
11.	Աշխատողի նկատմամբ կարգապահական տույժի կիրառման կարգ	2
12.	Դասավանդողների կազմի առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը	2
13.	Դասավանդողի, աշխատակցի պաշտոնական հրահանգ	2
14.	Մանկավարժական աշխատողի բարեվարքության կանոններ	2
15.	«Սեբաստացիներ» հիմնադրամ	2
16.	Մանկավարժական խորհրդի կանոնակարգ	2
17.	2021-2023 տարիների SWOT վերլուծություններ	2
18.	Աշխատաշուկայի վերլուծություններ	3
19.	Մասնագիտական կրթական ծրագրի մշտադիտարկման և վերանայման և քաղաքականություն	3
20.	Պրակտիկաների օրագրերի օրինակներ	3
21.	Սովորող-սովորեցնող նախագծերի, կլոր սեղան-հանդիպումների, բանավեճ-քննարկումների, ինտերակտիվ դասընթացների, անհատական, խմբային նախագծերի, հետազոտական աշխատանքների, դիպլոմային նախագծերի օրինակներ, թեմաներ և ժամանակացույցեր	3
22.	Վարպետության դասերի, արտագնա դասերի ցուցակ, ժամանակացույց և մասնակցության տվյալներ	3
23.	Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգ	5
24.	Դասախոսների կատարելագործմանը նպաստող միջոցառումների ժամանակացույց, ցանկ, մասնակցության ցուցանիշներ	5
25.	Դասախոսների կողմից տպագրված հոդվածներ	5
26.	Դասավանդողների գործընկերային գնահատման թերթիկներ, ձևանմուշներ	5
27.	Դասավանդողների, ուսումնաօժանդակ կազմի գործառույթների շրջանակ կամ հաստատված կանոնակարգ	5
28.	Վերապատրաստումների ցանկ՝ ըստ ժամանակացույցի	5
29.	Կլոր սեղան-քննարկումների արձանագրություններ	5
30.	Դասավանդողների կարիքների վերհանմանը միտված հացումներ, վերլուծություններ	6
31.	Հիմք, որը մատնանշում է աշխատավարձերի բարձրացումը և հավելավճարների տրամադրման մեխանիզմները	7
32.	Տեղեկատվության և փաստաշրջանառության կառավարման կանոնակարգ	8

33.	Համագործակցությունների պայմանագրեր և հուշագրեր	9
34.	Վերջին 5 տարիներին քոլեջի կողմից հյուրընկալված գործընկերներ, դասախոսությունների, դասընթացների, սեմինարների ու բաց դասերի թեմաներ, քոլեջի ուսանողների մասնակցության ցուցանիշներ	9
35.	Իրականացվող հարցումների վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Առարկայական կաբինետներ
- Մասնագիտական լաբորատորիաներ
- Գրադարան
- Ընթերցասրահ
- Համակարգչային լսարաններ
- Բուժկետ
- Հանդիսությունների դահլիճ
- Մարզադահլիճ
- Արխիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈւ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈւԽ - ուսանողական խորհուրդ

ՈւՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ